Հասակների մէջ էլ կայ տարբերութիւն վարակումների վերաբերմամբ: Արզանդային կեանքի ժամանակ սաղմը ենթարկուում է մի քանի հիւանդութիւնների, որոնց սերմերը, խոյնը, նաեւ անցնում է պլաստենդի նրան (սաղմին) շրջապատող մօր արեան հետ կապ ունեցող թաղանթներից. սրանք են մանուկանդ սիֆիլիսը, ծաղիկը, բացառապէս տուբերկուլօզը կամ տիֆը:

Նորածին մանուկը վարակիչ հիւանդութիւններից շատերին ներկայացնում է մի բաւական մեծ ընդիմադրութիւն. ծաղիկի պատաստումը չէ ներդրում, շատ բացառիկ են զանազան տենդեր, մանուկանդ ժամատենդը եւ դիֆտերիաը: Սակայն այս երեւոյթը շատ չպէտք է չափազանցել. որովհետեւ նորածինը շատ հեշտութիւնով է վարակուում օձեկախտով (կարմիր քամի, рожа), որը առհասարակ տեղաւորւում է նրա պորտի

վերայ, եւ որ համարեա միշտ մահացուցիչ է  
Մանաւանդ երկրորդ երեխայութեան  
ժամանակ են յաճախ լինում վարակիչ հի-  
ւանդութիւններ, Քանի հասակը առաջ  
դնում, այնքան էլ նւագում է վարակիչ հի-  
ւանդութիւնների յաճախակի պատահելը, ծե-  
րերի մօտ նկատուում են միայն միզափամ-  
փուշտի եւ թռքերի բորբոքումներ:

Սեւի ազդեցութիւնը պակաս դարմանալի  
է, Նկատւած է, որ կինը վարակումների  
տեւելի երկար ժամանակ է լինում ենթակայ,  
քան թէ տղամարդը, Զանաղան տենդեր,  
մանաւանդ ծաղիկը, որ քսան տարեկան  
տղամարդկանց շատ սակաւ է պատահում,  
շատ յաճախ են պատահում 25—30 տարե-  
կան կանանց:

Մի բան, որ կանանց հիւանդութիւննե-  
րին տալիս է առանձնայատուկ մի բնաւորու-  
թիւն, դա նրանց ծննդական կեանքի դանա-  
ղան դարձօններն են: Ամսականները կարող  
են վարակումների պատճառ դառնալ, Մի  
անգամ պատահում է ամսականի ժամանակ  
կարմիր քամի—բայց այս դէպքում պէտք է  
յիշել, որ այս քամին լաւ եւք է ունենում  
եւ տեւում է հազիւ մի երկու երեք օր թէ-  
եւ ամսէամիս երեւալով կրկնում է տարե-  
ների ընթացքում, Պատահել են դէպքեր, ո՞ր  
կանայք այս հիւանդութեան (рожа) կրկնու-  
թիւնը ունեցել են 50—60 անգամ:

Յղիութիւնը նմանապէս կարող է կերպա-



բանափոխել զանազան վարակումներ, երբեմն նրա ազդեցութեան տակ հիւանդութիւնը դառնում է վնասաբեր, երբեմն նա զանգաղեցնում է եւ մինչեւ անգամ կանգնեցնում նրանց ընթացքը: Շատ յաճախ թոքախոր կարծես կանգ է առնում, երեւոյթը փոխւում է եւ թոքախորը ստանում է խիստ արագ ընթացք:

Առողջապահութեան կանոններից ամեն մի շեղումն առաջ է բերում վարակումներ, Այստեղ պէտք է յիշել այն վնասաբեր, գէպերը, որ առաջացնում են մեծ բազմութեան մի տեղ հաւաքելը: Պատնէշաբանակներում վարակումները յաճախակի են ստատահում եւ միշտ միեւնոյն հիւանդութիւններն են լինում բանակների եւ զօրաբաժինների պատուհասները՝ լնտադարութիւն (scorbutus), փորհարինք, մաշկի տիֆ, վաճակիչ հիւանդութիւնների յաճախութիւնը զանազան է լինում զանազան պատերազմների ժամանակ:

Ղրիմի պատերազմի ժամանակ 309,000 զինուորներից 75000-ը բռնւած էին վարակիչ հիւանդութիւններով, նոյն երեւոյթը նկատուում է եւ բանտերում: Մի քանի տարի սրանից առաջ հիւանդանոցների մէջ յաճախ պատահում էին խիստ համաճարակներ, որ առողջացողների համար մի կատարեալ պատուհաս էր: Սակայն երբ հիւանդ-

ների աւանձնացնելը կանոն դարձաւ, այս սարսափելի երեւոյթը նւազեց.

Կան հիւանդութիւններ, որ նպաստում են վարակումներ. շարքի հիւանդութիւնը աջողեցնում է իտարախ առաջացնող միկրօօրների ածուկը, նմանապէս եւ թորախտի միկրօօրներինը, թորքերի բորբոքումը. կարմիր քամին (րօշա), յօդացաւը նախապատրաստում են նոյն հիւանդութիւնների նոր եւ նոր բռնւածքներ:

Այն պատճառների շարքում, որոնք միջամտում են յանկարծ անհատի դոյութիւնը նւազեցնելու համար պէտք է յիշել քաղցը եւ յոգնածութիւնը:

Քաղցի ազդեցութիւնը ամենքին յայտնի է: Աւելի հետաքրքիր է ուժից վեք աշխատելու դերը, որ ակներեւ է շատ քաղմաթիւ օրինակներից: Զօրքերը երբ յոգնածութեան են լինում դրւած, ահադին քանակութեամբ զանազան վարակումների են ենթարկւում սկսած ժամատեհից (տիֆ) մինչեւ տուբերկուլօզը:

Արտաքին պատճառներ նմանապէս կարող են նպաստել վարակիչ հիւանդութիւնների դարդանալուն:

Եթէ ներշնչւում են պինդ մասնիկներ, բացառապէս կոպչակաւ, երկաթեայ թոզ, որանից պատահում են թորքերի մէջ փոքրիկ վէրքեր, որ մասնաւորապէս նպաստաւոր են թորախտի ածմանը:



Բնական պատճառների շարքում դաս-  
ւում է ցուրտի եւ սառնութեան ազդեցութիւնը:  
Չամազան քիմրական նիւթեր նւազեցնում  
են թաղանթների, մաշկի դիմադրութեան  
յատկութիւնը այսպիսով նպաստում են միկ-  
րօքների աճելուն:

Թոյները, երկարատեւ գործածութեան  
ժամանակ, իրանք չեն անմըջապէս վնասում,  
այլ նրանք նւազեցնելով թաղանթների դի-  
մադրութեան յատկութիւնը հնարաւորու-  
թիւն են տալիս մօտազայ օրգանների մէջ  
գտնւող միկրօքներին մանելու ազատ եւ  
լայն ասպարիզի մէջ, ուր եւ սկսում են  
անխնայ եւ անպատիժ իրանց վնասաբեր եւ  
կործանիչ գործունէութիւնը, որի հետեւանքը  
եւ լինում է այդպիսի շինւածքի քայքայումը,  
ապա եւ մահը:

Այսպէս պէտք է հասկանալ եւ ալիօ-  
հօլի (սպիրտի) ազդեցութիւնը լեարդի վե-  
րայ: Արբեցողները մեծ մասամբ ոչնչանում  
են լեարդի հիւանդութիւնից, լեարդի երկա-  
րատեւ բորբոքումից (որը բժշկութեան մէջ  
կրում է ցերրօզ անունը), թաղանթները շնոր-  
հիւ ալիօհօլի երկարատեւ ազդեցութեան այն-  
քան են քայքայւում, որ աղիքների միկրօքները  
այնուհետեւ ազատ կարողանում են պաշա-  
րել լեարդը անհամար բիւրաւոր լեզէօններով  
ու մի քանի տարիների ընթացքում բոլո-  
րովին յեղաշրջում են լեարդի բնական գոր-  
ծունէութիւնը առաջանում է նախ մարսո-

դուժեան խանգարումներ, փորկապութիւն, սրաի եւ երիկամունքի հիւանդութիւններ, ջրդողութիւն եւ մահ:

Բազմատեսակ են վարակիչ հիւանդութիւնները, շատ մեծ է նրանց պատճառների թիւը, բայց մի միջոցով միայն կարելի է ազատ մնալ հիւանդութիւններից եւ աւսողջ մնալ, եւ այդ մշակ միջոցն է — աւսողջաստան (գիգիէնա): Իսկ սրա ամենամեծ պատգամն է մաքրութիւն՝ — մաքրութիւն օգի, մաքրութիւն հողի, մաքրութիւն սնունդի, մաքրութիւն բնակարանի, մաքրութիւն հագուստի, մաքրութիւն կենցաղի . . .

Մաքրութիւն, մաքրութիւն . . . երանի նրան, ով կենքունի այս փառքի խօսքի մեծ նշանակութիւնը եւ աշխարհափրկիչ կարեւորութիւնը:

### ԲՃ. Արամելս Եփեսոս.

#### ՄՏԱԽՈՐ ՏՈԳՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ՝)

Գարսցախոն աւսողջաստան հարցերի շարքում նշանաւոր տեղ է բռնում մտաւոր յոգնածութիւնը:

Մտաւոր յոգնածութիւնը խանգարում է

•) Տես նաև «Նուէր հայ վարժապետին»:



երեխայի զարգացումը եւ թուլացնում նրա մտքի աշխուժութիւնը: Նա դանդաղեցնում է սեռահան զարգացման գործողութիւնը եւ խանգարում է ոսկրային գրուծեան կանոնաւոր աճումը. այսինքն այլանդակում է ոսկրներն ու կոճքը, ծուռւմ է սղնաշարը. ուստի բարձրանում են անհաւասար կերպով եւ աջ անջակը զգալի կերպով դուրս է ցլուում, երեխան դառնում է սասլատաւոր:

Յսպնածութիւնը շատ տարօրինակ կերպով ազդում է նեարդային գրուծեան վրա. նա երբեմն արտայայտւում է ինչ որ ծանրութեամբ, որ երեխան զգում է գլխի մէջ. երբեմն առանձին դիտացաւով, երբեմն եւ քթից արիւն է հոսում. աշակերտը դալկանում է, ծուլանում եւ այլ եւս անկարող է դառնում աշխատելու:

Գոյան հեռեւում է սողութեան նման մի բան, յետոյ քնէածութիւն դիւրի պատյաներով եւ յաճախ նկատւում է նեարդային զրգւումն, որտի մտերբը ցաւ է զգացւում, անդամների վերջաւորութիւնները սառում եւ դէմքը գունատւում է: Ախորժակի բացակայութիւնը առաջ է բերում սակաւարիւնութիւն, իսկ սմանք էլ ազիքների մէջ կապ են ստանում:

Յսպնածութիւնից թուլացած երեխաները բռնւում են թորախտով, որովհետեւ նրանց վրա մահացու կերպով ազդում է սեռահան

փչանցած օդը: Ասկաւարիւնութիւնը, նեար-  
դայնութիւնը այս բոլորի հետ տնային ան-  
կանոն հօգատարութիւնը, անկանոն կերա-  
կուրն ու սնունդը, օդի ու լոյսի բացակա-  
յութիւնը, հոգեկան ամբողջ դժուրութիւնը  
(պոխիսիկա) եւ այլն, այս բոլորը տուրեր-  
կուլեօզի եւ նրա տարածման համար նա-  
խապատրաստական գործօններ են:

Յոգնածութեան ազդեցութիւնից հաւա-  
տարապէս վնասուում են եւ զգայարանները  
(զգացողութեան գործարանները): Աշակերտ-  
ներէից սմանք կարճատեսութիւն են ստա-  
նում, միւսների ախանջների մէջ լսում է  
չարուսակ խշշոց: Վերջապէս, քիթի խողովի  
առանձին կողմութիւնը, որ կախումն ունի  
աւշատար անօթների խանդարումից, որ կոչ-  
ւում է *aprosezia* (առեւսիղների կամ գեղ-  
ձերի մեծանալը քիթի եւ քիմրի խողովում)  
երեխային անընդունակ է դարձնում ու-  
շաղիք լինելու:

Յաճախ ծուլութիւնը նոյնպէս ծառա-  
յում է իբրեւ ամբողջ օրգանիզմի հիւան-  
դութեան մի նշան՝ այն օրգանիզմի, որ մի-  
եւնոյն ժամանակ պէտք է դարդանայ եւ դի-  
մանայ ուշադրութեան դժւարութիւններին:

Մեր դպրոցներում պէտք է ի նկատի  
ունենալ յոգնածութեան վերաբերեալ այս  
նշանաւոր հարցերը, պէտք է բոլորովին լուրջ  
եւ մտածւած կերպով վերաբերել. ի դէպ



չպէսք է մուանալ. որ տանը տւած պատ-  
Քաստեղաւ դասերը անօգուտ են:

Մի խօսքով անհրաժեշտ է աչքի անց-  
կացնել եւ թերեւս կրճատել ուսման ծրա-  
գիւղերը. սրպէս զի թոյլ եւ սկար երեխա-  
ներ չկրթել: Այս ամենալաւ միջոցը կլինի.  
որով աշակերտների հիւանդութիւնների եւ  
մահերի առաջը կառնուի. մանաւանդ եթէ  
դպրոցներում սորա վրա աւելացւի եւ հաթ-  
կաւոր բժշկական հսկողութիւն առ հասա-  
րակ աշակերտների մտաւոր ծանրաբեռնու-  
թիւնների դէմ կռուելու համար: Շատ բան  
է կախուած ուսուցչի տաղանդից, շնորհից,  
գիտութիւնից եւ դէպի այս սուրբ գործն  
ունեցած սիրուց:

Գնւ վարժուհի եւ ուսուցիչ ես—սուրբ է  
այս կոչումը. սիրում ես այս սուրբ գործը,  
սիրում ես երեխաներին, սիրում ես թո՛՛ս-  
ղովուբղը. կարող ես, դնա՞ դպրոց, ինչպէս  
գիտութեան տաճար, ինչպէս մի սրբավայր,  
եզեր խհական ուսուցիչ եւ թո՛՛սղովուբղի  
բարեկամ:

ՌՃ. Ա. Բաւղարդեան

ԵՂՈՒՆԳ ԿՐԾԵԼ ԵՒ ՁԵՌՌԻ ԹՈՐԻՆԵԼ, \*):

Ուսուցիչը եւ ծնողները պարտաւոր են երեխաների դանազան վատ սովորութիւնները ուղղել եւ նրանցից առաջացած այլատերումը արդիւելլ:

D-ր Bérillon Պարիզի եւ Գաւառի դըպրոցներում երեխաների վրա մի քննութիւն է կատարել եւ հաստատել, որ երեխաների քառորդից աւելին իրենց եղբայնները ուտելու — կրճեւու վատ սովորութիւնը ունէին:

Գոհտ. Բերիլոն ասում է, որ միլիօնաւոր միկրոքներ մեր բերանն են մտնում, երբ որ ամեն անգամ եղբայն հնք կրճում, որովհետեւ մեր մատերը այս ու այն աւարկաների հետ շօշափւելով, անհամար միկրոքներ են վերցնում, միկրոքներ, որոնք դանազան հիւանդութիւնների պատճառ են դառնում:

Սրանից հետեւում է, որ կտրելու է արդիւելլ այս մոլութեան շարունակութիւնը, որից երեխան իր առողջութեան վնասակար նիւթեր է ձնում եւ որը դատարանում, երեխայի ուշադրութիւնն է իրանգարում, եղբայն դը կրճեւու դբաղւած լինելով, դատին ուշադրութիւն չի դարձնում:

\*) Տես դոկ. Կ. Փաշայեանի «Գըրոցական առողջապահութիւն» վերնագրով հետաքրքրաշարժ եւ մեծահասարակութեանը, որ յանձնարարութեամբ ենք հայ ուսուցիչներ, ի ու դատարանների յատուկ ուշադրութեամբ.



Dr. Delvaille և Breueq ծխակահան դըստ-  
բոցներում այդ մասին մի քննութիւն կա-  
տարելով, նշանակել են հետեւեալ թւերը.  
տղաների մէջ 16,5 0/0 եզունգ կրծոդներ  
(onychophage) եւ աղջիկների մէջ 14,2 0/0  
եւսի բարձր նախակրթարաններում 13—16  
տարեկան տղաների մէջ 11,5 0/0: Մանկա-  
պարտէզներում 2 1/2 էջ 6 տարեկան երկ-  
սեւ երեխաների մէջ 6,2 0/0, ընդհանուր  
1104 աշակերտներից 152-ը, այսինքն 13,80/0,  
եղունգ կրծոդներ: Այս 152-էջ 99-ը շատ  
թեթեւ կերպով էին կրծում եղունգները,  
եւսի 53-ը շատ խոր կերպով:

Այս դստբոցների տեսուչները եւ տես-  
չուհիները դարմայեւ են, որ աշակերտներին  
մէջ այդքան եղունգ կրծոդներ են դանւել,  
երեւոք այդ մասին երբէք էլ ուշադրութիւն  
չեն դարձրել:

Ծնողներից շատերն էլ նոյնպէս չեն նը-  
կատում իրենց երեխաների այս վատ սովո-  
րութիւնը, մինչեւ անգամ մի ընտանիքի ծո-  
ցում սլատահում են երկու երեխաներ, ո-  
րոնք այդ սովորութեան ենթակայ են բայց  
ծնողների ուշադրութիւնը չեն գրաւել:

Վերոյիշեալ բժիշկները ցանկացել են  
եմանալ թէ այս եղունգ կրծելու սովորու-  
թիւնը ազդում է երեխայի բնաւորութեան,  
եմացականութեան եւ աշխատութեան վրա:

Այս ազդեցութիւնը շատ թեթեւ են դը-

տել, այսու հանդերձ նկատել են զանազան ջղայնութիւններ, շնաւորութեան որոշ անկասկածիւն եւ մի քանիսի մօտ մի քիչ ծուլութիւն:

Եղունգ կրծելու սովորութիւնից երեխաներին փրկելու համար Dr. Derecq հետեւեալ միջոցն է առաջարկում.

Ամեն օր եղունգները խոր կերպով կը արել եւ եղունգից դուրս մ'ուսցած մասի ծայրի վրա 5 0/0 բաղադրութեամբ nitrate d'argent-ի (գծողաքար) հեղուկից քսել մի վրձինով: Այդ միջոցով մասի ծայրը սեւանում է. եւ երբ որ ամեն օր երեխան ցոյց է տալիս իր մատները բժշկին, ուսուցչին կամ ծնոցներին, նրանց վրա կարելի է նըշմարել մտամների սպիտակ հետքերը—կէտեր—եւ դրանից գուշակել, որ երեխան եղունգները կրծել է. այդ դէպքում պատուէրները պէտք է կրկնել եւ նոյն դեղի քսուելը ամեն օր շարունակել, մինչեւ որ երեխան այդ սովորութիւնը թողնէ: Երեխան ամօթ եւ խորշում է զգում այսպէս ներկեած մատները բերան տանելու, նա ծածկում է իր շքապատուանից, դասընկերներից եւ ուսուցիչներից:

Dr. Sarrumone մի սերիշ միջոց է խորհել, երեխաներին բամբակէ սպիտակ ձեռնոցներ կն հագցնում. մինչեւ որ այդ սովոր-



տութիւնից բժշկուում են: Աւաւտ եւ երեկոյ ձեռնոցները փոխում են:

Քանի որ խօսել ենք եղունգ կրծելու վտանգի մասին, արժէ նաեւ խօսել ձեռք թորելոյ բարեւելու վնասակար սովորութեան մասին:

Չեւքը մարդու ամենաշատ գործածած մէկ անդամը լինելով եւ ամեն բանի հետ շփում ունենալով, աւելի շուտ եւ աւելի շատ է կեղտոտուում եւ իր վրա հաւարում վնասակար միկրոօրգանքներ: Չեւքի անդամակազմական կազմաւածքն էլ այդ բանին շատ է նպաստում, նրա վրա անհամար աղօսներ եւ գծեր կան եւ միշտ խոնաւ է մնում, այս հանգամանքները միկրոօրգանքների այնտեղ հաւաքման նպաստում են:

Չեւքը շարունակ շփման մէջ է լինում թաշկինակի, բերնի, ձեռնոցների, գլխարկի, ռոնամանի, քթի, մազերի եւ այլնի հետ, հետեւաբար միշտ կեղտոտուում եւ վտանգաւոր միկրոօրգանքով բեռնաւորուում:

Ահա այսպիսի ձեռքերով ձեռք թորելու սովորութիւնը պատճառ է դառնում փոխանցելու դանազան տարափոխիկ հիւանդութիւնների, Բարեւելու այս ձեւի սովորութիւնը որքան էլ որ մեր դարի քաղաքակրթութեան մի պահանջը լինի, սակայն առողջապահութիւնը դատաստարտում է այդ սովորութիւնը:

Հետեւաբար երեխաներից սկսած պէտք է

արդիւել բարեւելու այդ սովորութիւնը եւ նրա աեղ ընդունել գինուրական բարեւը, ո՛ր ընդհանրացած է Տաճկաստանու՛մ, թէ եւ մի քիչ աւելի տարբեր ձեւով—քէմլննան:

Հիւանդութեանց փոխանցման տեսակէտից ամենավնասակար ձեռքերն են, իրենց վնասակարութեան աստիճանի կարգով հետեւեալները—քժիշկների եւ վիրաբոյժների, մանկաբարձուհիների, անասնաբոյժների, սափրիչների, մաւղածառների, երշիկ վաճառողների, կաշեգործների եւ այլնի ձեռքերը: Արքիւն կարգը դալիս են քիմիագէտները եւ դեղագործները, որոնք դրեթէ մըշտ հականերխիչ եւ միկրոբասպան դեղերի հետ են շփուում:

Հասարակութիւնը պէտք է դրայ ձեռք թո՛թելու վտանգները եւ հեռանայ այդ սովորութիւնից. ինչպէս խորշում ենք ձեռք տալ բորոտներին, նոյնպէս խորշելու ենք ձեռք տալ բուշորին:

Պէտք է միշտ յիշել նորօրինակ սա առածը, թէ ձեռքը՝ մարդկային մաքմնի բոլոր մասերից ամենանւագ մաքուր եղած մասն է:

Պ. ԱԼԿ. Կ. Փառայեան

---



---

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

---

(Քաղաւածիներ եւ քարգնացուքիւններ  
արատահմանեան քերթերից եւ գրեթեց)

Հ Ա Յ Ե Ր Ը .

Հայեր .

Ձեզի համար աղաղակելու բոսլէն չէ,  
այլ գործելու :

Ուրիշներու քաջալերական խօսքերը չեն,  
որոնք ձեզ կուտի սկստի խրախուսեն ձեր դա-  
զան հարստահարիչներու դէմ :

Ձեր վշտերը, ձեր տառանջանքները, ձեր  
երկար մարտիրոսաբանութիւնը հերթը են :

Ժողովուրդ մը, որ չի յուզւել իր սրա-  
խողխող եղբայրներու լացուկոծին, որ չը-  
նդվզի ամեն օր, իր սպանիչներուն դէմ,  
որ չըգիտէ ոչ պաշտպանել, ոչ իր սպանւած  
հայրերուն, կիներուն, ու տղաքներուն վրէժը  
լուծել, որ ուրիշներու օգնութեան եւ մի-  
ջամտութեան վրայ յոյս կըդնէ, որ չունի  
կնքնազատահոլութիւն իր սրտոտութեան, իր  
դատին մէջ եւ որոնցմէ ոմանք—միլիօնատէ-  
րերը—աւելի սէր եւ դպայուն սիրտ ունին  
երեսց փողին համար, քան իրենց սեւօր եղ-

բայքներու կեանքին. ժողովուրդ մը. կրօնմեքքէք ազատ չըպիտի ըլլայ, ղի ազատութիւնը չեն մուրար. այլ կառնեն, ուրիշներէ չեն խնդրիր, այլ կուեկոյ ձեռք կրբերեն:

Լացարցունքները չեն, որոնք ազատութեան ծառը ծաղկեցուցին, այլ արիւնը:

Ազատ ըլլալ ուզող ժողովուրդը թող կազմակերպուի, դաւադրէ, շարժի, պայքարի ստրկութենէ ախորժող մարդն է որ կաղերսէ, կուլայ, կաղաչէ:

Սկզբունքի մը, դադափարի մը համար մեռնող մէկ մարդու հանդիւնը շատ աւելի հզօրազդեցիկ է, քան դարու մը մէջ ամբողջ ժողովրդի մը սղբ ու կոծը:

Կը հիանան խիզախներուն վրայ, կարհամարհեն վատերը: Վերջիններուն համար փանօք:

Ճշունձի դէմ սուստամբուութիւնը իրաւունք մըն է:

Չեր թշնամիներէն սպասեցէք միայն ստրկութիւն, թշւառութիւն, թուրումուր, տանջանք եւ աւերում:

Լիովին բնաջնջումի դատապարտուած ժողովուրդ մը իր յուսահատ դիւցադնութեան մէջ պէտք է ղնէ միայն յոյսը:

Մի սպասէք ուրեմն որ այս կեղտոտ ուճիրը, որ սկսած է արդէն, ազջամուղջին մէջ կատարուի:

Եթէ դուք մեծ պատերազմի մը, մեծ յեղափոխութեան մէջ զուհէիք ձեր 300,000





**Մկրտիչ Աւետիսեանի**

(տես էջ. 207)

«Էդիտ»

1907 թ.





խողխողած եղբայրները, դուք ազատ կըլ-  
լայիք:

Ժողովուրդ մը անտրտիժ չեն սպաննիր,  
բայց այն պարագային, երբ այդ ժողո-  
վուրդը վեղբ կերկնցնէ դահիճին:

Եթէ դիտէ, կուզէ ինքզինքը պաշտպա-  
նել, նոյն իսկ իւր եղունգներով ու ակռան-  
ներով, չի յաղթւիր ան, չի նւաճւիր, չի  
քնջւիր, չի կորսւիր:

Եւրոպական միջամտութեան վրայ յոյս  
դնել յիմարութիւն է: Անոնք ալ այնքան  
ոճրագործ են, որքան անամօթ Աքդիւլ Հա-  
միդը, զոր ձգեցին եւ պիտի ձգեն որ արիւնի  
մէջ տապալակի ան: Անոնցմէ մէկը, Ֆրան-  
սան, ոտնակոխ անելով իւր բոլոր անցած  
փառքը, սպառապինեց նաւատորմիդ մը, ոչ  
թէ ճնշած ժողովուրդ մը փրկազատելու,  
այլ փողի անարգ խնդրի մը համար: Այս ձեզի  
կապացուցանէ որ այսօր դգացումը փողբսա-  
կին մէջ է, չէ թէ սրտին մէջ:

Բոլոր կառավարութիւնները այդ ջրէն են:  
Եթէ դուք շարունակէք դողսիբա ըլլալ,  
հպատակել, յուսալ եւ Ասածոյ աղօթել,  
կորւած էք:

Չեք Աստածը, ձեր յոյսը, ձեր հաւատքը  
պէտք է ըլլայ ձեր քաջութիւնը, ձեր յան-  
դրդնութիւնը, ձեր ատելութիւնը, ձեր յու-  
սահատութիւնը: Տեսէք սղտիկ կրետէն, որուն  
համար ես երկու հեղ կոււեցայ: Աստամբե-  
ցաւ ան, նեղ օրեր քաշեց, կոււեցաւ, եւ

ազատեցաւ թրքական լուծէն:

Անոնց պէս բքէք, դուք այն ասեմն պիտի  
շահաքարդութիւն ժողովուրդները ձեր դատով:

Որովհետեւ ձեր մարդաստղան թշնամիները  
ոչ սեռի կըմնային, ոչ տարիքի, հետեւաբար  
դուք ձեր սրաշտղանութեան համար աղջիկ,  
աղայ սար ելլելու կուեղու էք, յաղթել կամ  
մեռնել քաջերու պէս ձեր սրտովն, ձեր  
ապահովութեան, ձեր ազատութեան եւ ձեր  
անկախութեան համար, Գինւած յարձակու-  
մին պատասխանեցէք զինւած ապստամբու-  
թիւնով: Ուժին ուժով դէմ դրէք:

Թիւը չէ, որ հաշուի կառնուի, այլ քա-  
ջութիւնը եւ յանդգնութիւնը:

Տեսէք քաջասիրտ բօէրները, Աչինջ այն-  
քան հիանալիօրէն մեծ, աւելի վեհմ, ա-  
ւելի փառապանծ, քան փոքրիկ Տրանսվալի  
հսկայական կռիւը հզօր Անդլիոյ դէմ: Այս  
մեծ օրինակը ժողովրդեանց յիշողութեան  
մէջ անջինջ պիտի մնայ, բօէրները արժանի  
են ազատ եւ երջանիկ ըլլալու, ըլլամ թեր-  
եւս: Հոգ չէ, յաղթեն կամ յաղթւին ան-  
մահ պիտի մնան: Անոնք ձեզի կըսորվեցնեն  
թէ ինչպէս ճնշւած ժողովուրդ մը կուեղու  
է իրեն համար, իր երկրին համար, իր ազա-  
տութեան համար:

Հայեր, թօթեցէք ձեր մեղապարտ ան-  
գործութիւնը, Հեռուները տեղափոխեցէք  
ձեր անկարները, բոլոր անոնք, որոնք կան-  
դամալուծեն ձեր խոյանքը, կրկնապէս ձեր



ործունէութեան թեւերը եւ կրկանեցնեն  
եր վրէժխնդիր բազուկները, նետուցէք  
ուները եւ Ս.բ.իւլ Համբդի աւազակներուն  
էմ՝ աւազակային սրածուծեան եւ աւե-  
ածուծեան անինայ պատերազմը մղեցէք.  
քէք անոնց, ինչպէս որ անոնք ձեզ ըրին:

Ամեն միջոց լաւ եւ բարի է մարդոց  
ոնց դահիճներուն դէմ կոււելու, զայն խոր-  
ակելու եւ սատկեցնելու համար: Ամեն  
պատերազմ, որ կը տանի ազատութեան, ար-  
ար է եւ օրինաւոր:

Կամ մեռնել հերոսի պէս զէնքը ալին,  
կոււելով, կամ մեռնել անարի եւ վատա-  
տիրտ, համակերպ ու լալկան:

Առաջին պարագային դուք ազատ ըլլալու  
բախտէն զուրկ չէք. երկրորդ պարագային  
ազատութեան հոտն անգամ չէք առնէք,  
Ընտրեցէք:

Ամիլիաք Չիպրիանի.

«ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ»

«Քուր նրանք, որոնք ինձ պէս հիւրասիր-  
ւել են հայ դադութներից եգիպտոսում եւ  
Ֆրանսիայում, պահում են իրենց սրտի մէջ  
խոր հիացում եւ ջերմ համակրանք դէպի  
այդ հայրենազուրկ, աշխոյժ ժողովուրդը. որ

ենթակայ է բնաջնջման, Բուր Տայերը,  
կենցաղ էլ ունենան նրանք օտարութի  
մէջ անձկութեամբ են դիտում մահ  
սպառնալիքների տակ գանուղ իրենց եղբ  
բակիցների վիճակը: Նրանք գիտեն, որ Ս  
թանը մեթոդիկ կերպով ի կատար է ածո  
քաղարական մի ծրագիր, որի նպատակն  
ոչնչացնել բովանդակ Տայ ցեղը, եւ ընդ  
նակ են մեծ Զանքերի ու զսոզութիւնն  
որպէս զի կարողանան փրկել այն, ինչ  
հնարաւոր է դեռ փրկել:

«Սուլթանի ծրագիրներն խանդարել  
ամենալաւ միջոցն է հրատարակել ի գիտո  
թիւն աշխարհի՝ կոտորածի ամեն մի փոր  
հենց որ երեւան են գալիս նրան առաջ  
նշանները: Այդ բանում մենք կարող են  
օգնել հայերին: Մենք կարող ենք ձայ  
բարձրացնել բազմաթիւ լրագիրների շա  
հագրագոււած լռութեան մէջ: Կոտորածներ  
անկարելի կը դառնան, հենց որ յայտնե  
աշխարհին: Կառավարութիւնները թողին, ո  
կոտորեն, «Մենք տեղեկութիւն չունէինք»  
ասում էին նրանք: Պէտք է սրանից յետո  
կառավարութիւնները իմանան եւ յայտն  
լինի, որ նրանք գիտեն:

«Մի բան, որ ամբողջ աշխարհի հա  
գաղթականութիւններին հարկաւոր է— դա  
մութիւնն է: Բաւական չէ, որ նրանք ար  
թուն լինին: Պէտք է, որ նրանց արթնու  
թիւնը միասին գործադրելի:



«Նրանք պէտք է մի միտք եւ հոգի մի-  
նստանան: Նրանք պէտք է իրար հետ  
ստի՛ն լինին սպառնալիքների ենթակայ եղ-  
արների պաշտպանութեան համար: Այս  
պայմանով միայն նրանց գործունէութիւնը  
պահան կըլինի, որովհետեւ համաշխարհային  
լինի: Նրանց դատը համամարդկային դատ  
պէտք է, որ նրանք շահագրգռեն ամ-  
բող մարդկութիւնը:

«Եւրօպայի եւ աշխարհի ուշադրութիւնը  
ուեղու համար պէտք է, որ բոլոր հայերի  
յները միանան մէկ ձայնի մէջ: Նրանց  
կուսութեան սլայմանը միաբան գործունէու-  
նն է»:

### Անասով Ծրանս.

#### ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ.

Հայկական հարցի մասին խօսելիս շատերն  
ուով են, որ հայերը իրենք իրենց դժբախ-  
ութիւնների սրտաճաւ եղան, գրգռելով  
ուրքերին: Բայց նմ գրգռեց հայերին . . .  
նանք տեսան, որ Բուլղարիան ազատեց  
իւնից եւ նախատական վիճակից ու ոտ  
եց ինքնաձանաչութեան եւ բարութեան  
նապարհի վրա՝ եւրօպական պետութիւն-  
րի պաշտպանութեան ներքոյ: Միթէ կա-

բելի է դարմանալ, որ հայ ժողովրդի սրտ  
եւս բարձրացան յոյսեր եւ սպասելիքն  
մի այնպիսի ժողովրդի, որ բնաւ ստոր  
Յուլիարնիւից եւ շատ դէպքերում աւ  
տաղանդաւոր, . . . Հայ յեղափոխական դա  
վարը ներկայացնում է իբրեւ մի նոր եւ  
ւոյթ այս խաղաղ եւ դարերի ընթացք  
հնազանդութեամբ տաճկական լուծը կ'  
ժողովրդի կեանքում, թայց դա բնական  
տեւանք է այն սարսափելի կացութեան,  
նկատուում է Յերլինի դաշնագրից յետոյ  
այս ախարը կը դառնայ օրէցօր աւելի  
աւելի թուճաւոր, աւելի եւ աւելի վարակ  
մինչեւ եւրօպական բժիշկները չգիտնեն ին  
ու արմատական միջոցների՝ «հեւանդ մարդ»  
վերաբերմամբ:

## ԲՕՂԷԸ ԺԱԿԸԸ.

### ՍՈՒՂԹԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

1891 թւին՝ բարձրագոյն Գոււր, վր  
խննայով թէ լուրջ դժւարութիւններ կը ծ  
գեն իր համար՝ Հայաստանում խոստացւ  
րէ՞ժօրմները մտցնելուց եւ Ռուսիայի սա  
մանակից նահանգներում բնակւող քրիստ  
նիանները կարող են օգնել Ռուսիային ա  
տերազմի դէպքում, վճուեց մի անգամից



կու նապաստակ սարանել եւ կազմակերպեց  
բացառապէս քիւրդերից «Համիդիէ» հոշոող  
հեծելազօրեր:

Առաւելարութեան մի քանի բարձր պաշ-  
տօնեաների առաջարկած ծրագիրն էր՝ ազա-  
տել սահմանակից նահանգները, օրինակ Ս-  
լաշկերտը հայերից եւ փոխարինել նրանց  
մահմեդականներով, որպէս զի բոլոր հինգ  
նահանգներում հայերի թիւը այն աստիճան  
կրճատւի, որ կարեւորութիւն չմնայ առան-  
ձին հայկական բէֆօրմների եւ որ պատե-  
րազմի դէպքում քիւրդերը դորձեն իբրեւ  
հակակշիւ կօզակների: Կնքման այդ բացար-  
ձակ քաղաքականութիւնը այնուհետեւ ճշտօ-  
րէն իրագործւում է եւ հետզհետէ ընդար-  
ձակւում. եւ եթէ դրան վախճան չդրւի,  
անկասկած, այդպիսով վերջնապէս կը լուծւի  
հայկական հարցը, այսինքն այլեւս հայ չի  
մնայ Հայաստանում:

Էմիլ Գիլլօն.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՐ ԵՒ ԳԻՒՄ.ՆԱԳԻՏՈՒ-  
ԹԻԻՆԸ.

Հայկական հարցը, շնորհիւ Բերլինի դաշ-  
նագրի 61-րդ յօդուածի՝ մտաւ միջազգային  
դրական իրաւունքի շրջանը եւ մտաւ ոչ թէ

գիււանապիտուէթեան քմահաճայքով, այլ երբեւ նախընթաց վաստերի եւ դաշինքներ տրամաբանական հետեւանք, Նոյն այդ տրամաբանութիւնը պահանջում է այժմ, ո՞ր 61-րդ յօդուածը գործադրելի, եթէ այս պահանջը չիրագործուի, եթէ այս շատ ընդունաժողովուրդը, որ աղբային գիտակցութիւն ունի եւ որի իրաւունքները հանդիսաւոյ կերպով տրդէն ընդունուած են, առաջւայ պէս անպատիժ հաստատուի, եթէ տաճիկ կառավարութիւնը չկամենայ կամ չկարողանայ կատարել իր խոստումները, իսկ Նւթօպան մոռանայ յիշեցնել նրան այդ մասին — այն ժամանակ հայկական հարցի հետ՝ առաջին յարմար առիթով կը պատահի նոյնը, ինչ որ պատահեց բոււնիական, սերբիական, բուլղարական, բոււնէլական հարցերի հետ:

Գա կենի մէկը այն անակնկալներից, որոնք սովորաբար առաջ են դալիս անհեռատեսութեան շնորհիւ ինչպէս գիււանապիտուէթեան, այնպէս էլ բժշկականութեան մէջ:

Նրանք նման են այն վատ ու վտէժորկալի տենդերին, որոնք — շնորհիւ այն բանի, որ սկզբում անհիմամ են վերաբերուում, — յանկաքժ բռնկուում են լափող եւ մահաբեր աբադութեամբ:

Պ. ԿԱՍԻՈՒԱ.



## ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ.

«Հայրենիք եմ անւանում ես այն վայրը, ուր եմ հարազատները շրջապատել են ինձ իրենց սիրով ու գուրգուրանքներով, ուր ես սովորել եմ ապրել, կուէլ ու տանջուէլ, Գա այն տեղն է, ուր եմ նախնիքներն են մեծացել, եւ որ նրանք ուռուցել են իրենց արիւնսով ու քրտինքով, Գա դերդաստանն է, որ լայնացել, աճել է, դա մէկ մասն է մարդկութեան, եւ լինի նա ցուրտ, ինչպէս Նապօնիան, կամ այրող, ինչպէս Սենեգալը, կամ թէ բարեխառն, ինչպէս Ծրանսիան, ես չեմ զարմանում, որ մարդիկ իրենց կապուած են զգում այդ վայրի հետ»

Այդ զգացումը կարող է լինել սոսոր եւ վեհ, Մոտ է նա, եթէ ժխտում է այլոց հայրենիքի սէրը, եթէ առաջացնում է այն անմիտ մարդատեացութիւնը, որ մեր լեզուով կոչւում է շովինիզմ՝ (նեղ հայրենասիրութիւն) . . . Եւ ընդհակառակը վեհ է այդ զգացումը, եթէ նա յարգում է ուրիշի հայրենիքը, եթէ նա հասկանում է, որ պէքալի ոճիր է՝ իլել մի ժողովրդից իր ազատութիւնը եւ հպատակեցնել նրան մեր քմահաճութեան, մեր խելագար բռնակալութեան . . . Հայրենիքը իսկարում է ամեն տեղ ամենակարողների ճիգերի տակ»

Տրանսպալ հոգեվարքի մէջ է:

Տելիպոլինեան կղզիները գալարում են

վերջին մարտուման արհաւիրքների մէջ.

Չինաստանը շողախում է իր հողը հա-  
քողասների արկնով: Ո՛ւր է մնում հայ-  
քենիքը, նւր գերդաստանը, նւր մարդկու-  
թիւնը այդ քարայրի մէջ, որը լափում է  
եւ մարդկութիւն, եւ գերդաստան, եւ հայ-  
քենիք:

Ա՛հ, սթափւենք, պաշտպանենք բռնա-  
բարւած իրաւունքը, թոյլերի գոյութիւնը,  
պաշտպանենք ազատութիւնը:

Հայաստանի զաւակներ, խօսեցէք բար-  
ձրաձայն մեր թմրած խղճին ու գիտակցու-  
թեան, թօթափեցէք մեր քունը: Կըգայ  
օրը, երբ բոլորն էլ գարշանք կըզգան դէ-  
պի բռնութիւնը, այդ օրը գալիս է արդէն:  
Ծնեցրէք այն վսեմ թուիչքը, որ կըփրկէ  
ձեզ, կըփրկէ եւ մեզ:

Ծօփէր.

---

## Ա Ր Թ Ո Ի Ն

«Մտատանջող ու արդէն չարագուշակ  
համբաւներ կարծէք նոր Զարդեր են գու-  
ժում Հայաստանի մէջ: Կարմիր խենդու-  
թիւնը նորից մօտենում է կարծէք, Եւրօ-  
պան այս անգամ էլ արդեօք պիտի թոյլ  
տայ անեւ: Նա արդէն մեծ ոճիր գործեց:



զոհելով մի ամբողջ ազգաբնակիւթիւն սուլթանի մուկդին սարսափներին եւ դիւանադիտութեան ցաւերին, Յայց ո՛հիրը այս անգամ աւելի մեծ պիտի լինի, քանի որ Եւրօպան ահռելի փորձառութեամբ ազգարարւած է այն հետեւանքների մասին, որոնց յանդուժ են նրա երկպառակիւթիւնները մրցումներն ու հաշիւները:

Ահամայ հարց էք տալիս՝ արդեօք սուլթանը չի յենուում Եւրօպայի եւ Հարաւ-Սեբրիկայի անցքերի վրայ, որոնք կլանում են պետութիւններին եւ խուլ կերպով միմեանց դէմ հանում նրանց — որպէսզի վերջ դնէ հայ ազգի մէջ մնացած կորովի տարրերին:

Ահա թէ ինչու պաղատադին ինդրում ենք Ֆրանսիայի կառավարութեան՝ չխրել մեր քաղաքականութիւնը ծայրագոյն Արեւելքի անվերջ արկածի մէջ: Պէտք է, որ նա ազատ մնայ՝ նախ որպէսզի չըվասնէ իր ուժը գաղանային եւ յանցաւոր ձեռնարկների մէջ եւ ապա որպէսզի կարողանայ իր աչալուրջ հոտատակամութեամբ առաջնառնել այն նոր ոճիրների, որոնք պատրաստուում են մարդկութեան դէմ:

Եթէ վերսկսին Հայաստանի ջարդերը եւ Եւրօպայի անտարբերութեան կամ մեղսակցութեան ոճիրը, քաղաքակրթութեան գաղափարն անգամ չի դիմանայ դրան:

ՃԱՆԿ ԺՕՆԷԱ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՕՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐՕԻ  
ԿՈՉԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՄԱՍԻՆ

Բայր երկրների բանուրակամ կուսակցութիւններին. Ամենասուղբալի լուրեր են հասնում մեզ Հայաստանից, 1894—96-ի մեծ ջարդերից յետոյ, որոնք աւելի քան 300,000 մարդկանց մահ սպառնառեցին, կարելի էր կարծել, որ թիւրք կառավարութիւնը, որի սրտաստնատուութիւնը ճշգրտաւէր աշխարհի առջեւ, չէր համարձակուի այլեւս վերսկսել նման սարսափներ:

Այն անցքերը սակայն, որոնք նորերս տեղի ունեցան Մուշի գաշտում եւ Սասունի շրջաններում, հաստատում են, որ սխալ էր այդ ենթադրութիւնը: Եթէ չլինի որ եւ է միջամտութիւն, մեծ երկիւղ կայ, որ Արգիւ Համիդի, ոճրագործ քաղաքականութիւնը աւելի ծանր անցքեր սկսի առաջ բերէ:

Եւրօպական կառավարութիւնների յանցուտք անգործութեան դիմաց՝ սօցիալիստ դեմօկրատեան չէ կարող անտարբեր մնալ դէպի այն գարշելի արարքները, որոնք կատարուել են կամ կատարուելու վրայ են Հայաստանի թրքական դաւառններում:

Ուստի մենք օգտակար ենք համարում յիշեցնել ձեզ այն օրակարգի խօսքերը, որ քէտարկեց 1900 թ. Պարիզի միջազգային համաժողովում:



«Փարիզի սօցիալէստական միջողգային համաժողովը, մերստին շեշտելով եղբայրական համակրութեան դրացմունքները, սրօնք պիտի մեացնեն բոլոր ժողովուրդներին, դայրոյթով. բողբում է Հայաստանում կատարւած բռնարարութիւնների, խժդբ-ժութիւնների եւ քարդերի դէմ, եւ մասնացոյց անելով երկու աշխարհների բանւորներին դանազան կապիտալիստ պետութիւնների ոճրագործ մեղսակցութիւնը, — հրաւիրում է պարլամենտական սօցիալիստ կուսակցութիւններին ամեն մի դէպքում միջամտել յօգուտ անարդար հարստահարւած հայ ժողովրդի, որին համաժողովը ուղղում է իր քերք ու սերտ համերաշխութեան հաւաստիքը»:

Իբրեւ հեռեւանք այդ օրակարգի՝ անհրաժեշտ է, որ պրօլետարական եւ միջողգային համերաշխութիւնը արտայայտւել մեր արամադրութեան տակ եղած բոլոր միջոցներով:

Իերկնի դաշնապիրն ստորագրող պետութիւնները մնում են հեղք ու անշարժ այն ժամանակ, երբ նրանց յորդորում-թախանձում են դործել:

Պէտք է, որ մեր պատւիրակները բոլոր պարլամենտների մէջ, ուր նրանց միջամտութիւնը կարող է ազդու լինել, յիշեցնեն կառավարութիւններին նրանց պարտաւորութիւնները կամ թէ հրապարակ հանեն նրանց

մեղսակցութիւնը, որ արտայայտուեմ է նրանց անտարբերութեամբ:

Պատահանութիւնը, որ անխուսով հանդիսատես է մի քրիստոնեայ ժողովրդի մարտիրոսութեան, չի դանուամ մի նշաւակիչ խօսք դահլիճների համար, չի դանուամ դժութեան մի խօսք դոհերի համար:

Պէտք է որ միջազգային սօցիալիզմը, որ պաշտպան է կանգնած բոլոր հարստահարւածների, առանց խորութեան դաւանանքի ու ցեղի, չխնայէ ոչ մի միջոց՝ յուզելու հանրային կարծիքը համիդական քաղաքականութեան դարշանքների դէմ:

Չափազանց շատ կրկնուած է արդէն, որ Հայաստանում ոչինչ չէ փոխուած: Ինչպէս որ ասուած էր Վլասիօվի համաժողովին ներկայացուած նորագոյն մի յիշատակագրի մէջ, «բռնութիւններ, անդժութիւններ, կողոպուտներ, կանանց եւ աղջիկների բռնաբարութիւններ, գիւղերի եւ ագարակների հըրդեհումներ, մասնակի ջարդեր, ու սպանութիւններ ծանուցուած են անդադար գրեթէ բոլոր հայաբնակ վիլայեթներում եւ այն՝ միայն 1900 թ. յուլիսի 1-ից մինչեւ 1901 յուլիսի 1-ը»:

Այնուհետեւ դրութիւնը աւելի եւս ծանրացել է, Նա սպառնում է էլ աւելի ծանրանալ:

Բիթլիսի, Կրզրումի եւ մանաւանդ Մուշի եւ Բայազէդի կողմերում շարունակուեմ են:



Սարսափը թագաւորում է տիրականօրէն ազգաբնակչութեան վրայ, որից խել էն ամեն զէնք, պաշտպանելու ամեն միջոց՝ նրա հօտերն ու հունձքը, հողերն ու տները յափըշտակելուց յետոյ՝

Եւ, յամօթ Եւրօպայի, բնաջնջման այդ գործը կատարւում ու վերջանում է, առանց որի կառավարութիւնները — որոնք այնքան գործօն են, երբ կապիտալիստական շահերն են վտանգւած — որ եւ է բան ձեռնարկէին՝ փրկելու հայ ժողովրդի մնացորդները՝

Աւիստաւրներ,

Աբդիւլ Համիդի կառավարութիւնը, մամուլի մի մասի գործակցութեամբ, ձգնում է կազմակերպել լռութեան դաւադրութիւն հայկական գործերի շուրջը՝

Չեր եւ ձեր թերթերի ու պատւիրակների վրայ սարսփ է ընկնում խանգարել նրա այդ ընթացքը, ի լոյս հանել նրա ոճիրները եւ ձեր համակրանքի ու քաջալերութեան խօսքերն ուղղել նրանց որոնք տառապում եւ կուռում են ապրելու իրաւունքը նւաճելու համար՝

Չեր սատգամաւորները Միջազգային բիւրօում համոզւած են, որ դուք չպիտի թերանաք դրանում՝

Ի դիմաց գործադիր բիւրօի՝  
ԷՒՌՈՒԱՐԴ ԱՆՍԵԷԼ, ԷՄԻԼ ՎԱՆԴԵՐՎԵԼԴ  
Բարսաղար՝ ՎԻԿՏՕՐ ՍԷՐՎԻ.

1901 թ. հոկտեմբերի 18

Գ Ի Ի Ղ Ա Յ Ո Ւ Յ Ա Լ Ե Ր Բ

Էն օրն եկան թաղի արին  
 Հարկ են ուղում տերութեան,  
 Ինչ տամ կռօին ու բեղեարին,  
 Արի՛, վարի իմ դութան:

Յով. Թորմանեան.

Շատ ծանր, շատ խոր են այդ ցաւերը,  
 Գարեբից ի վեր նրանց լծի տակ տնրում  
 է գիւղացին:

Նա անքուն գիշերներ, անդուլ ջանքեր  
 է դործ գնում, իր քթահնքով ողսողում է սեւ  
 հողը, բայց եւ այնպէս միշտ զրկւած, միշտ  
 ճնշւած վիճակի մէջ մնում:

Նա մշակում է հանդերն ու մարգա-  
 գեախնները, այգիներն ու բանջարանոցները,  
 բայց նրանց արդիւնքի ամենամեծ մասը ու-  
 բիշներին է բաժին ընկնում:

Նա խնամում է տաւար—անասուն, բայց  
 միշտ էլ կարօտ մնում նրանց բարեքրներին:

Անցէք գիւղերը, ներս մտէք մուկ ու  
 մուայլ խրճիթները եւ այն ժամանակ ձեր  
 առաջ կը բացւի գիւղացու ցաւերի ամբողջ





Մ ւ ր ս ի կ  
(տես էր. 210)

Վայս

1907 թ.





պատկերը — դառնութեան ցայտուն գոյներով:

Ահա նա — հողի աշխատաւորը ջլուա ձեռքերով, արեւից-անձրեւից ծեծւած դէմքով: Բնցատիններ է նրա հագուստը. վշտի հաւաքանքներ են հնչում նրա սրտից, բայց դրա հետ միասին մի անընկճելի կենսունակութիւն, մի արդիւնաւոր սյժի արտայայտութիւն կայ նրա հայեացքի մէջ:

Ահա եւ նրա ընտանիքը — մերկ, բսկոսն, բայց այդտեղ էլ եռացող աշխատանքի դրօշմն է նկատուում:

Եւ այդպէս ամեն տեղ — դիւզերում երկու հահագիր երեւոյթներ միշտ լծորդւած, միշտ միասին են առաջ ընթանում, — մի կողմից արդիւնաբերող աշխատանքը, իսկ միւս կողմից դառն չքաւորութիւնն ու դրկանքը:

Եւ այդ դրկանքի հարւածների տակից միշտ հնչում է դիւզացու բողոքը.

— Հո՞ղ չունենք. հողի սակաւութիւնն է մեր տունը քանդողը ...

— Պարտքերը, այդ պարտքերն են մեզ սպանողը:

— Իսկ հարկերը — նրանք չա՞ր հրեշտակ են մեր դէխին, որ միշտ էլ կտրում են մեր քունն ու հանդիստը ...

Գաւառից-գաւառ, երկրից-երկիր, լըսւում է այդ արդար բողոքի ձայնը ընդդէմ տիրող կարգերի, ընդդէմ սեփականութեան պայմանների:

Նոր չէ, ի հարկէ, այդ բողոքը, նա իր

Ժամանակին հսկայական շարժում է առաջացրել էւրօպայսում. եւ նոյն խիլ յատուկ «Գիւղացիական պատերազմ» ստեղծել:

Նա դեռ դարեր առաջ Ռուսաստանում գիւղացու ծովացած դժգոհութեանը մի առանձին ընթացք է աւել—գլուխ կանգնեցնելով Բաղինին, Պուղաչեւին եւ այդ դժգոհութեան հոսանքին զոհ դարձնելով հարաւոր աղնւահամներէ, վաճառահամներէ ու հոգեւորականներէ:

Գլորել էն տարիները միմեանց յետեւից սերունդները յաջորդել են միմեանց, բայց գիւղացու ցաւը մնացել է միշտ կանգուն:

Եւ այժմ նրա հնչիւններն են, որ արձանագրուում են ընթացիկ մամուլի էջերում «ադրարային շարժումը» խորագրով. նրա արձագանքներն են, որ լուում են Ռուսաստանի մէկ ծայրից մինչեւ միւսը՝ մերթ բռնկւելով իբրեւ փոթորիկ եւ հրդեհ ու աւերակ դարձնելով հողատէրերի կալւածներն ու ունեցւածքը, մերթ լւելով, առժամանակ խաղաղւելով ինչպէս ծովը ահեղ փոթորիկից յետոյ:

Սակայն որքան էլ խիտա միջոցներով խեղդել աշխատեն այդ շարժումը, որքան էլ սարսափ տարածեն ժողովրդի վրայ, այնուամենայնիւ բողոքի աղբիւրը մնում է եւ նա նորանոր փոթորիկներ կառաջացնէ, մինչեւ որ լուծւի հողային հարցը եւ վերջ դրւի գիւղացու դարաւոր ցաւերին:

Այդ ցաւերի խկական աղբիւրը այս էրո-



թուփիւնն է, որ գիւղացին չունի բաւակա-  
նաչափ հող, որ իր կարեքների համար մշա-  
կել կարողանայ, չունի աղատութիւն, որ իր  
բրտկների արդիւնքից օգտուել կարողանայ:

Ճիշտ է մտա 50 տարի աւաջ ուստաց  
կառավարութիւնը գիւղացիներին իբր թէ  
աղատեց ճորտութիւնից, բայց դա ձեւական  
աղատութիւն էր, սրովհետեւ հողերի ամե-  
նամեծ մասը դարձեալ մնաց կալւածատե-  
րերին: Ի՞նչ պէտք է անէր գիւղացին ա-  
ռանց հողի. նա իրականապէս մնալու էր  
նոյն ճորտը, շարունակ ենթարկւելով կալւա-  
ծատէրերի անծայր, անսահման շահագործ-  
մանը եւ տիրող բռնակալական կարգերի  
ճնշմանը:

Եւ այդպէս էլ եղաւ. ուստի գիւղացի-  
ական ցաւերը ոչ թէ թեթեւացան, այլ տա-  
րեցտարի աւելի ու աւելի ծանրացան, հաս-  
նելով ներկայ վիճակին:

Ամենքին յայտնի է, որ գիւղացին է հողը  
մշակողը, արդիւնաւէտ դարձնողը, բայց նա  
ստիպւած է իւրաքանչիւր տարի ծանր հար-  
կեր ու տուրքեր վճարել, որովհետեւ հողի  
սեփականատէրեր ուրիշներն են համարուում:  
Օրինակ միայն Եւրոպական Ռուսաստանում  
հողի սեփականատէրերը դասաւորւած են  
հետեւեալ ձեւով \*).

\*) «Статистика по земельной собственности»  
вып. I—VIII.

1 Ազնւականներ	73,200,000 դ.հո.	637
2 Վաճառականներ	9,800,000 —	775
3 Մեշտաններ	1,900,000 —	32
4 Գիւղացիներ	5,000,000 —	18

Իսկ բոլորովին հող չունեցող գիւղացիները մի քանի տասնեակ միլլիոններ են կազմում: Պարզ է, ի հարկէ, որ առաջին երեք դասակարգերը երանց հողերը տալիս են դա՛ռ ձեռք գիւղացիներին մշակելու, բայց որո՞տուրք վերցնելով:

Բացի դրանից մեծ քանակութեամբ հողեր ունեն եւ սեփական դամաւարանք, վաճաքերը եւ կայսերական ընտանիքը, այնպէս որ այդ բոլորը միասին վերցնելով, մենք տեսնում ենք, որ հողի սակաւութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել: Հող շատ շատ կայ, բայց նա չափազանց անարդար ձեռով է բաժանւած, ուստի եւ ժողովրդի մեծամասնութիւնը — աշխատաւոր գիւղացիութիւնը շարունակ տքնում է ու քաղցած մնում:

Այդ անարդարութեանը վերջ տալու համար անհրաժեշտ է բոլոր հողերը համայնացնել, ժողովրդականացնել եւ նրանցից օգտւելու իրաւունք տալ միայն նրանց, ով աշխատում է իր սեփական ոյժերով, սվ մշակում է հողը առանց ուրիշների շահագործելու:



Բայց միայն այդ էլ բաւական չէ, եթէ  
ժողովները բոլոր հողերի համայնացումը  
և թողները հին օրէնքները, կարգերն ու  
ընտանութիւնը, դարձեալ ոչինչ դուրս չի գալ,  
այդ կարգերի շնորհիւ արտօնեալ դասակար-  
գերը կը կարողանան շահագործման նոր ձե-  
ւեր, նոր ճանապարհներ ստեղծել:

Դրա առաջն առնելու համար հարկաւոր  
է նաեւ լիակատար ազատութիւն եւ ժողո-  
րդապետութիւն. ժողովուրդը ազատ պէտք  
է լինի ինքը իր բնարեալ ներկայացուցիչների  
միջոցով իր բազմը սնօրինելու, իր դործերը  
կառավարելու:

Ահա այդ միակ ճանապարհով կարելի է  
բաւարարութիւն տալ գիւղացիական կարիք-  
ներին եւ վերջ դնել «ադրարային շարժում»  
կոչւող մեծ ու փոքր փոթորիկներին, արիւ-  
նահեղ բռնկումներին:

Հող եւ ազատութիւն — ահա թէ ինչ է ու-  
ղում դարեր շարունակ կեղեքւած, հալ ու  
մաշ եղած գիւղացին:

Այդ պէտք է տալ նրան, եթէ ուղում  
ենք վերջ դնել գիւղացիական այնքան ծանր,  
այնքան խոր ցաւերին:

Ս. Ռ.

ԳԻՒՂԱՅԻՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՀՈՂ  
ՍՏԱՆԱԼ.

(Թարգմանութիւն \*).

Շատերը ասում են, որ պէտք է գնել  
հողը կալւածատիրոջ հետ ազատ համաձայ-  
նութեան դալով: Մի քանիսն էլ պնդում  
են, որ արքունական հողերն էլ պէտք է նոյն-  
պէս փողով ծախել դիւղացիներին, շեշտ է  
ի հարկէ հասկանալ, որ այդ ձեւով ոչինչ  
դուրս չի դալ, Նախ եւ առաջ շատ կալւա-  
ծատէրեր չեն ցանկանալ ծախել իրենց հողը  
եւ կասն, որ մենք աւելի լաւ է կապալով  
կտանք եւ կամ ինքներս դիւղատնտեսու-  
թեամբ կտարապենք, Ասումը աւել է բան-  
ւորական ձեռքը ածան է: Յետոյ, հող գնել  
կարող կլինեն միայն հարուստ գիւղացիները,  
իսկ ահագին մեծամասնութիւնը դրա հա-  
մար միջոցներ չունի: Եւ վերջապէս եթէ  
գիւղացիները սկսէին պարտքով գնել հողը,  
ինչպէս հիմա անում են գիւղացեական բան-  
կի միջոցով, էլի ոչինչ դուրս չէր դալ: Որ-  
քան աւելի շատ հող գնելու լինեն գիւղա-  
ցիները, հողը այնքան աւելի շատ կթանդա-  
նայ եւ դրանից կօգտւեն միայն կալւածա-  
տէրերը: Իսկ գիւղացիները վերջ ի վերջոյ

(\* Պեշեխով «Հայ, լոյս եւ ազատութիւն»:



այնպէս կ'ընդունեն պարտքի մէջ, որ յաւիտեանս յաւիտենից այլ եւս դուրս դալ չեն կարող:

Բացի դրանից եթէ դիւղացիները դնեն հողը ու դարձնեն անձնական սեփականութիւն, այդ դէպքում նրանց մէջի հարուստները եւ ուժերդները նորից կ'դնեն ու կհասնեն իրենց ձեռքը հարեւաններէի հողերը ու կդառնան նոր կալածածառէրեր, իսկ միւսները ստիպւած կլինեն նրանց համար աշխատել:

Գրա համար էլ, որպէս զի հողի հարցը լաւ լուծելի, մեր կարծիքով պէտք է արմատից փոխել հողային կարգերը կամ, ինչպէս ասում են, ազգաբային կազմը: Հողը նոյնպէս Ս.ստեղծային պարզեւ է, ինչպէս օդը, ջուրը, աստղայից երկինքը, Ի հարկէ, եթէ հնարաւոր լինէր, երկինքն էլ իրենց ձեռքը դրել ցանկացողներ կլինէին, որ յետոյ պահանջէին, «Եթէ ուղղում ես աստղերին նայել եւ կամ արեգակի տակ տաքանալ, առաջուց փողը տուր»: Լաւ որ այդ հնարաւոր չէ անել: Իսկ հողը համարեա ամբողջովին դարձրել են մասնաւոր սեփականութիւն: Ահա այդ չի կարելի թոյլ տալ՝ հողը տւած է մարդկանց, որ նրա վրայ աշխատանք գործ դնեն եւ ոչ թէ նրա համար, որ ձեռք դցին, ու ստիպեն ուրիշներին իրենց համար աշխատել: Գոչա համար էլ չէ կարելի թոյլ տալ, որ մէկը ունենայ հող աւել-

լի, բան ինքը ու իր ընտանիքը կամ ընկեր-  
ները միտախն կարող են մշակել:

Այդ ինչպէս անել, Գրա համար ամե-  
նից լաւն է ամբողջ հողը գարձնել ամբողջ  
Ժողովրդի սեփականութիւն եւ յետոյ տալ  
նրանց, ով ինքը աշխատանք դործ կդնէ նրա  
վերայ, Հողը, ի հարկէ, միատեսակ յատկու-  
թիւն չունի՝ կայ լաւ հող, կայ եւ վատը,  
մի տեղ գետեատինից 100 րուբլի կարելի է  
դուրս բերել, միւս տեղում — նոյն տեսակ  
աշխատանք դործադրելով — գետեատինից 20  
րուբլի էլ չես ստանալ: Այդ պատճառով էլ  
պէտք է հաւասարութիւն մտցնել, ղւմ բա-  
ժինը որ աւել բարեբեր ու յաջող հող կընկ-  
նի, նա հարկ պիտի տայ եւ այդ փողերը  
պէտք է դործադրելն հասարակական կա-  
րեքների վերայ, Հողը ծախել, կապալով տալ  
կամ մշակել իրզատնիք բռնելով եւ առհա-  
սարակ սերիշներին վարձելով, այսինքն հողից  
եկամուտ ստանալ՝ անձամբ նրա վերայ աշ-  
խատանք դործ չդրած, — ոչ սք իրաւունք  
չպէտք է սնննայ, Ժամանակաւորապէս բա-  
ցառութիւններ, ի հարկէ, կարող են լի-  
նել, օրինակ, եթէ տան աշխատաւոր ձեռ-  
քը հիւանդացել է կամ մեռել, եթէ մի  
տուն ինքը Ժամանակի կարճութեան եւ դոր-  
ծի շուտ կատարելու անհրաժեշտութեան  
պատճառով չէ կարողանում հասցնել եւ-  
այլն: Բայց ի հարկէ բանը դրանում չէ,  
Պէտք է հողը չդառնայ սերիշի աշխատանքը



սեփականացնելու միջոց, Հասկանալի է, որ հողի դործը տնօրինողները, պաշտօնեաները, վնասփնիչները չպէտք է լինեն, այլ ժողովրդի ընտրած մարդիկ:

Ահա հողային այս կարգերը, մեր կարծիքով, կհամապատասխանեն խկապէս աշխատողների շահերին: Հողը ամբողջ ժողովրդի սեփականութիւնն դարձնելը գիտնականների լեզուով կոչուում է ժողովրդականացում: Եթէ կարճ ասենք, մենք կարծում ենք, որ մեր երկրում անհրաժեշտ է հէնց հողի ժողովրդականացումը — այն միակ պայմանով, որ ժողովրդի սեփականութիւնն դարձրած հողը տրւէր աշխատողներին, որ նորա օգուեն հողից:

Ա. Պեօեխօնով.

---

### ԳԻԻՂԱՅԻՆԵ Ր. ՄԻԱՅԼԻՔ .

Գիւղացիներ, դուք անշուշտ նկատած կլինէք, որ քաղաքի բանւորները ձեզանից լաւ են ապրում: Բայց հաւատացէք, որ դուք էլ կարող եք ձեռք բերել միեւնոյն բաները, եթէ ընթանաք այն ուղիով, որի վրայով շատ տարիներ է, ինչ գնում են ձեր աշխատանքի — ընկերները: Նրանք էլ ձեզ նման առաջ աղքատ էին, նոյն խկ աւելի աղքատ, քան թէ դուք եւ այդ այն պատճառով, որ նը-

բանց մէջ էլ գոյութիւն ունէր միեւնոյն կոյր  
եւ անգութ մրցումը, որ տիրում է ձեր մէջ:

Բայց նրանք հասկացան իրանց սխալը,  
հասկացան, որ մրցումը տանում է դէպի  
քայքայում. նրանք կանգնեցին սեղմ միութեան  
ճանապարհի վրայ եւ այդպիսով քայլ  
առ քայլ կարողացան իրանց վեճակը բարեփոխել  
եւ դեռ շարունակում են աշխատել այդ  
ուղղութեամբ:

Գիւղացիներ, հեռուեցէք նրանց օրինակին:  
Ի դուր տեղը ժամանակ մի կորցնէք հողատէրերին  
անիծելով. խոստովանեցէք, որ ձեր  
թշուառութիւնների մէջ մեղաւորը դուք  
ինքներդ էք եւ եթէ ուղում էք, որ այդ  
թշուառութիւններին վերջ լինի, սչնչացրէք  
ձեր միջի մրցումը, համախմբէք, միութիւններ  
կազմեցէք:

Ինչպէս որ գոյութիւն ունին երկաթուղային  
ծառայողների, գրաշարների, գլխարկ  
կարողների եւ այլն միութիւններ, նոյնպէս  
եւ դուք պէտք է համախմբէք, միութիւն  
կազմակերպէք: Այդ միութիւնը պէտք է սերտ  
կերպով կապէ բոլոր գիւղացիներին, գիւղատնտեսութեան  
որ ձիւղին էլ նրանք սլաականելիս լինեն, որպէս ղի սլաշապանէք ձեր  
ընդհանուր շահերը եւ բարեկալէք ձեր գասակարգի  
գրութիւնը:

Եթէ դուք իւրաքանչիւր գիւղում միանար  
եւ ուրիշ գիւղերի ձեր ընկերների հետ  
կազմէք, այսպէս ասած, մի ընտանիք, միա-



ցած դօրք, — հասկաննում էք դուք, թէ ինչ ոյժ կունենաք ձեր ձեռքում:

Այժմ բաժան-բաժան եղած, մէկ մէկուց օտարացած, դուք ոչ միայն չէք կարող դիմադրել հողատէրերին, այլ, ամեն մէկը մտածելով եւ աշխատելով ձեր անձնական հաշւին, դուք ինքներդ վնասում էք ձեզ ձեր մրցումով, ինչպէս այդ մենք արդէն պարզեցինք:

Այն ժամանակ, ընդհակառակը, դուք միացած կլինիք եզրայրական պայմանով, որպէս զի փոխադարձաբար օգնէք մէկ-մէկու եւ հողատիրոջ հետ վարձի եւ հողից օգտուելու համար աւելի նպաստաւոր պայմաններ կարողանաք կապել:

Իւրաքանչիւր գիւղում դուք ինքներդ կարող էք սրոշել, թէ ինչ պայմաններում պէտք է կատարել իւրաքանչիւր գիւղին պատկանող հողերի կամ կալւածքների մշակումը:

Եւ որովհետեւ դուք կսկսէք համերաշխութեամբ դարձել եւ էլ ոչ մի գիւղացի չե՞ճարելի, որ աշխատանքը չնչին առաջարկէ, ուրեմն պարզ է, որ եթէ ձեր պահանջները չափազանցութեան չը հասնեն, կալւածատէրերը իրանց հողերը անցանքս եւ անքաղ չը թողնելու համար, պէտք է դիմանն ձեր պահանջներին:

Այսպիսով, դուք միաբան դարձելով, բարի համերաշխութեամբ, գործով քրիստոնէութիւնն իրագործելով, որ քարոզում է

սիրել մէկ-մէկու, օգնել մէկ-մէկու որպէս  
եղբայրներ, եւ որը դուք մինչեւ այժմ դա-  
ւանում էիք միայն խօսքով, — դուք կամաց  
կամաց կմեծացնէք ձեր միութիւնը եւ նրան  
կամրասնդէք ու կուժեղացնէք: Խօսի կատա-  
րելով այդ, դուք կը կարողանաք մշակների  
վարձը բարձրացնել, կառուարները պակա-  
սեցնել, կալածատերերի հետ կապելիք  
պայմանները բարելաւել:

Եւ տարեց-տարի ձեր կեանքը աւելի ու  
աւելի կհեշտանայ, դուք այլ եւս չէք աղ-  
քատանայ, լաւ կուտէք, կխմէք, կհագնէք,  
աւելի յարմար բնակարաններ կունենաք, ա-  
ւելի շատ ժամանակ եւ միջոց կունենաք, թէ  
սովորելու եւ թէ ձեր երեխաներին սովո-  
րեցնելու:

Կգայ ժամանակ, որ ձեր մէջ էլ կամ-  
բանան այն կարգերը, ինչ որ կան ուրիշ եր-  
կրների գիւղացիների մէջ, որոնք կանխել են  
ձեզ: Եւ վերջապէս կգայ մի օր, երբ դուք  
միւս արհեստներով պարագայ բանւորների  
հետ միասին, բոլորովին ազատ կլինիք:

և. Պրամպոլինի.



սկսուելը: Առանց դրան արտադրութիւնը  
հարկաւոր չէ: Բոլոր այդ ծախքերը  
կոչուում են կապիտալ:

Հետեւաբար, կապիտալը նախկին  
աշխատանքի արդիւնքն է: Բնու-  
թիւնն, ինչպէս դիտենք, ձրի ոչինչ չէ տալիս  
մարդուն: Նա դրամագլուխն էլ ձրի չի տա-  
լիս: Գրամագլուխը կարող է երեւան գալ  
միայն այն պատճառով, որ առաջուց ծախսել  
են որեւէ քանակութեամբ աշխատանք հէնց  
նրա արտադրութեան համար: Յետոյ, կա-  
պիտալ կարող է կոչուել միայն այն իրը,  
որն հարկաւոր է նոր իրեր արտա-  
դրելու համար: Ապօրինակ չի կարող  
կոչուել այն ամենը, որ հարկաւոր է մար-  
դուն իր անմիջական դործածութեան համար,  
այլ միայն այն, որ հարկաւոր է նոր իրեր  
արտադրելու համար: Ուստի կապիտալ չէ  
այն տունը, որի մէջ մենք ապրում ենք, այն  
հացը, որ մենք ուտում ենք, այն սեղանը,  
որի վրա դրում ենք: Սակայն այն տունը,  
որի միջ դետեղուած է արհեստանոցը, այն  
հացը, որով մենք կերակրում ենք ընկեր-  
ներին, այն սեղանը, որի վրա ամրացրած են  
փականագործի բռնող—սեղմող գործիքները,  
—այս բոլորը կապիտալ է, որովհետեւ  
ծառայում է նոր արտադրութեան:

Հետեւապէս որպէս զի որեւէ իր կոչուել  
կապիտալ նա պէտք է I) լինի հե-  
տեւանք նախկին աշխատանքի, եւ

2) Տ ա ու ա յ է ն ո ր ա ր տ ա դ ր ու Լ Թ Խ ա ն  
հ ա մ ա ր :

Այսպէս ուրեմն կապիտալ կոչւում է մարդու ձեռքով արտադրուած ամեն մէկ առարկայ, որ նշանակուած է նոր արտադրուելիք ա ն համար :

---

### ԿԱՐԾԻՅՆԵՐ

Արհեստակցական միութիւնների մասին

---

Արհեստակցական միութիւնները սօցիալիզմի դարոցներն են, Այդ միութիւնների մէջ բանւորները սօցիալիստներ են դառնում, որովհետեւ օրէց օր կուտում են կապիտալի դէմ :

### Առարկ Մարկս

Արհեստակցական միութիւնը մի այնպիսի բանւորական կազմակերպութիւն է, որ գոյութիւն ունեցող պետական եւ հասարակական կարգերի սահմանում ձգտում է աշխատաւորների կենսական մակերեւոյթը բարձրացնել :

Ա. Լ. ԳՐԱՍ ՌԻՅԵԼ



Արհեստակցական միութիւնը ոչ միայն բանւորներին հասարակօրութիւն է ապիւյն ժամանակակից սոցիալիստներում կուսակու, կապիտալիստական ընթիմի տակ սլաշտպանելու աշխատավայրձը, առողջութիւնը եւ ազատութիւնը, այլեւ նախապատրաստում է նոթ կազմ, արթնացնելով սրօլեապրների նախաձեռնութիւնը եւ ձեւակերպելով գործողութեան օրդանները, սրանք կօմիւնիստական կարգերում գործադրուելով, կդառնան վարչական օրդաններ:

### Ժամի ժօրէս

Ընդհանուր, միջադրային հոսանքը ուժեղ թափով մղում է դէպի կուսակցական քաղաքականութեան եւ արհեստակցական միութեան միացումը եւ ոչ թէ բաժանումը, այդ սլատճաւով արհեստակցական միութիւնները սլէաք է հեռեւեն կուսակցական քաղաքականութեան:

### Ետը Ետուցիի

Արհեստակցական միութիւնների անկուսակցականութիւնը մեղ վտանդ է ներշնչում:

### Էմիլ Աւանդեյիլ

Պէտք է արհեստակցական միութիւնները եւ քաղաքական կուսակցութիւնը կազմեն մի անբաժանելի ամբողջութիւն, փոխադարձաբար սլաշտպանեն ու լրացնեն միմեանց:

### Հայերիս Ծօրերէլ



**Զարուհի Տերոյեան**

(տես էջ. 214)

«Լոյս»

1907 թ.





*[Faint, illegible text or markings at the bottom of the page, possibly bleed-through from the reverse side.]*

ԱՐՀԵՍՏԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ՆՊԱՏԱԿԸ.

Աշխատանքի եւ կասկտալի մրցումը  
ընթացում աւելի ու աւելի լայնանում, մեծ չա-  
փեր է ստանում:

Գրա հեա միասին զարդանում են եւ այն  
կազմակերպութիւնները, որոնք կոչւած են  
անշւած, կեղերւած դասակարգի շահերը  
զաշտուպանելու, իրաւունքները լայնացնելու:

Այդպիսի կազմակերպութիւնների շար-  
քում չափազանց ուժեղ դեր են խաղում  
արհեստակցական միութիւնները:

Նրանք համախմբում են բազմակից ու  
շահակից աշխատաւորներին եւ առաջ մը-  
տում դասակարգային գիտակցութեան ու  
հոխադարձ համերաշխութեան հովանու տակ:

Նրանք ձգտում են իրականացնելու հե-  
ռեւեալ նպատակները:

1. Միեւնոյն արհեստի աշխատաւորնե-  
րին շաղկապելով միմեանց հեա եւ դործնա-  
նան ճանապարհով արծարծելով համերաշ-  
խութեան դադափարը, արթնացնում է նը-  
անց դասակարգային գիտակցութիւնը եւ  
կարողում շահագործող դասակարգերի դէմ  
արաւելու անհրաժեշտութիւնը:

2. Բազմադան միջոցներով բարւոքում է  
անդամների սօցիալական, տնտեսական  
ութիւնը:



3. Չգտում է կարծացնել բանւորակօրը, այդպիսով հնարաւորութիւն տալով ախատաւորներին աւելի երկար ժամանակ նւիրելու իրանց մտաւոր-բարբոյական պահանջներին, հասարակական-ընտանեկան դործունէութեանը:

4. Արագնում է սլայմանաժամերէ դուրս աշխատանքը (сверхуроч. раб.), դրան աղատելով աշխատաւորներին ֆիզիքական սլալարեւած ու անկանոն վատնումից եւ դրան մուկը տալով սերիշներին — դործազուրկ բանւորներին:

5. Բարձրացնում եւ կանոնաւորում է աշխատավարձը, սահմանելով նրա minimum-ը ամենապակաս չափը եւ ամեն կերպ աջակցելով ներկած անդամներին, որպէս զի նրանք ստիպւած չլինեն պակաս վարձով աշխատել:

6. Արոնում եւ մատակարարում է դործիր անդործ անդամներին կամ նիւթակած օժանդակութիւն է հասցնում նրանց:

7. Բարւոքում է դործարանների, արհեստանոցների առողջապահական վիճակը, այդ մասին պատշաճաւոր պահանջներ դնելով դործարանատէրերի, կապիտալիստների առաջ:

8. Չրի իրաւաբանական եւ բժշկական օգնութիւն է հասցնում թէ իր անդամներին եւ թէ նրանց ընտանիքներին, այդպիսով աղատելով նրանց շատ անարդարութիւններից ու դժբաղդութիւններից:



9. Անգործութեան կամ մի այլ դժբաղդութեան ժամանակ փոխառութիւն ու նպաստ է տալիս իր անդամներին, որով եւ ազատում է նրանց վաշխառուների ազահ ճիրաններից եւ դանազան սրտահարներից:

10. Նպաստում է իր անդամների մշտաւոր աւաջադիմութեանը, առանձին դասընթացներ ու գրադարաններ Հիմնելով, յատուկ դասախօսութիւններ կազմակերպելով, մատչելի դրքոյկներ ու թերթեր հրատարակելով:

11. Հրատարակում ու դեկավարում է է դանազան դործադուլներ, բօյկօտ կամ լիբել դուտ անտեսական կամ քաղաքական նպատակով, հարկաւոր դէսլքում նիւթական օգնութիւն հասցնելով գործադուլաւորներին:

12. Նպաստում է քաղաքական այն կուսակցութեանը, որը իր ծրագրով ու դործունէութեամբ համապատասխանում է միութեան անդամների մեծամասնութեան շահերին ու համադմունքներին:

Ահա այդքան լայն ու բազմակողմանի են արհեստակցական միութեան նպատակները եւ նրանք բոլորն էլ կիրականան, եթէ միայն աշխատաւորները գիտակցօրէն համախմբւեն այդպիսի կազմակերպութեան շուրջը եւ ոչ մի եռանդ չխնայեն նրա զարգացման համար:

— Մէկը բոլորի համար, բոլորը մէկի հա-



մար—այդ պէտք է լինի բոլոր աշխատաւորներին նշանաբանը:

Իսկ այդ նշանաբանը իրադործելու համար նրանք օր առաջ պէտք է կազմակերպեն արհեստակցական միութիւններ:

Ե. Թ.

### Գ Ո Ր Ծ Ա Գ Ո Ւ Լ

Գործադուլ կոչուում է այն, երբ աշխատաւորները միասին դադարեցնում են իրանց աշխատանքը, դնելով որոշ պահանջներ. ուրիշ խօսքով ասած դործադուլը աշխատաւորների ձեռքում մի միջոց է կապիտալիստների դէմ կուռելու համար:

Կուռի այդ միջոցը լայն դործածութիւն է ստացել վերջին ժամանակներս կապիտալիզմի զարգացման հետ միասին:

Քայց նա յայտնի էր եւ հին ժամանակներում: Գեռ 1490 թ. Քրիստոսից առաջ Եգիպտոսում հրեայ բանւորները գործադուլ արին, երբ նրանց ստիպում էին աղիւմներ շինել առանց ծղօաի:

Պելլօսլոնեսեան սլատերադմի ժամանակ 20,000 ստրուկներ գործադուլ արին հանքատեղերում եւ սկսեցին կոտորել իրանց թշխանաւորներին ու աւերել երկիրը:

Հին Հռօմում գործադուլներ աւելի յաճախ էին պատահում:

Մեջին դարերում գործադուլի դիմում էին գլխաւորապէս արհեստաւորների աշակերտներն ու բանւորները:

Իսկ ժամանակակից մտքով գործադուլները սկսուում են 19-րդ դարից:

Սկզբներում գործադուլները երեւի ամեն տեղ էլ հալածւած են եղել միայն երկար ջանքերից յետոյ աշխատաւոր դասակարգն քաղաքակիրթ երկիրներում ազատ իրաւունք է ստացել, գործադուլի դիմելու երբ որ կամենայ:

Այդպիսի իրաւունքը օրէնքով թոյլատրւած է՝ Անգլիայում — 1824 թ., Ֆրանսիայում — 1864 թ., Բելգիայում — 1866 թ., Գերմանիայում — 1869 թ., Իտալիայում — 1890 թ. Իսկ մեղանում — Ռուսաստանում դեռ այդ իրաւունքը չկայ, դեռ իշխանութիւնը հալածում է գործադուլաւորներին եւ նոյն իսկ բանտի ու արսորի ենթարկում:

Սակայն չնայելով բաղմազան ճնշումներին ու հալածանքներին, աշխատաւոր դասակարգը յետ չէ կանգնում այդ միջոցի գործադրութիւնից:

Այդքան անհրաժեշտութիւն է ներկայացնում գործադուլը աշխատաւորների համար իբրեւ մաքառման մի դէնք:

Քաղաքակիրթ երկիրների, մանաւանդ Անգլիայի բանւորների անցեալը պերճախօս



ապացոյց է. թէ նրբան օգտակար, նրբան բարերար հետեւանք են ունենում գործադուլներն ընդհանուր առմամբ:

Բայց աջոգուլիեան համար անհրաժեշտ է, որ առաջադրած պահանջները լինեն արդար եւ հասունացած, որ գործադուլ յայտարարող աշխատաւորները լինեն կազմակերպուած եւ նախապատրաստուած:

Առանց այդ պայմանների գործադուլը կարող է վիժել եւ հիասթափում առաջ բերել:

Գործադուլները լինում են երկու տեսակ. —

1) Տնտեսական, երբ աշխատաւորները իրանց դրուլիւնը բարւոքելու համար դընում են որոշ տնտեսական պահանջներ, օրինակ օրավարձի յաւելում, աշխատատեղի կրճատում եւ այլն:

2) Քաղաքական, երբ գործադուլ է յայտարարուում քաղաքական իբաւունքներ ձեռք բերելու համար կամ նոյնանման հարցերի առիթով որ եւ է մաստայական բողոք արտայայտելու նպատակով:

Այդ ձեւի գործադուլներից ամենամեծն ու ամենանշանաւորը կարող է համարուել անցեալ 1905 թ. հոկտեմբերեան ընդհանուր քաղաքական գործադուլը Ռուսաստանում:

Այժմ մեզ շրջապատող միջնուորտն այնքան մուսուլ է, պայմաններն այնքան վո-

որհալի, որ իւրաքանչիւր քայլափոխում  
այս ու այն վայրում կամ ամեն տեղ միա-  
նին կարող է բռնկել դործադուլ:

Բայց որպէս զի նա աջող ելք ունենայ  
անհրաժեշտ է օր առաջ կանոնաւոր կադ-  
մակերսուլթիւններ առաջացնել բանւորական  
շարքերում:

---

Ի՞նչ է «ԲՅԿՕՏԸ»

1.

Հասարակական ընթացիկ կեանքի յա-  
տուան հոսանքները, անարդարութեան ու  
անհաւասարութեան համատարած հետե-  
ւանքները օրէցօր աւելի ու աւելի սուր կեր-  
պարանք են տալիս դասակարգային մրցմանը,  
ասպարէզ քաշելով կռւի նոր ձեւեր, մա-  
քառման նոր միջոցներ:

Ահա այդ միջոցներից է նաեւ բօյկօտը,  
որը վերջին ժամանակներս այնքան դործա-  
ծական, այնքան ժողովրդական է դարձել  
մեզանում:

Սակայն նորութիւն չէ ներկայացնում  
բօյկօտը իբրեւ կռւի ու բողոքի միջոց,  
քեռ տասնեակ տարիներ ու ամբողջ դարեր  
առաջ նա դործադուլ է զանազան երկիւ-  
ներում, զանազան ձեւերով ու չափերով:



Այն, բոլիօտի դադարիսրը դարաւոր  
պատմութիւնն ունի, բայց նա իր անունը  
ու ժամանակակից նշանակութիւնը ստացել է  
միայն 1880 թւականից Իրլանդիայի յայտնի  
հասարակական դործիչ Պարնելի շնորհիւ:

Ահա թէ ինչպէս.

— Կալւածատէրերի, կապալառուներէ  
անչափ-անսահման շահագործումը Իրլան-  
դիայում մի ծանր լուծ էր դրել աշխատա-  
ւոր դիւղացիութեան վրին: Նա տառապում  
էր կարիքների բեռից, նա հեծում էր օ-  
րէցօր ծանրացող այդ լծի տակ, եւ ահա  
այդ տառապանքն ու լուծը ծնունդ են տա-  
լիս մասսայական բողոքի:

Կազմակերպւում է, կանոնաւոր հիմ-  
քերի վրայ է դրւում դիւղացիական շար-  
ժումը, որի ղեկավարն է դառնում Պարնելը:

Ահա այդպիսի բնութագրման ու մա-  
քաւման վառ օրերին — (1880 թ. սեպտեմբ.)  
տեղի է ունենում դիւղացիների մի ժողով  
Էննիսում: Քննութեան է դրւում դիւղացի-  
ների վերաբերմունքը դէպի շահագործող  
կալւածատէրերը ...

Ինչ անել այն մարդուն, հարցնում է  
Պարնելը դիւղացիներից, որը նորից կապալով  
է վերցնում մի կալւածք, որտեղից հեռա-  
ցրել են նախկին կապալառուին:

Քնդակահար անել, բացականչում է  
բաղմութիւնը:

— Ո՛չ, պատասխանում է Պարնելը, կայ



ուելելի մարդավայել միջոց՝ սէտք է կարել յարաբերութիւնները այդպիսի մարդու հետ եւ խոյս տալ նրանից իբրեւ մի բորոտից:

Եւ դորժադրել է սկսուում առաջարկած միջոցը ոչ միայն այնպիսի կապալաուու գիւղացիներին, այլեւ ուրիշների վերաբերմամբ:

Իրլանդիայի Մայօ կամսութեան կալաւածքների կառավարիչը չափազանց դաժանօրէն էր վարուում գիւղացիների հետ: Նա եւ շահագործում էր եւ տանջում եւ տուգանքների ենթարկում խղճուկ աշխատաւորներին՝ գիւղացիներին: Գժդոհութիւնը աճում էր օրէցօր. ոչ միայն տեղացիները, այլեւ շրջակայքի բնակիչները միայն ատելութիւն էին արտայայտում դէպի այդ դաժան մարդը: Սակայն դաժան պլատօնական չէր դա, այլ Պալմերի առաջարկած ձեւով մի կենդանի բողոք:

Կապալաուուները միմեանց յետեւից թողին այդ կալաւածքը եւ հեռացան: Գաշտ ու մարդադեռին անմշակ մնաց: Ամբողջ տընտեսութիւնը քայքայւեց, ծառաները հրաժարւեցին ծառայելուց: Կառասպանները չէին ուզում ատելի կառավարչին մի որ եւ է տեղ տանել, հիւրանոցները սենեակ չէին տալիս, ծանօթները չէին բարեւում — մի խօսքով շահագործող կառավարիչը կրում էր իր ագահութեան սլափօքը ամենալայն չափերով: Նա հալածական էր բառի բուն մտքով՝ ա-



մենքից ատլած, արհամարհւած հալածականս  
եւ այդպիսի դրութիւնից ստիպւած նա  
թողնում է իր հայրենիքը եւ վախչում  
Ամերիկա:

Բոյկոս էր թշուառ հալածականի ազդա-  
նունը, ուստի եւ այդ խօսքը լայն ժողո-  
վրդականութիւն է ստանում իր հետ կապ-  
ւած պատմութեան շնորհիւ եւ դառնում է  
խորհրդանշան այդպիսի անտեսական-քա-  
ղաքական բողոքի:

Բոյկոտ, բոյկոտ — հնչում է պատմու-  
թիւնը բերնից-բերան, անցնում է երկրից-  
երկիր եւ այդպիսով մի նոր ճանապարհ բաց  
անում աշխատաւոր մասսայի առաջ՝ իր շա-  
հերն ու իրաւունքները սաշտսպանելու հա-  
մար:

Ահա այդպէս է եղել բոյկոտի ծնունդը՝  
Այժմ տեսնենք, թէ ինչ է նրա էութիւնը  
եւ ինչպէս է դործադրուում:

## II.

Բոյկոտը իբրեւ բողոքի ու մարտման  
միջոց ծառայում է երկու նպատակի՝ տըն-  
տեսական եւ քաղաքական:

Թէեւ շատ անգամ այդպիսի բողոքի  
դիմում են թէ առանձին անհատները եւ  
թէ ամբողջ ժողովուրդը, բայց եւ այնպէս  
բոյկոտը մարտուման միջոց է գլխաւորապէս  
աշխատաւոր դատակարգի համար:

— «Բօյկօտը, ասում է սրօֆ. Օզերովը<sup>\*)</sup>, միջոց է կազմակերպւած աշխատաւոր դասակարգի կռւի, ընդդէմ արդիւնագործողների: Աշխատաւորները յայտարարում են, որ որոշ կազմակերպութեան անդամները չեն պէտք է դնեն այս կամ այն արդիւնագործողի ապրանքները, օրինակ չեն պէտք է դնեն որոշ ձեւի գլխարկներ, եթէ բոյկօտը ուղղւած է գլխարկների դործարանատիրոջ դէմ. չեն պէտք է գործածեն որոշ դործարանի սիգարները, պապիրօսները, չեն պէտք է խմեն այս կամ այն գարեջուրը, չեն պէտք է այցելեն այնպիսի սրճարաններ, քանատօրաններ, որտեղ ստացւում են աշխատաւոր դասակարգի շահերին թշնամի թերթեր եւ այլն եւ այլն»:

Բայց այդ բոլորը վերաբերում է այսպէս ասած սպառողական շրջանին, Բացի դրանից շատ անգամ վնասում է եւ այնպիսի բոյկօտ, որը ոչ մի կապ չունենալով ապրանքների հետ, արգելք է դնում այս կամ այն դործարանի աշխատանքի վրայ, այսինքն արգելում է բանւորներին աշխատել այդտեղ:

Բոյկօտի այդ ձեւը, որ գերմանիայում յայտնի է «Sperrre» անունով, այնքան ազ-

---

<sup>\*)</sup> Проф. Н. Озеровъ; «Изъ жизни труда» кр. 258.



դու է, որ շատ յաճախ գործարանատէ  
ստիպւած է լինում զիջանել եւ ընդուն  
իր բանւորների առաջարկած սլայմանները

Ինչպէս տեսնում եսք, այդպիսի բ  
կօտը դառնում է օժանդակիչ արդէն յա  
տարարած գործադուլին: Այսպէս օրինա  
մի որ եւ է գործարանում բանւորները որ  
սահանջներ դնելով եւ գործարանատիրոջ  
բաւարարութիւն չը ստանայով, գործադու  
են յայտարարում: Այդ միեւնոյն ժամանա  
բանւորական կազմակերպութիւնը բոյկոտ  
է ենթարկում նոյն գործարանը, այսինք  
սպառնում է բարոյական պատժի ենթար  
կել — կազմակերպութեան անդամակցութիւ  
նից հրաժարեցնել թէ գործադուլը խախ  
տողներին՝ «շտրէյկ բրեխերներին» եւ թէ  
կողմնակի բանւորներին, որոնք կը համա  
ձայնեն փոխարինել գործադուլ անողներին:

Կարելի է, ի հարկէ, բոյկոտ յայտա  
րարել եւ առանց գործադուլի: Այսպէս  
օրինակ, եթէ մի որ եւ է գործարանատէր  
անտեղի ու անարդար կերպով արձակում է  
մի կամ մի քանի բանւորների, այդ ժա  
մանակ նրա ընկերները կարող են բոյկոտ  
յայտարարել բաց մնացած տեղերի վերա  
բերմամբ, որպէս զի ոչ ոք չը համարձակել  
գրաւել:

Եթէ այդ միջոցը չազդէ գործարանա  
տիրոջ վրայ, այն ժամանակ կարելի է դի  
մել աւելի ազդու բողոքի՝ գործադուլի:



Բոլոր դէպքերում էլ բոյկոտը աւելի  
պարզապէս դարձնելու նպատակով կարելի է  
լինել նաեւ սպասողական բոյկոտին, ար-  
հեստագործական համապատասխան ապրանքների  
ու մթերքների գործածութեան վրայ, ինչ-  
պէս նաեւ բարոյական բոյկոտի, խզելով  
արարքերութիւնները աշխատակորների ար-  
արքայի սահմանները չը կատարող գործարա-  
տանքները հետ:

Այսպէս ուրեմն բոյկոտը մի հիանալի  
միջոց է աշխատակոր տարրերի ձեռքում  
բերնոց անտեսական շահերը պաշտպանելու  
համար եւ նա գրեթէ միշտ էլ աջող հե-  
տեւանք կունենայ, եթէ միայն աշխատա-  
կորները նախօրօք լաւ կազմակերպւած լի-  
նեն եւ միշտ հետեւեն մի նշանաբանի.

— Մէկը բոլորի համար, բոլորը մէկի  
համար:

Բայց ինչպէս վերելում ասացինք, բոյ-  
կոտը ծառայում է ոչ միայն տնտեսական,  
այլ նաեւ քաղաքական նպատակների: Այս  
բերկորդ դէպքում նրա դերն ու ազդե-  
ցութիւնը ոչ պակաս նշանակող է, քան ա-  
ւաջին դէպքում:

Իբրեւ քաղաքական միջոց բոյկոտը կա-  
րող է ասպարէզ դալ կամ ամբողջ ժողո-  
վրդի ազատագրութեան հարցում կամ նրա  
հրաւրներին ու որոշ յեղափոխական հո-  
սանքների պաշտպանութեան ժամանակ:

Պարզ է ուրեմն, որ այդպիսի հանգա-



մանքներում, նա կարող է ուղղւած լինել  
կամ ամբողջ կառավարութեան՝ իշխող բն  
ժիւնի դէմ, կամ նրա որ եւ է կարգադրու  
թեան ու պաշտօնեաների դէմ:

Ե. Թոփչեան.

Լ Ե Յ Ե Լ

Յացի դործագուելից ու բոյկոտից աշխա  
տաւոր դասակարգը ունի նաեւ մի ուրիշ մի  
ջոց իր շահերն ու իրաւունքները պաշտպա  
նելու եւ հարստահարիչ դասակարգի վրա  
որոշ ազդեցութիւն անելու համար.

Այդ միջոցի անունն է Լեքել.

— Լեքելը, ասում է ամերիկացի հեղի  
նակ Միտչելը, ձեւափոխւած բոյկոտ է. այ  
սինքն բոյկոտի միջոցով մասնանիշ է աք  
ւում այն դործարանը, արհեստանոցը կամ  
մարդը, որի հետ չէ կարելի դործ ունենալ  
իսկ լեքելը ընդհակառակը որոշում է այն  
ապրանքները, որոնցից օգտուել կարելի է»:

Լեքելը իսկապէս մի նշան է, որ դրոշ  
մում կամ կայնում է այս կամ այն ապ  
րանքի վրա՝ սպառողների առանձին ուշա  
դրութիւնը հրաւիրելու համար.

Այսպէս օրինակ, եթէ մի որ եւ է դոր  
ծարանատէր կատարում է իր բանւորների  
բոլոր պահանջները՝ ընդունում է օրական

ութժամեայ աշխատանք, բաւարարութիւն է տալիս նիւթական, առողջապահական եւ այլ կարիքներին. այդ դէպքում բանւորները կարող են իրանց կողմից մի որոշ նշան դնել արտադրած ապրանքի վրայ: Սպառող հասարակութիւնը նոյնանման ապրանքների շարքում, եթէ չկան ուրիշ առաւելութիւններ ունեցողները, անշուշտ գերադասութիւն կը տայ յիշեալ նշանը—լեքելը կրող ապրանքին: Այդպիսով միւս գործարանատէրը բտիպւած կլինեն նոյնպէս բաւարարութիւն տալ իրանց բանւորներին, որպէս զի լեքել ստանան եւ շուկայում մրցել կարողանան:

Պարզ է ի հարկէ, որ ինչպէս գործադուլից եւ բոյկոտից, նոյնպէս եւ լեքելից նպատակայարմար ձեւով օգտւելու համար աշխատաւոր դասակարգը պէտք է կազմակերպւած լինի: Օրինակ արհեստակցական միութիւնները հեշտութեամբ կարող են գործադրել լեքել:

Ենթադրենք, թէ Թիփլիսի ծխախոտագործարանների բանւորների արհեստակցական միութիւնը որոշ պահանջներ է դրել, որոնց բաւարարութիւն է տալիս միայն մի գործարանատէրը: Այդ դէպքում միութիւնը կարող է այդ գործարանի արտադրած ծխախոտի ու պապիրոսների վրայ լեքել դնել, յատուկ թղթեր կայցնելով կամ ւրագրութեան միջոցով յայտարարելով թէ



յանձնարարում է դործածել այս ինչ դործարանի ծխախոտը . . .

Այդպիսի նշանը կամ յայտարարութիւնը կդառնայ մի բեկլամ դործարանատիրոջ համար, որ մեծ նշանակութիւն ունի մրցման տեսակէտից:

Լեբելը իր ծնունդը ստացել է Ամերիկայում եւ այժմ էլ ամենից շատ այնտեղ է դործադրւում: Առաջին անգամ լեբելը դործադրւել է 1874 թ. Ամերիկայի Միացեալ նահանգներում հետեւեալ առիթով: Այն ժամանակ, երբ ահադին քանակութեամբ չինացի բանւորներ — կուլիներ գաղթում են Ամերիկա եւ դրանով պատճառ դառնում օրավարձի պակասեցման, սիգար շինող սպիտակամորթ բանւորները իբրեւ այդ հոսանքի դէմ մարտաւելու մի միջոց իրանց պատրաստած սիգարների վրա սպիտակ նշաններ են կայցնում եւ կոչ անում հասարակութեանը այդ սիգարները դործածելու:

Եւ նշանը — լեբելը ունենում է իր ազդեցութիւնը: Գործարանատէրերից շատերը արձակում են չինացի բանւորներին, որպէս զի իրանց ապրանքն էլ լեբելի արժանանայ:

Հետեւեալ — 1875 թ. Լականին Սեն Լուի սիգար շինող կազմակերպւած բանւորները կարմիր դոյնի լեբել նշանակեցին սիգարների համար, որպէս զի դրանով ստիպեն միւս բանւորներին էլ կազմակերպւել: Այս




**Քարիկի Ախուր**

(տես էջ. 219)

«Հայաստան»

1907 թ.





դէպքում եւ լեբելը աջողութիւն ունեցաւ  
եւ դրանից յիտոյ տարէցաւ աւելի ու  
աւելի լայն գործածութիւն ստացաւ:

Սիգար շինող բանւորների միութիւնը  
1880 թ. բաց է թողել մէկ ու կէս միլիոն  
լեբել, իսկ 1900 թ. 22 միլիոն:

Գլխարկ շինող բանւորների միութիւնը  
Գլխարկների համար լեբել սահմանել է 1885  
թ. եւ միայն 1897 թ. արդէն բաց է թո-  
ղել 115 լեբել:

Լեբելի սկզբունքը Ամերիկայում այն-  
քան լայն համակրանք եւ վայելում ունի,  
որ կազմակերպւել են կանանց յատուկ «լի-  
դաներ», որոնց նպատակն է նպաստել լե-  
բելի աջողութեանը:

Լեբելի գործածութեանը վաղուց արդէն  
Ամերիկայի անցել է Եւրոպա եւ կամայ-  
կամայ տարածւում է:

Եթէ այդքի առաջ ունենանք, որ առ-  
հասարակ ապրանքներ սպառող հասարա-  
կութեան ամենամեծ մասը աշխատաւորներն  
են կազմում, այն ժամանակ հասկանալի կը  
մնի, թէ լեբելը որքան ազդու դէնք է նը-  
թանց ձեռքում եթէ միայն կազմակերպւած  
են:

Այն, աշխատաւորների համար գործա-  
դուլը, բոյկոտը եւ լեբելը չափազանց դո-  
րեղ դէնքեր են:

Բայց այդ դէնքերը աջողութիւն կունե-  
նան միայն կազմակերպւած ձեռքերում:



Աշխատաւորներ, մի մուսնաք այդ ճը՛ մարտութիւնը եւ օր առաջ կաղմակերտւեցէր:

Ս. Թ.

ԱՇԽԱՏԱՆԻՒՅԻ ՏՕՆԸ\*)

Աշխատանքն է՛ մարդկային քրտնաթոր աշխատանքը, որ 1889 թւականից սկսած իւրաքանչիւր տարի տօնում է մայիսի մէկը, իբրեւ մի նշանացոյց իր տարած յաղթանակների, իբրեւ մի ազդու նշան, որ կանչում է բոլոր երկրների բանւորներին համերաշխութեամբ հնչեցնելու իրենց արդար բողոքը տիրող կարգերի եւ շահադուրծող տարրերի դէմ:

Ամերիկայի Նեն Լուի քաղաքի բանւորները առաջին անգամ տօնեցին մայիսի 1-ը 1886 թ. իբրեւ նշան իրանց տարած յաղթութեան: Այդ նրանք նոյնը կրկնեցին հեռեւեալ տարիներն էլ՝ 1889 թ. Պարիզում դուրսուրած սօցիալիստները կօնգրեսը որոշեց մայիսի մէկը դարձնել աշխատանքի տօն և ահա այդ ժամանակահանից աշխատաւորները իւրաքանչիւր տարի տօնում են այդ օրը:

Աշխատանքն է, որ կաթիլ-կաթիլ քա-  
նելով անթիւ-անհամար մարդ արարածների  
արիւնքը, նրանով ցողում է բնու-  
թեան հարստութիւնները, անշունչ-անկեն-  
դեան նիւթերը եւ նրանց կեանք ու արժէք  
տալիս, գործունէութեան պէտքեւան դար-  
ձնում:

Աշխատանքն է, որ տիրող անարդար ու  
բռնակալական կարգերի շնորհիւ մի կողմից  
կռում-կոփում է կապիտալիզմի հոսանքը,  
եսկ միւս կողմից սօցիալիզմի հակահոսանքը,  
որը տապալելու է առաջինի դերիշխանու-  
թիւնը եւ նրա տեղ հաստատելու արդարու-  
թեան, հաւասարութեան ու ազատութեան  
սկզբունքները, անհատին տէր դարձնելով իր  
ամբողջ վաստակի՝ արիւն-քրտինքի պտուղ-  
ների:

Եւ քանի որ մէկ է աշխատաւոր դաս-  
կարգի վզին ծանրացած լուծը ամեն տեղ,  
քանի որ միասեռակ են այդ լծին այժ ու  
թափ տւող պատճառները, գործօնները, ուս-  
տի դիմադրական հոսանքն էլ մի ուղիով է  
ընթանալու իր կէտ նպատակին հասնելու հա-  
մար, մի դրօշակի տակ է քաշելու բոլոր  
ձնշւած, հարստահարած տարրերին:

Ահա հէնց այդ պատճառով մայիսի մէկը  
դարձել է միջազգային մի օտն, որ տարէց  
տարի աւելի ու աւելի արժարժեղով ազգերի  
եղբայրութեան, աշխատաւորների միութեան  
ու գործակցութեան փրկարար դադափարնե-



ըր, համաշխարհային, համամարդկային նշանակութիւնն է ստանում:

Եւրօպայից մինչեւ Ամերիկա, Ասիա եւ Աւստրալիա տօնուում է այդ օրը, իբրեւ աշխատանքի տօնը, իբրեւ մի հուժկու բողոքիչ խոսող, արտօնեալ ու շահագործող դասակարգերի դէմ:

Եւ այդ բողոքող տօնը իր հովանաւորած ջլուտ ձեռքերի, կարմիր դրօշակների միջոց բարձրացնում է ապագայի հրապուրիչ հեռանկարը եւ նրա վրայ դրոշմում երեւութանեակի, միլիցիայի եւ ժողովրդասպետութեան ցայտուն պահանջները:

Ութ ժամ աշխատանք, ութ ժամ ազատ հանգստութիւն, ութ ժամ քուն—այդ է մարդկային կեանքի մի օրւայ ամենախելացի բնական, առողջարար ու արդար ստորաբաժանումը. ուստի եւ այդ պահանջն են հրնչեցնում առթիւ անհամար աշխատաւորները աշխարհի բոլոր ծայրերից: Եւ որպէսզի մատաղ սերունդը ազատ մնայ շահագործման ճիրաններից, որպէսզի նա կարողանայ իր կրթութիւնն ու զարգացումը ցանկալի միւստոտտտիճանի հասցնել, այդ պահանջն միացած է մի յաւելում եւս՝ արգելել փոքրահասակների աշխատանքը մինչեւ 14 տարեկան հասակը:

Ռա միջադրային տօնի առաջին պահանջն է:

Իւրաքանչիւր երկրի բոլոր գործերի,



Յալէս նաեւ պաշտպանութեան ու կարգա-  
պահութեան վերաբերմամբ միայն բուն ժո-  
ղովուրդն է, որ կարող է իր սեփական  
անքերով ու ազատ իրաւունքներով ցանկալի  
մեծակ ստեղծել: Ահա հէնց այդ պատճա-  
ռով աշխատաւոր դիտակից մասան, ամեն  
որքէ իր բողոքն է յայտնում աւերիչ միլի-  
տարիզմի, աշխարհակալական քաղաքակա-  
նութեան եւ դրանից հետեւանք կաղմուղ  
արիւնահեղ պատերազմների դէմ, որոնք  
ծնում են ժողովրդի անտեսական նիւթերը  
եւ սրի ու զնդակի զոհ դարձնում ազգա-  
նակութեան ծաղիկ ոյժերը:

Տապալել ազգերի պառակտմանն ու թըշ-  
ւամանքին նպաստող իւրաքանչիւր երկրի  
ներքին զարգացումն ու քաղաքակրթութիւնը  
կատեցնող ռազմական այդ կարգերը եւ դրա  
հետը հաստատել ժողովրդական միլիցիա—  
պահա աշխատանքի տօնի երկրորդ կոչը:

Սակայն հասարակական ընթացիկ կեանքը  
իր բազմերանգ հոսանքներով, իր բազմազան  
պահանջներով միշտ էլ կաթօտ է մի ընդհա-  
նուր դեկալարող մարմնի, որը հեռու մնա-  
լով կողմնակի ազդեցութիւններից, միշտ նշա-  
նաբան ունենալով արդարութեան ու հաւա-  
նաբուծեան սկզբունքները, ուղղութիւն ու  
արձագանք տայ երկրի ընդհանուր դործե-  
րին, հասունացած կարիքներին, իսկ այդ-  
պիսի մարմին ստեղծել կարող է միայն եւ  
միայն ինքը ժողովուրդը իր բոլոր շերտերով:



Ահա հէնց այդ պատճառով աշխատաւոր  
դասակարգը ձգտում է ժողովրդասպետութեան,  
պահանջում է ընդհանուր, հաւասար,  
գաղտնի եւ ուղղակի ձայնաւոյնութեան  
սկզբունքով ընտրեալ ժողովրդական ներկայ  
յացուցիչներ ու ղեկավարներ հասարակական  
բոլոր գործերում, բոլոր ասպարէզներում:

Եւ այդ երեք հիմնական պահանջները  
իրար հետ շաղկապեալ արդէն դարձել են  
նշանարան միջազգային մեծ բողոքի՝ աշխա-  
տանքի տօնի, որ կատարւում է իւրաքանչիւր  
տարի մայիսի 1-ին եւ տեղի ու ժամանակէ  
համեմատ՝ իր հետ միացնելով ուրիշ ընթացիկ  
հարցեր ու պահանջներ եւ երկրից—երկիր  
հասցնելով իր հուժկու արձագանքները, նո-  
րից ու նորից յիշեցնում է մարդկութեան:

— Թէ նա գալիս է—աշխատանքի արդաւ  
դատաւճիւր, որ վերջ ի վերջոյ պիտի ջախ-  
ջախէ անարդարութեան ու անհաւասարու-  
թեան շղթաները:

— Թէ նա հնչում է—աղգերի եղբայրու-  
թեան, աշխատաւոր մասսաների միութեան  
կոչը, որ աւելի ու աւելի պիտի շաղկապէ  
ճնշւածներին ճնշողների դէմ, հարստահար-  
ւածներին—հարստահարողների դէմ:

— Թէ բուրժուական կարգերի մռայլ հո-  
րիզօնում արդէն երեւում են ապագայի վառ  
արշալոյսի առաջին ճաճանչները, որ պիտի

որեն բաւուցեան մութ ամպերը եւ ամեն  
տղմ սփռեն լոյս ու ազատութիւն:

Ե. Թովչեան.

---

Կ Ե Ն Ս Ա Ռ Ր Ա Կ Ա Ն

---

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ  
(1859—1905)

Նա ծնւեց 1859 թ. Կովկասի մի աւա-  
նում, վերին Ադուլիսում, այսինքն Հին Ա-  
րարատեան նահանգում՝ լի պատմական յի-  
շատակներով. Մասիսի դիմաց, Արաքսի մօտ,  
որ նահապետն է հայկական դետերի.

Նա մանկութիւնն անցկացրեց հայրենի  
ջրերի եւ առասպելական լեռների միջեւ.

Իւրաքանչիւր դիւր, ինչպէս Ադուլիսը,  
եւրոպական կրթութեան կենտրոն էր. Քրիս-  
տափորի հայրը, երկրագործ, նրան տւեց  
տարրական ուսումնարան եւ երեխան դըր-  
ու՛մ սովորածը լրացնում էր ընտանիքի  
մէջ. կիսանահապետական բարձրի շրջա-  
նում: Երբ նա դարձաւ 11 տարեկան, տա-  
նեցիք մի մեծ որոշում կայացրին. — բաժան-  
ւել նրանից որպէս զի նա կարողանայ թիֆ-



լիզում միջնակարգ ուսում առնել, ճանապարհորդութիւնը երկար էր, տասն օր, որովհետեւ ոչ երկաթուղի կար, ոչ կառք: Եւ այս ուղեւորութիւնը հանդիսացաւ իւրեւ մի դէպք իր մերձաւորների եւ ողջ դիւղի համար, ինչպէս այն՝ երբ մէկը գնում է համալսարան կամ Եւրոպա, աւելի ազատ եւ աւելի քաղաքակիրթ:

Աշակերտ Թիֆլիզի ուսուցչական դըպրոցի՝ Բրիտանիոյ Մերայէլեանը շնորհիւ ինչոքեկան կազմի, որ բաց էր ամեն նոր գաղափարների եւ ամեն յանդուգն վճիռներէ առջեւ, յարեց ուսուսնորածիլ յեղափոխութեան եւ սօցիալիստական շարժման: Յետոյ երբ ձեռք բերեց աւարտման վկայական, վերագործաւ իր ծննդավայրը՝ որպէս դըպրոցական ուսուցիչ, եւ նոյն միջոցին՝ երբ ուսուցանում էր աշակերտներին տարրական դիտութիւններ, նա մասնակից էր անում այլ մարդկանց— իր ընկերներին եւ իրենից տաքիքաւորներին մյն գերդեցիկ մտքերին, որ ինքը իւրացրել էր, եւ այն օրւանից ահա սկսեց իր պթօպագանդը ժողովրդի մէջ:

Այդ միջոցին տեղի ունեցաւ մի ծանր դէպք: 1885-ին բիրտ ուսուցչուհի յաջորդեց նախկին համբերողութեանը, — առաջին անգամ ուսուս կառավարութիւնը փակեց բոլոր հայ դպրոցները եւ այսպիսով հաղարաւոր երեխաներ՝ տղայ-աղջիկ՝ զրկւեցին ուսումից: Անձնական փորձով դիտեմ թէ ինչ-



մանն վառ է ուսանելու տենչը հայ փոքրիկ-  
վերի մէջ, մասնաւանդ ժողովրդական խաւե-  
րում: Արուլիսի եւ այլ բազմաթիւ գիւղերի  
մերեխաները՝ զրկւած դպրոցից՝ արտասուք էին  
թափուլմ տանը եւ փողոցներում, իսկ դայ-  
նացած ընտանիքներն արդէն նշուք էին թա-  
փում ցարի բռնակալութեանը, Քրիստափոր  
Մեքայէլեանը խորապէս ցնցեց անցած-դար-  
ձածից, իր բոլոր տեսածից, եւ ինքը՝ որ  
ուսանական յեղափոխութեամբ էր տարւած,  
ամբողջապէս նւիրեց տառապող հայերի  
դատին:

Նա վճռեց նախ լրացնել իր ուսումը եւ  
դպրոցների փակումից յետոյ գնաց Մոսկւա,  
ուր նա նւիրեց յատկապէս քաղաքատնտե-  
սութեան եւ սօցիոլոգայի ուսումնասիրու-  
թեան եւ խելամուտ եղաւ մարքսիզմի բարձր  
դիւլէկտիկային: Միաժամանակ նա հիմնեց  
հայ ուսանողների մի շրջան, ուր բոլորը  
պատրաստուում էին ապագայ գործունէու-  
թեան եւ իր պարզութեամբ, վարդապետու-  
թիւնների լայնութեամբ եւ անընկճելի եռան-  
դով նա ձեռք բերեց իր ընկերների մէջ մի  
դիւրաւ ընդունելի եւ հաւանելի հեղինա-  
կութիւն: Նա վերադարձաւ Կովկաս 1888-ին,  
այն միջոցին, երբ խմորւում էր մտաւոր եւ  
յեղափոխական մի ուժիւն շարժում թիւր-  
քահայերի օգտին: Նա անմիջապէս նետեց  
այդ հոսանքի մէջ ու մի քանի ընկերների  
հետ յղացաւ միտք՝ հիմնելու մի մեծ կու-



սակցութիւն — շայ Երզափոխական Դաշնակցութիւնը, ունենալով իբրեւ օրդանի՝ «Գրօշակը»:

Տաս տարի շարունակ, Կովկասում, շրջապատւած ամեն տեսակ նեղութիւններով նա եղաւ Դաշնակցութեան հոգին: Առաջին անգամ բանտարկւելով Թիֆլիզ, աքսորւելով մի տարի Բեսարաբիա եւ կրկին բանտարկւելով Բագու 1895-ին, նա հայկական դատին նւիրեց այն բոլոր դադարները, որ ուսւս ստիկանութիւնը տալիս էր նրան՝ խուզարկութեան, բանտի եւ աքսորի միջեւ, Քաշքշուած եւ հալածւած տեղական իշխանութիւններէց, ընտանեկան ծանր բեռը վզին, նա նըւիրում էր սլոպադանդային ոչ միայն իր ժամանակն ու ուժերը, այլ եւ այն դրամական միջոցները, որ կարողանում էր ձեռք բերել լրագրական աշխատանքով:

Իր տունը՝ յերզափոխական օջախ էր, որ տեղից դուրս էին դալիս սլատէրի խօսքեր, ուր մարդիկ դալիս էին խորհուրդ հարցնելու՝ աղատօրէն ընտրւած պարագլխից, որը իր հերինակութեամբ պարտական էր ոչ թէ իրեն շնորհւած նւիրապետութեան, այլ դէպքինքը տաճած հանուր վստահութեան, մի տուն, որի դռները բաց էին բոլոր ընկերների համար, բոլորած ընդհանուր սեղանի շուրջը, ու որոնց հետ Քրիստափորը բաժանում էր իր ծածկը եւ համեստ քսակը: Ահա այն ժամանակից է, որ նա դարձաւ բոլոր



գիտակից հայերի համար «Մեր Քրիստա-  
փորը»:

Վրայ հասան 1895—1896-ի կոտորած-  
ները. ազգային այդ մեծ աղէտին հետեւեց  
յ ե տ ա շ ր ջ ու մ (ըէակսիօն) եւ ժողովրդի  
մի մասի, աւելի շէշտ ասած՝ ապահով եւ  
կեղեքուսներեց ազատ շրջանների անվստա-  
հուծիւնը՝ դէպի հայ յեղափոխականները:  
Քրիստափորը անյողդողդ մնաց, չը յու-  
սահատեց, Եւրոսական մեծ պետութիւննե-  
րի ամօթալի անդործութիւնը նրան դայրա-  
ցրին եւ տքտմեցրին. սակայն նա հասկացաւ  
միաժամանակ, որ այն անգիտութիւնը, որին  
մատնւած էին եւրոպական ժողովուրդները  
էրենց կառավարութիւնների շնորհիւ. թոյլ էր  
տալիս վերջիններին հեշտութեամբ շարունա-  
կելու էրենց ոճրալի անտարբերութիւնը, Նա  
հասկացաւ եւ ինչ, որ հայկական յեղափո-  
խութիւնը ինքը մենակ բաւական չէ եւ ոք  
բռնութեան դէմ ուղղած դիմադրութիւնը  
— մշտապէս անհրաժեշտ — չէ կարող դրական  
հետեւանքի հասցնել՝ առանց այն ժողովրդ-  
ների համակրութեան, որոնք աւելի ուժեղ  
են՝ քան հայ ժողովուրդը, թողնւած իր բախ-  
տին եւ իր անզօրութեան:

Ահա դրանից դրդւած՝ նա եկաւ Եւրո-  
պա, երկու երեք ընկերով, նւիրելու երկու  
առաքելութեան — ապահովել Յեղափոխական  
Դաշնակցութեան ապագան եւ հայկական  
դատի կողմը դրաւել Աւեմտեան երկրների



հասարակական կարծիքը, վատատեղեակ անցած — դարձածին: Առանձ հանդատի, առանց մի ըստէ յուսաբեկելու՝ նա աշխատեց այս երկու նպատակի համար եւ երբէք՝ հակառակ մասնակի անաջողութիւնների, հակառակ եւրոպական կառավարութիւնների նորագոյն ստորութիւններին, նա չը ընկճեց եւ չը վհատեց:

Գեռ ժամանակը չէ մանրամասն պատմելու, թէ ինչպէս նա պարտահառոյց եղաւ այն ծանր աշխատանքին, որ դրել էր իր առջեւ եւ ոչ էլ այն, թէ նրալիսի դւարթ հաւատով այդ մարդը — որ այնքանն վիշտ էր կրել եւ տեսել — դիմում էր՝ մի անգամ վըճիւ կայացրած՝ դէպի ահարկու փորձանքներ:

Իր ընկերներն ու Սօֆիայի ժողովուրդը մի փառահեղ թաղում սարքեցին բօլդարական մայրաքաղաքի մէջ. իսկ կովկասի աւաններում հայերը նրա յիշատակին նւիրեցին այնպիսի սգահանդէսներ, որպիսին չէ եղել ոչ մի պետական մարդու համար, եւ նա, որ երբէք չէր որոնել ամբօխի ծափերը, մըտաւ յաւիտենականութեան դիրկը՝ ուղեկցած համայն ժողովուրդի ողբով ...

Նա՛ մեռաւ Սօֆիայի մօտերը 1905 թ. ապրիլին, ողբերգական հանգամանքների մէջ:

Պիեռ Բիյար \*)

\*) Ցեւ «Յեղափոխականների մարերը» գիրքը:

Ո՞վ է՞ր ԳՐԻԵՏԱՊՈՐԸ.

«Թող ծածանւի ազատութեան  
դրօշակը. թող ժողովուրդը տես-  
նի նրա հմայքը, այն ժամանակ  
նրա պաշտպան հերոսներն էլ  
անպակաս կը լինեն . . .»

Գարիբալդի.

Հասարակական կեանքն այն եռուն հը-  
նոցն է, որ իր կրակոտ թափով առաջ է մը-  
ղում ժամանակի պահանջները եւ ձուլում  
ու ձեւակերպում է նրանց դործօնները:

Եւ այդ դործօնների շարքում շատ յա-  
ճախ աչքի ընկնող դեր են կատարում ա-  
ռանձին անհատները, եթէ նրանք ըմբռնել  
են ժամանակի ոգին, եթէ ունեն որոշ ի-  
դէալներ ու համոզմունքներ եւ գիտեն միշտ  
անյողդողդ, միշտ աներկիւղ առաջ տանել  
այդ համոզմունքների դրօշակը:

Անհատը հերոս է, երբ կարողանում է  
իր տաղանդի, իր տոկունութեան շնորհիւ  
բարձրանալ ընթացիկ կեանքի մակերեւոյթից  
եւ անձնազոհ ջանքերով հարթել դադաիա-  
բական հոսանքի ուղին, երբ իր մտքերով,  
համոզմունքներով ու դործունէութեամբ իր  
շուքն է դրաւում ամբողջ իմբեր ու հա-  
սարակական իսաւեր:



Մենք տեսնում ենք այդպիսի անհատ-  
հերոսների պատմութեան ամբողջ ընթաց-  
քում բայց նրանք առանձնապէս աչքի են  
ընկնում, ճնշած, կեղեքած ազգերի կեան-  
քում, երբ այդ կեանքը բռնութեան շղթա-  
ների միջից բաց է անում ազատութեան  
հանապարհը, երբ ծածոսնւում է յեղափո-  
խութեան կարմիր դրօշակը:

Ահա մի կարագեօրդիելից, որ ապրս-  
տամբ սերբերի գլուխն անցած արիւնոտ  
ջանքերով կարողանում է տապալել այնքան  
ծանր, այնքան ճնշող թիօրքական լուծը եւ  
նոր կեանք տալ ազատ Սերբիայի:

Ահա մի Իսլսիլանտի, որ իր դինակից  
խմբով թիւրքական սազմանն անցնելով բռ-  
նութեան այդ աշխարհում բարձր հնչե-  
ցնում է յոյն ժողովրդի ականջին.

Ազատութիւն կամ մահ ...

Եւ նրա այդ կոչը արձագանք է դտնում  
հազարաւոր սրտերում. նրա անձնադոհու-  
թիւնը նորանոր խմբեր է քաշում իր յե-  
տեւից եւ բաց անում նոր Յուլաստանի ա-  
զատութեան դռները ...

Ահա մի Մաճինի, Գարիբալդի, որ իրենց  
գործունէութեամբ այնքան ազդու զարկ են  
տալիս գեղերցիկ Իտալիայի ազատութեանն  
ու միութեանը:

Ահա վերջապէս մի կարաւելով, Ստեփան  
կարաջա, Հաջի Գիմիտը եւ ուրիշները, որ



իրենց կեանքն են զոհել արիւնոտ հայրենիքի,  
Յուզարիայի աղատագրութեան դործին,  
Եւ դրանքը բոլորը, բոլորը հերոսներ են՝  
աղատութեան մեծ դործի հերոսներ ...

Իսկ հայր, որ սերբերից, յոյներից ու  
բուլղարներից ոչ պակաս ճնշւած, կեղեքւած  
էր բռնութեան հարւածների տակ, դարեր  
շարունակ լռիկ-մնջիկ համբերելուց, արիւն  
արցունք թափելուց յետոյ նա եւս կանգնեց  
յեղափոխական կարմիր ճանապարհին եւ այդ-  
տեղ առաջ անցան նրա համոզւած դադա-  
տեղական ընտիր զաւակները, անցան՝ հա-  
յուլթեան արդար բողոքը բարձր հնչեցնելու,  
բռնութեան ու բարբարոսութեան դէմ խի-  
զախաբար կռիւ մղելու համար:

Հայկական նոր կեանքի, նոր հոտանքի  
հերոսներն էին՝ դրանք, որ իրենց յիտեւից  
Քաշուժ էին ամբողջ խմբեր, ճնշւած ժողո-  
վոցի աղատութեան ռահիբրաներ էին դը-  
ժանք, որ ամբողջ աշխարհի առաջ հնչեցնում  
էին հայկական արդար բողոքի ձայնը, որ  
միշտ եւ ամեն տեղ արժարժում էին սեփա-  
կան ոյժերով դործելու կարեւորութիւնը:

Եւ նրանից շատերն ընկան աղատութեան  
մեծ ճանապարհին, ընկան դեռ իրենց կէտ  
նպատակին չը հասած:

Ահա այդ ընկած հերոսներից է եւ Քը-  
րիստափորը — այն մարդը, որը իր ջինջ հո-



դով, խորին համազօնունքներով, անձնադր հոլթեամբ ու անկեղծութեամբ սիրելի է ընկերների շրջանում, յարդելի էր հասարակութեան ամենալայն խաւերում եւ ազդեցիկ էր էր փայտայած դործի ասպարէզում:

Նա դադարիարի մի մազնիս էր, որ դէս իրեն էր քաշում նորանոր սյժերի, քաշում որպէս զի նրանց էլ ցոյց տայ յեղափոխական կարմիր ծանապարհը, նրանց էլ կանգնեցնէր դադարաւական վեհ դրօշակի տակ ...

Նրա խօսքը մի ազդու դեղ էր վշտացած սրտերն ամօրելու, յուզած մտքերը խաղաղացնելու համար:

Նրա խորհուրդները, բացատրութիւնները մէկ-մէկ օղակ էին, որ շաղկապում էին նոր ընկերների, ծանօթների մտքերը եւ դրանցից ստեղծում համազւած դործիչներ:

Նա իր կեանքի նպատակն էր դարձրել ճնշւածների, հալածւածների արդար դատը:

Եւ այդ նպատակը քաշեց նրան հեռու երկիրներ, «օտար հորիզոնների» տակ, ուր նոյն գործն էր նրան դէշեր-ցերեկ զբաղեցնողը՝ նահատակող հայ ժողովրդի աղատութեան դործը:

Եւ իբրեւ քաջ զինւոր այդ դադարիարի նա ընկաւ իր գուրդուրած մեծ իրագործման կէս ծանապարհին-ընկաւ վաղաժամ-իբրեւ մի գոհ դաժան պատահարի:



Ա. Կ. Յակոբյանի Գրքեր  
(տես էջ. 224)

1907 թ.

Վ. Ե. Երևան





Սհա թէ ով էր Քրիստափորը, ահա թէ  
Լնչպիսի մահաւան տարեդարձն է լրացել այսօր:

Բնիւն, մեռաւ Քրիստափորը . . . Ոչ,  
դա ճիշտ չէ. այդպիսի անուշները չեն մեռ-  
նում, նրանց ամբողջ էութիւնը մի մարմնա-  
ցած դադափար է, իսկ ազատութեան դա-  
դափարը յարատեւ է, միշտ կենդանի . . .

Այն, անմոռանալի է Քրիստափորը, եւ  
նրա անուշը մի պատուաւոր տեղ կը դրաւ է  
հայկական նորագոյն պատմութեան էջե-  
րում . . .

Նրա փայլալայած դրօշակը դեռ ծածան-  
ւում է Գաշնակցութեան ձեռքին:

Նրա ոգին դեռ սաւառնում է ազա-  
տութեան լայն ճանապարհին եւ քաշում,  
առաջ մղում դադափարի դիմաւորներին:

Եւ այդ դիմաւորները կանցնեն ու կընկ-  
նեն նոյն ճանապարհին, մինչեւ որ դադա-  
փարը յաղթանակէ եւ վերջ դնէ հայի դա-  
րաւոր վշտին, Եւ առաջանքին:

Իսկ ով սիրում էր Քրիստափորին, ով  
յարգում է նրա յիշատակը—նա պինդ պէտք  
է պահէ նրա բարձրացրած դրօշակը, լայն  
պէտք է բաց անէ նրա ընդդէմ ճանա-  
պարհը եւ խտացնէ դադափարակիցների շար-  
քերը, որպէս զի օր առաջ իրականանայ ճըն-



շլաճների ազատութիւնը եւ թաղաւորէ հա-  
ւասարութեան սկզբունքը:

Այդ է պահանջում հայկական արեւ-  
նոտ իրականութիւնը. այդ կը լինի ամենա-  
մեծ յարգանքը անմուռանալի ֆրիստալիորի  
յիշատակին:

Ե. Թոփչեան.

---

Պ Ե Տ Օ

(Ալեքսանդր Պետրոսեան \*).

Ով էր այդ մարդը, որ այսօր ամէնուն  
շրթունքին վրան է, Այդեստանի հովասուն  
օջախներէն մինչեւ Ալեքսանդրապօլ, մինչեւ  
Թիֆլիզի ժխորալից փողոցները:

Վարժապետ մըն էր Պետօն, ոչ անոնցէ,  
որոնք բան մը կը սորվին բարեկեցութիւն  
ձեռք բերելու համար, որոնք ուսուցիչ սլատ-  
նէշ մը կը շինեն անջատուելու համար այն  
ժողովուրդէն որ, ծնաւ ու մեծցուց զինքը  
— ոչ, անոնցմէ չէր Պետօն . . .

Այդ համեստ վարժապետը, իր կոչումը  
կը դանէր ոչ թէ խաւարէն փախչելուն

---

\*) «Հայրենիք» 1906.

մէջ, այլ իր ունեցած ճրագը այդ խա-  
ւարին մօտեցնելու, գէթ անոր մէկ մասը  
փարատելուն մէջ ...

Բայց անոր կրակոտ ու նրբաղգած հո-  
գին ստեղծած չէր գիւրբերուն համար մի-  
այն. անոր աչքին առջիւ անձայր թշւառու-  
թեան գիւրբ մը կը բացւէր, այդ գիւրբը պէտք  
էր վերծանել, բանալ աչքը իր շրջապատող-  
էն ներս, գիտակից ընել ժողովուրդը իր ու-  
ժերուն, կիտակից ընել ժողովուրդը իր ու-  
ժերուն, եւ պատրաստել ան՝ կեանքի կռիւը  
մղելու արժանաւոր դէնքերով:

Եւ Պետոն որոշեց դպրոցը ձգել ու եր-  
թալ մեծ մանուկին՝ ամբոխին մէջ իր դաս-  
տիարակչի դերը կատարելու, 1890-ին ար-  
դէն յերգափոխական ասպարէզին վրայ էր  
ան. Սահայն այդ «ասպարէզը» սովորական  
ըմբռնումով՝ դահապոս չուաւ անոր բոլոր  
սրտին. Ապրիլ Աւետանդրապօլի Օսմանեան  
Հայաստան ըսած դժոխքի սահմաններուն  
վրայ, լսել ամէն օր, ամէն ժամ սահմանէն  
անդին ասորոզ գիւղացիին ողբն ու աղա-  
ղակը, տկանատես ըլլալ փախստական կիներ-  
ուն, որբերու եւ ծերերու սիրտ կտրտող,  
անձայր թշւառութեան—եւ նստիլ իր ասպ-  
հով «ասպարէզին» վրայ՝ Պետոի գործը չէր  
ատ:

Ու որոշեց այդ ասպարէզը երկիր տե-  
ղափոխել. Պետոն առաջինն էր ռուսահայ  
յերգափոխականներէն, որ մտաւ Օսմանեան  
Հայաստան ու մնաց հոն, մինչեւ իր մահը:



Պետօի քրածը զոհողութիւն էր բառին բուն նշանակութեամբ—իր ետեւը կը ճգէր աղքատ ծնողներ, եւ երկիր կը մանէր իջ յոյսը դրած օժանդակութեան խոստումներու վրայ միայն . . .

Յուսահատողներէն չէր սակայն. տարի մը մնալէ ետք Պետօն կը վերադառնայ Կովկաս, վասպուրականի պէտքերը բացատրելու եւ նոր օգնութիւն կազմակերպելու համար: Հոն կը յաջողի նոր սղեւորութիւն առաջ բերել, բայց եղած օգնութիւնները անբաւական էին զգացած պահանջները գոհացնելու:

«Պետօն տեսնում էր այդ ամէնը—կը դրէ անոր մտերիմներէն մէկը Ս. Զաւարեան—վրդովւում, հայհոյում մեղ բոլորիս, բայց էլի հաշտում, եւ վերջը վերադառնում պատըռտած հադուսաներով, խնայելով փոխնորդ շապիկ գնելն անգամ . . .

«Չէ որ մի շապիկը քսան փամփուշտ արժէ, հաշտում էր նա, ափսոս չէ զրկել այդ պաշարից, որ դուցէ մի հատ կեանք աղատէ . . .»

Իր «մարմնացեալ ոգեւորութեամբ», իր խօսակցութեան անկեղծութեամբ Պետօն շաա շուտ շահեցաւ համակրութիւն զինքը շրջապատողներուն մէջ, եւ առաջինը եղաւ նաեւ որ կրցաւ շահագրգռել Վանի իգական սեւը յեղափոխական դործին:

Անոր յեղափոխական աշակերտուհիներ-

Ե՛ն մէկը՝ «Վանուհի», խանդադատանքով լի տաղեր նւիրած է անոր յիշատակին:

«Պարսկաստանէն անցնելով ասում է նա. նա հասաւ Վան, գեղջուկի մը ցնցոտիներու մէջ փաթաթւած. երկար ու կեռ փայտ մը ձեռքին, տրեխներ սաներին, կեղտոտ քօլօղ մը դէլին եւ մուրացիկի ջանթա սւտերուն:

«Ոչ որ կրցաւ զինք ճանաչել իբրեւ օտարականի մը եւ ոչ որ կասկածեց անոր այդ խղճուկ արտաքինին վրայ, զի ուրիշ փորձեր եղած էին ...

«Թէեւ անծանօթ մեր վայրերուն ու բարքերուն, շուտով այնքան վարժւեցաւ, որ վանեցիէ մը զանազանել չէր կարելի: Քանի մը օրւայ մէջ թաղերը, տուներն ու մարդիկ ճանաչեց հեռուէն, զիրենք դիտեց, զննեց ու հասկացաւ:

«Գեղջուկի մը տարադի մէջ փաթաթւած ըլլալով՝ գեղջուկի նման ալ ապրեցաւ: Նոյն էր անոր համար, թէ ինչ կուտէր կամ ուր կը պառկէր, բաւական էր բան մը ուտէր կեանքը պահպանելու համար եւ վայր մը լինէր քնելու ու առթիւն օդուկելով իր մշտքերը սերմանէր:

«Ժամանակ մը հարկադրւեցաւ իր այնքան սիրած ու փայլիլայած Վան թողուլ եւ Բաղէշի կողմեր դնալ: Բայց բոլորովին խղել իր անձնական յարաբերութիւնը Վանէն, առ չէր կարող, որու համար սկսաւ կտաւի առեւտուր Վանի ու Բաղէշի միջեւ եւ ինքն



իբրեւ առեւտրական կուգար ու կերթար՝  
«Բայց նկատեցաւ ու թողեց:

«Մի առ ժամանակ ծառայութեամբ և Զրբաժանութեամբ պարասուեցաւ, միանգամայն չմոռանալով իր սիրած ու մեծ պաշտօնը:

«Այլ եւ սիրեմ յիշել, յիշել ու դարմանալ, հիանալ թէ ինչպէս իբրեւ դործաւոր, բաճը ուսին, հրատարակներու վրայ, եկեղեցիներու դրանց առաջ կանգնած այլ աշխատաւորներու շարքին մէջ, կապսէր մինչեւ վարձելը, երբ շտապանգամ լուակեաց կը հեռեւէր օբլայ նորութեանց, տեղացիներու մտաց արտայայտութեանց, դէմքերուն, կամ կեղծելով խօսել տեղական բարբառով՝ իր մտքերն կը սերմանէր խեղճ ու տղէտ աշխատաւորներուն մէջ՝ արմանք ու դարմանք պատճառելով նոցա:

«Սյուպէս կը մնար երկար, երբեմն ժամեր, մինչեւ օտար մը, շատ անգամ ծանօթներէն մինն գար ղինքը վարձէր ...

«Երկար չտեւեց սիրելի Պետօի դործունէութիւնը, Արայ հասաւ ՅՅ-ի կոնսորածը, երբ հիւանդ էր բայց իբրեւ հիւանդ չմընաց, անկողնուն չծառայեց: Չնայած բժիշկներու խորհրդին, արիաբար իր խումբով պատերազմի դաշտն իջաւ ու իր ներկայութեամբ եւ ոգեւորիչ խօսքերով եռանդ ու ոգի կը ներշնչէր կուռղներուն»:

Կը պատմեն թէ գնդակը ձիւն վրայ դը-

տաւ ան, երբ Գարահիտացի դիրքերուն վըրայ, հը իրախուռսէր իրեննեքը, անհաւասար կռիւը պատուով վերջացնելու . . .

Եւ պատուով ինկաւ Պրատօն, պատերազմի դաշտին վրայ, իր սիրած ժողովրդին հետ, իր պաշտելի դադափարին համար, պատուով ինկաւ, ի պատիւ այն դատին, որուն դինւորագրեաժ է հայ սերունդին ամէնէն կորովի եւ ազնիւ մասը, քաւորդ դարէ մը ի վեր:

Ծնւնը անոր գերեզմանին առջեւ . . .

\* \*  
\*

---

## ՄԿՐՏԻՉ Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ.

Ծնւել է Վանուժ, Այդեհտանի Խամուր-քէսանայ թաղում, սերւելով մի հին ընտանիքից:

Իր նախնական կրթութիւնն ստանալով Վանի Հայկաղեան վարժարանում, 1874-ին փոխադրւում է Հայոց Միացեալ Ընկերութեան վարժապետանոցը, յետոյ կենտր. վարժարան, որ բացւած էր ընդ տեսչութեամբ Մ. Փօրթուղալեանի:

Աւերտիսեանը իր մայրենի լեզուից շատ քաջ ծանօթ էր Ֆրանսերէն, անգլիերէն եւ թուրքերէն լեզուներին:



Մի քանի տարի կենտրոն ահան եւ այլ ազգային վարժարաններում նա դասախօսում էր ազգային ու ընդհանուր սլաոմութիւն ու աշխարհագրութիւն, որ իր հայեցակէտով վարժարաններում եղած առարկաներից ամենակարեւորներն էին:

Աւետիսեանի բուն արժանիքն այն եղաւ, որ լինելով վարժապետանոցի ու նրա շարունակութիւն կենար, վարժարանի առաջին աշակերտը իր մտաւոր կարողութիւններին հաւասար դարգացրել էր եւ իր հոգեկան կարողութիւնները:

Մտածումների ու զգացումների մի դօրեղ թափ նրան մղել էր դէպք ազգային ազատութեան սուղարէզը. դեռ իր դործունէութեան սկզբում նա մատնեց թիւրք կառավարութեան ձեռքը եւ իբր քաղաքական յանցաւոր ձգեց Վանի կենտր. բանտ: Վերջապէս մի կերպ բանտից ազատելով, այլ եւս չը կարողացաւ հայրենիք մընալ. անցաւ Պարսկաստան եւ Ռուսաստան, ուր մնաց մի տարի:

1888-ին հաստատուեց Պօլիս, ուր իր շրջանն ստեղծելով ձեռնարկեց իր դադարներին իրականացման. Պօլսում եւս ձերբակալուեց ու դատի ենթարկուելով, մի քանի ընկերներէ հետ արտօրուեց Աֆրիկեան Տրիպօլիս:

Աֆրիկեան Տրիպօլսէց նրան յաջողուով է իրեն ծովը նետել ու լողալով դուրս դալ

անգլիական նաև որտեղեց անցնում է  
արտէյլ ու առ ժամանակ աշխատակցում  
Վ. փորթուղալեանի «Արմենիա» թերթին:  
Սյդ ժամանակ աշխատասիրեց եւ մի քանի  
նորիկ գրքոյկներ, որոնցից մէկն է «Թիւր-  
քիոյ հայեր» երկը:

Նպատակ դնելով ուսումնասիրել ի մօ-  
տոյ Եւրօպայի քաղաքակրթութեան ու քա-  
ղաքական կեանքը, Աւետիսեանը շրջում է  
Եւրօպական բոլոր մայրաքաղաքները ու Ա-  
մերիկա. վերադարձին նա հաստատում է  
Սալմաստ. ուր եւ ստանձնում է Սալմաս-  
տի, կոյի եւ Ուրմիայի ընդհ. թեմական  
դպրոցների տեսչութեան պաշտօնավարու-  
թիւնը:

Աւետիսեանը բարեկարգելով Պարսկաս-  
տանի աղգային վարժարանները, ձգտեց դնել  
նրանց միօրինակ ուղղութեան մէջ:

Նա բաց սուպարէզ ունէր՝ կրթական ճա-  
նապարհով աղատութեան նւիրած մի նոր  
սերունդ առաջ բերելու, որի համար մտա-  
դրւած էր: Այժմեան Պարսից Շահը, որ այդ  
ժամանակ գահաժառանգ լինելով Թաւրի-  
զումն էր նստում, շատ սիրալիք ընդունե-  
լութիւն արաւ Աւետիսեանին:

Երբ թրքական բարըարուսութիւնները շա-  
տանալով կոտորածների կերպարանք ստա-  
ցան, 1895-ին Աւետիսեան շտապեց մտնել  
Վան իր հայրենիք ու այնտեղ կազմակերպեց



«Արմենական» կուսակցութիւնը, որի ղեկավարը դարձաւ:

1896 յունիս 3-ի վառի կուռն, երկայ չեղափոխական նկերի եւ իրենց հետ տեւորդներին հետ Պարսկաստան անցնելու Բարդուղիմէոս վանքի շրջականներում պատերազմի են բռնուում կանոնաւոր թիւք զօրքի ու համիրիէ քրդերի հետ եւ այնտեղ պատերազմի դաշտում նա ընկնում է, իբրեւ գաղափարի մի ճշմարիտ հերոս, որի յիշատակը անմոռանալի կը մնայ հայ ազատութեան բարեկամների սրտում: Աւետիսեանը եւս գերեզման չունեցաւ, բայց ունեցաւ մի անմահ յիշատակ:

Ճ.

## Մ Ա Ր Տ Ի Կ

Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչն ու ղեկավարն էր նա վասպուրականում, որ էք ընկերների հետ միասին 1896 թ. համերաշխութեան դրօշակը պարզած միացաւ Գաշնակցականներին ու Արմենականներին՝ ընդհանուր թշնամու դէմ կուելու համար:

Եւ «Գաւառիսար լեւան կրճիկն նա էլ  
բնկաւ վիրաւոր. կուրծքը սլաւոսած,

սիրսր խոցւած շար քելամու գնդա-  
կով . . . »:

Գ. ժբախտաբար մեր ձեռքի տակ չունենք  
կենսագրական տեղեկուլթիւններ նրա մասին:  
Բայց որքան էլ սուղ լինեն այդ տեղե-  
կուլթիւնները, այնու ամենայնիւ հայկական  
սուլար խաւերին Մարտիկ անուը յայտնի է  
իբրեւ մի անձնաղոհ հերոսի, իբրեւ մի իս-  
կական յեղափոխականի անուն:  
Փառք ու սլատիւ այդ անւանը:

---

## ԱՐԻԻՆՈՏ ՏՍՍՆՍՄԵԱԿ

(1896.—1906).

Յիշատակները ուժգին թափով յուզուում  
են կրկին, արիւնոտ օրերի արիւնոտ յիշա-  
տակներ . . . Ուզեղ տասն տարի առաջ էր,  
երբ ուրաղործի հրէշայի՞ն բազուկը Վանի  
վրայ էլ բարձրացաւ, մահացու հարւած տա-  
լու հայ ժողովրդին: Ու սլայթեցին հրացան-  
ներ, շողացին դաշոյններ, սեւ ծուխը բըռ-  
նեց երկինքը . . .

Տասնամեակը լրանում է: Հին վէրքերը  
թող բացւին . . . Թանկագին սուերները թող  
վեր կենան մենաւոր դաշաերից ու խօսին  
սրտին: Անսահման ոգեւորութեամբ ու հի-



ացմանըով յիշենք կրկին աննման Աւետիսեան, վառվառուն Մարտիկմերբ անմահ Պետոն եւ այն ծաղկահասակ կեանքերն ու հերոսները, որոնք նրանց հետ կիւղէլ-աէրէի, Գարահասարի Բարդուղիմէոսի կռիւներում եւ անբաղի Մուշեղի հետ միասին Սալմաստի լեռների վրայ կուրծք տւեցին՝ արիւնոտած հայրենիքը պաշտպանելու համար: Ո՞վ տեսաւ նրանց մահը, բարձր ու ձիւնապատ սարերն էին միայն արձագանքում այն հռչագիւնները, որ անարդ. դուշմանի դնդակից ընկած հերոսները արձակում էին մահւան ժամին, մինչ կարմիր արիւնը ժայթքում էր լայն վերքերից ու ներկում հայրենի հողը: Սիրելիների քնքոյշ մասները չծածկեցին մահւան տաղնապից լայն բացւած աչքերը, որոնք մնացին բաց, միշտ բաց, դէպի վեր՝ կապոյտ երկնքին յառած: Ոչ ոք պատանի մէջ չփաթաթեց նրանց մարմինը, աստուածային մեղեդիները չհնչեցին գագաղների շուրջը եւ անուշահոտ խուհիը չծխաց նրանց անյայտ շիրիմների վրայ: Շատերին մայր հողն էլ չգրկեց, ու անթաղ, բաց երկնքի տակ մնացած դիակների վրայ գիշերն էր ցօղը սփռեց, ցերեկն իր արեւը, եւ անձրեւն ու կարկուտը իրենց հեղեղներով ողորկեցին նրանց, մինչ գիշատիչ ուրուբները ու արծիւներն պտոյտ էին տալիս ընկածների գլխին ... Անցաւ տաս տարի, քամին ցրեց



իրանց աճիւնները. բայց հերոսների պայծառ  
յիշատակը արեւից եւ վառ շողեր է սիւսում  
Ծնողներ, շնջացէք կրկին թանկագին  
անուաները ձեր սրդինների, որոնք նոյնպէս  
ընկան ահեղ պայքարում ֆոյրեր, յիշեցէք  
ձեր եղբայրներին, որոնք մեռան ձեր պատւի  
պաշտպանութեան համար, Հարսներ, միտ  
բերէք ձեր փեսաներին, որոց ծաղկալից  
կեանքի թելը կտրեց անարգ դուշմանը, Սով-  
րեցրէք ամենքին, որ մեր դժբախտ երկրում  
արիւնը արիւնով է մաքրւում միայն, Եւ  
դու, արիւնի ու տառապանքի աւազանում  
մկրտւած երիտասարդ սերունդ, տաս տա-  
րիների յուսահատութեան ու լքումի շըր-  
ջանն անցկացրիք. զարթիր եւ յառաջ տար  
այն դորժը, որի դրօշի տակ ընկան ձեր մեծ  
եղբայրները: Անարգ դուշմանը քար ու  
քանդ կանի մեր անտէր երկիրը, ծխացող  
աւերակների, սեւացած դիակների մի կոյտ  
կը դարձնի, եթէ հուժկու բազուկով դէմ  
չկանդնես եւ կուրծքդ լայն բացած չկուես  
նրա պաշտպանութեան համար, Եթէ չյաղ-  
թես խի, դէթ կը մեռնիս հերոսի մահով,  
այն գիտակցութեամբ, թէ պարտականու-  
թիւններից ամենից վսեմը կատարած եղար.  
յիշիր Պ ե տ օ ի ն, Մ ա ր տ ի կ ի ն, Աւե-  
տ ի ս ե ա ն ի ն եւ նրանց հետ ընկած բոլոր  
կտրիճներին եւ սրտի խորքերից շնջիր.—  
Յարգանք ձեր յիշատակին, ձեր մահը զուր  
չէ անցած, ահա մենք վերցնում ենք այն



դրօշակը, որի տակ ընկած դուք, եւ յառաջ  
կը դիմենք: Յոլսահատութեան, Լքումի բո-  
սէներին՝ ձեր յիշատակը մեր սրտին ոյժ,  
մեր հոգիներին կորով, մեր քայլերին վստա-  
հութիւն սկսի տայ,  
Յարգանք ձեր:

1906 թ. Յունիս 3.

«Իրօսակ».

---

## Ջ Ա Ր Ո Ւ Հ Ի Տ Ե Ր Օ Յ Ե Ա Ն

(Վանեցիների ժանգարեր).

---

Վանի առաջին հերոսուհին եղաւ նա,  
Վաղդէնի քոյրը \*), որ իր ամբողջ գիտակ-  
ցութեամբ գաղափարի ու գործի սասարէղ  
մտաւ, իբրեւ պրօպագանդիստ եւ իբրեւ  
զինւոր: Ինքը դաշնակցական էր. Պետօն ե-  
ղաւ առաջին մարդը, որ սասարէղ ըսցաւ  
Վանի գեղեցիկ սեռին գաղափարական գոր-  
ծունէութեան ու յեղափոխական պրօպա-  
գանդի համար:

---

\*) «Աւիգ», 1906:

Օր. Զարուհին Յայնկոյսների օրիորդաց  
արժարանի վարժուհին էր, երիտասարդ,  
աջառողջ, հոգևով ու մարմնով գեղանի  
և արի:

Նա այցելում էր վանի տները միշտ  
ինձամբ. դործնականապես կին սեռին հաս-  
նայնում էր. թէ ինչպէս ամեն ասպարէզի  
վրայ էլ կին սեռը կարող է հաւասարել  
ողամարդին. նա դիտակցութիւն տարածելով  
ամեն տեղ, իգական սեռի մէջ կնոջ ազա-  
տագրական դադարի հետ արծարծում էր  
հայի ազատագրումի գաղափարը:

Նա խիստ խուզարկութիւնների եւ սոս-  
կումների միջոցին հաղնում էր քրդական  
Աշերի շորեր, ու ղէնք էր փոխադրում, եր-  
բեմն բուրբովին մենակ համարձակ անց-  
նում էր գիւղից քաղաք, լեռնից դաշտ, եր-  
բեմն էլ քրդատարազ խղամների (ծառա-  
ների) հետ:

Նա շատ անգամ իբրեւ քաղաքական  
յանցաւոր խուզարկել ու ամբաստանել է.  
նա անձամբ կրել է թիւրք բռնակալութեան  
բարբարոսութիւնների ցաւն ու կոկիծը. տե-  
սել է, ինչպէս իր եղբօր բանտում մի քանի  
ընկերակիցների հետ վիզերը շղթայ անցկա-  
ցրած գետին էին դաբկում. ինչպէս ցցերի  
կապելով, նրանց ձգում էին իրենց ձեռների  
վրայ. իբրեւ չորրոտանի շուն ու փայտի  
հարւածներ իջնցնելով նրանց մարմնի դա-  
նազան մասերին, պահանջում էին որ իրենց



ճիշն ու ու աղաղակը արտայայտեն շան պէ-  
ռունալով ... Միթէ կարող էր լինել մի դգ-  
յուն քոյր, որ դուրս չգար իր հոգւոյ ան-  
բողջ թափով կուէրու այս անդրգաղանայի  
վայրենութիւնների դէմ ...

Վերջապէս, 1896 թ. յունիսի 3-ր  
Օսմ. կառավարութիւնը անբաւական համա-  
բեւոյ դեռ այս անօրինակ վայրագութիւն-  
ները, առեղծւածային մի պայթումով ծա-  
գեցրեց Վասպուրականի կոտորած, որ փոխ-  
ւեցաւ Վանի կուէին:

Այդ օրը քաղաքի ծայրերում թրքա-  
խառն հայ թաղերի բնակիչները, իրենց հա-  
բեւաններից ու իրենց վրայ յարձակող խու-  
ժանից յանկարծակիի դալով, մեծ մասամբ  
սրահոդիտող եղան, մշակները դաշտերում  
մորթոտւեցան. բանւորները թիւրքաց անե-  
րում, եւ հատ-հատ մարդիկ շուկաներում:

Յունիսի 3-ը եղաւ ահաբեկումի ու յան-  
կարծակիի օրը:

Եոյն օրը կառավարութիւնը իբրեւ յե-  
ղափոխական դործի առաջին խթան ձերբա-  
կալեց ու բանտարկեց օր. Զարուհին:

Դառնութեան բաժակը լեցւած էր ար-  
դէն. ինքնասպանութեան միջոցները ձեռք  
առնւեցան անմիջապէս, Հայկական թաղերի  
սահմանադրուիները կուէի դիրքեր դարձան:

Այդ էր մեակ միջոցը, որ արդեւում էր  
թիւրք ու քիւրդ խուժանի, կանոնաւոր զօր-  
քի ու ոստիկանական զապթիէների համա-



Ս ս ր ի ռ ի դ ո ն ը զ ա  
(տես էր. 227)

1907 թ.

«Էդու»





մըւած յարձակողական մուտքը հայկական  
աշերը:

Օտմ. կառավարութիւնը ուղղակի սպա-  
ներազմ էր յայտարարել:

1896 թ. յունիսի 4 ին հայոց երեք յե-  
ղափոխական կազմակերպութիւնները (Արմե-  
ական, Գաշնակցական, Հնչակեան) միացած,  
հրատարակեցին Հայոց Միացեալ Յեղափո-  
խութեան կառավարութիւն, սկզբունքային,  
հրահրային եւ սլառձառական մանրամասն  
կանոնները բնականօրէն լուեցին բռնակալա-  
կան վտանգի առաջ, եւ ժողովրդական-յե-  
ղափոխական կառավարութիւնը տեւեց մին-  
չեւ յունիս 12:

Սմեները կուռեցին ի միասին. չկար մեծ  
ու փոքր, աղքատ ու հարուստ. ամենքը ա-  
զատութեան դիմաւորներ էին: Ազատութեան  
այս գեղեցիկ օրերին ժողովուրդը իր եռան-  
դի ամբողջ ուժգնութեան մէջ կարողացաւ  
երբեմն յաղթահարել բռնակալ ուժին, դրա-  
ւելով մինչեւ անգամ նրա թնդանօթը, սպա-  
նելով ու վիրաւորելով թնդանօթածիգ սպան  
ու դիմաւորը, փախցնելով ամենքին: Հայի դըն-  
դակը անմտիպելի էր, այդ դնդակի մէջ կար  
հայ մանուկի, անմեղ կին ու երեխաների  
սպանութեան ու բռնաքարոզման ի ամբողջ  
վրէժի ուժը ... Կանոնաւոր զօրքը, թիւքը  
ու քիւրդ բաշիքօղոսկը դիակ դիակի վրայ  
էր թողնում փողոցներում. նա այլ եւս ան-  
կարող լինելով ըստ սովորականին դիակները



սայլերով տանել, թողնում ու փախչում էր  
հայ տանամետայ մանուկը դնդակների տակ  
փամփուռ էր փոխադրում. հայ կին ու աղջիկ  
շիկ դիրքերում դիմադրների հետ կուլեկեկ  
նրան հաց ու ջուր մատակարարում . . .

Օր. Զարուհին վանի կուլեկ առթիւ նշա-  
նաւոր դարձաւ նաեւ միջադրային դիպ-  
մատիական աշխարհում:

Պարիզի օամ. դեսպանը վանի հայեր  
կուլեկ եւրօպական պետութիւններին ներ-  
կայացրեց իբրեւ մի խումբ լիտի սրիկաներ  
կուլեկ, որոնք մի լիտի աղջկայ անբարոյակա-  
նութացքի համար՝ երկիրը արեան դաշտ են  
դարձրել, ու նրան քաղաքական գոյն տւել . . .

Օամ. կառավարութիւնը, որ այս ան-  
բնակ սուտը, կարողանար կրկնցնել եւրօ-  
պացիներին, վանի կառավարութեան միջո-  
ցով մի թիւրք մանկաբարձուհի դրկեց բանտը,  
որ քննէր օր. Զարուհիի կուլեկութիւնը:

Հայերը կարողացան միջոց ձեռք առնել  
եւ թրքուհի մանկաբարձուհուն ընկերացնել  
մի հայ մանկաբարձուհի. թիւրք կառավար-  
ութիւնը հաստատ համողած էր, որ այդ-  
պիսի մի գեղանի օրիորդ, այդքան երկտա-  
սարգների հետ շիւկուլեկ յետոյ չէր կարող  
աղատ մնալ անկուսից:

Բայց սխալեց, մանկաբարձուհիները ե-  
կան հաստատեցին օրիորդի կուլեկութիւնը:

Օսմանեան կառավարութիւնը կամենում  
էր հայ հերոսուհու այդ արիւննաշաղախ վեր-

Թիւնը, կեղտոտել անարդ ցեխ ու տիղմով:  
Գիպլօմատիայի միջամտութեամբ՝ Չարու-  
նի կեանքը խնայւեց եւ նա արսորւեց Ե-  
րուսաղէմ:

Բայց այդտեղ էլ հանդիստ չթողին նը-  
սան: Երուսաղէմը եբրեւ ուխտառեղի յա-  
պերսութեան մէջ էր հեռաւոր երկրների  
կտ, ուստի Չարուհուն ներկայութիւնը այդ-  
տեղ վտանգաւոր թւաց կառավարութեանը:  
Նրան երուսաղէմից արսորեցին Գամաս-  
տոս, որտեղ մնում է մինչեւ այժմ, անցեալի  
մնուշ ու դառն յուշերն ունենալով իրեն  
սխիթարանը:

Փառք ու յարգանք հայկական ժաննա-  
ւարքին:

Վ. անեցի.

Բ Ա Բ Կ Է Ն Ս Ի Ի Ն Ի

(Պետրոս փառեան)

Նա է, Բաբելոնը, քիչ խօսող, շատ կա-  
տարող, Պօլիս է ապրում, բայց ոչինչ պօլ-  
տական. ոչ սերթեւեթ շարժումներ ու ձեւեց  
ու ոչ շողորրթ խօսքեր: Գաւառացի է նա,  
առի բուն նշանակութեամբ — պարզ՝ որպէս  
Երզնկահայկական բարբը, համեստ՝ որպէս դի-  
տական անշուք կեանքը:



Խոշոր աչքերը համակրանք ու վստա-  
հունթիւն են ներշնչում. նրանց մէջ կա-  
դացում էր իր ամբողջ հոգու ոյժը—խել-  
դործ եւ յանդգնութիւն. Նա անում է այն-  
ինչ խելքն է թելադրում, յանդուգն է այն-  
տեղ, ուր գործն է սլահանջում. Նա ուր-  
շին չի ենթարկւում, կարգադրում է ին-  
որ լաւ է կարծիքով. Ոչ որի խնդրել չի ս-  
րում՝ ամեն ինչ իր ձեռքով է կարգադրու-

Գործից դուրս նա մի անհոգ թռչնիկ է-  
միշտ ժպտալ շրթունքին, երգի յանդերը բե-  
նին.

1906 թիւն է՝ ամառը, Երեկոյեան մօտ  
ժամը 9-ին Գալաթայի նեղ ու մոլթ փողոց  
ներքից մէկում կանգնած է Բաբկէնը. Խոշոր  
ու սեւ աչքերը չուած դէպի աջ տանող վո-  
ղոցը՝ անհամբեր սպասում է. Նա դիտմամբ  
է կանգնել այնպիսի փողոցում, ուր վստում  
են լրտեսներ ու ոստիկաններ, կասկածել  
մարդը այդ թաղից խոյս է տալիս, ինչպէս  
վարակած տեղից, Նրա արտաքինն եւս կա-  
կածելի ոչինչ չունի. Ընդհակառակը՝ նա հա-  
ւատ է ներշնչում ամեն մի մանրախոյզ լը-  
տեսի, Չէ՛ որ նա էլ նրանց պէս դիտին մի  
մեծ ու լայն ֆէս ունի, որ իջնում է մինչեւ  
աչքերը, իսկ հաղուտալ՝ անխնամ ու թափ-  
թփած, կարծես հագին չը լինի, այլ քաշ ըն-  
կած, Պօլսի լրտեսներին յատուկ ձեւը, որ  
այնչնով ճարպիկ կերպով Բաբկէնը իւրացրել  
իր ձեւն է շինել. Նա տարիներով այդպէս



ըջել Պօլսի թաղերում մահնալուանդաւոր  
ործերի մէջ եւ ոչ մի տեղ էլ չեն հարցրել,  
արե՞ս ով է կամ ուր է դնում, Նա ջերմե-  
անդ հաստ ու վստահութիւն ունի իր ար-  
արքինի վրայ եւ դրանով ել ու մուտք ունի  
մեն ծակ ու ծուկ:

... Նրա համբերութիւնը հատնելու վը-  
րայ էր. ժամադրութեան վայրկեանն անց-  
նում էր, Բայց ահա հեռուից երեւաց ծա-  
նօթ ընկերը, որ հեռն ունէր իր սպասած  
նորեկին: Ուղեկիցը նորեկի ականջին կամա-  
ցուկ յայտնեց, որ Բաբկէնը անկիւնում  
կանգնողն է, որին չը պէտք է մօտենալ,  
այլ հեռեւել հեռուից: Ասաց եւ ինքը յեռ  
դարձաւ: Բաբկէնը իր անհոգ քայլածքով,  
առաջ անցաւ մենակ՝ տեղ-տեղ շեւցնելով,  
տեղ-տեղ ինչ որ թուրքերէն երդ վնթիւնթա-  
լով, վերջապէս Բաբկէնը մտաւ մի տուն,  
ըստ ճրացաւ երկրորդ յարկը եւ դռան առ-  
ջեւ սպասեց: Նորեկը նրա ետեւից հասաւ:  
Այդտեղ միայն Բաբկէնը բռնեց նորեկի  
ձեռքը եւ ծիծաղելով ասաց. «Մեր երկրին  
օրէնքն է այս. բաւական ժամանակ ետեւէն  
քալեցնելէ վերջն է, որ կը դիջանինք բա-  
րեւել նորեկ մը», եւ ասպա աւելացրեց «ինչ  
որ ասեմ տանտիկնոջ, դու ոչինչ մի խօսիր,  
միայն ծիծաղիր»:

Դուռը բացուում է: Մի խոշոր կին է  
գիմաւորողը:



— Բեզ, մի լաւ տնւոր եմ բերել, կլէտ  
տուտու, ասաց Բաբկէնը թուրքերէն:

— Շատ շնորհակալ եմ, էֆէնդի:

— Պօլիսը չը տեսած մարդ է, լուրում  
մի քիչ դբօմնել, ասում է նա եւ նորեկ  
երեսին նայում: Վերջինը մլամտօրէն ծիծա  
ղում է:

Նորեկը ասպահով տեղ ունի, ով կարող է  
մտածել, թէ նա մի դաւադիր է թիւրք կա  
ռավարութեան դէմ: Նրան յանձնարարող  
Բաբկէնն է. իսկ Բաբկէնը վստահելի տղա  
է: Եւ այդպէս քանի օտարներ կային Պօլ  
սում, որոնց տեղը միայն Բաբկէնը դիտէ  
եւ որոնց նա էր յանձնարարել տան-տէրերին  
Բոլորն էլ ասպահով էին:

---

Ամբողջ օրը Բաբկէնը սարի վրայ է: Նա  
միեւնոյն օրը եւ Բերա է, եւ Գալատա, եւ  
Ստամբուլ, եւ Սամաթիա, եւ Սիւլդար:  
Նա տեսնում է թէ ռումբեր ձուլող վար  
պետին, թէ կառապանին եւ մակոյկավարին՝  
ձուլած ռումբերը Բոսֆօրի մի ափից միւսը  
փոխադրելու, թէ արտասահմանից գինամիտ  
ու սլայթուցիկներ բերող ձամբօրդին՝ նրա  
մօտ եղած նիւթերը ստանալու, թէ հարկա  
ւոր եղած ընկերներին՝ նրանց անհրաժեշտ  
զգուշութիւններն ու հրահանգները տալու:  
Նա փողոցում համարեա ոչ ոքի հետ չէ  
տեսնուում. այցելում է ամենքին, որոնց

պէտք է տեսնել, եւ միշտ էլ գիտէ դոր-  
ծագրել դաղտնասպահութեան բոլոր միջոց-  
ները:



Օգոստոսի 16-ն է. պատմական նշանա-  
ւոր օր. Գաշնակցական մի խումբ հերոսներ  
այդ օրը իրագործելու են ամիսներով ծրա-  
դրած ու նախապատրաստած ձեռնարկու-  
թիւնը, որ դալու է ուժգին թափով սրբելու  
հայի ճակատից ստրկական ամօթանքը եւ  
քաջութեան ու անձնազոհութեան հրաշք-  
ներ ցոյց տալու:

Բաբկէնն է այդ ձեռնարկութեան ոգին  
... նա է, որ առաջնորդում է ընկերներին  
դէպի նպատակակէտը — դէպի Օտտոմանեան  
բանկը, նա է, որ բոլորին էլ շշուկներով  
ու աչքի հայեացքով հրահանգներ է տալիս:

Ահա վերջապէս բոլորը արդէն մտել են  
բանկ՝ ուղևորով զինւած ու բեռնաւոր-  
ւած: Բոլորից վերջը մտնում է ինքը Բաբ-  
կէնը. եւ կատարւում է ադէտը: Պայթած  
ուղևորը գետին է գլորւում այդ անվախ ու  
հերոս գաշնակցականին:

Սկսւում է բոսնական իսառնաշիթու-  
թիւն. բայց Բաբկէնի ընկերները կարողա-  
նում են առանց նրան էլ ծրագիրն իրա-  
կանացնել:

Ծածանւում է Հ. Յ. Գաշնակցութեան



գրօշակը Բանկ Օտտօմանի լուսամուտից եւ սկսուում է անհաւասար կռիւը, տեղի է ունենում բողոքի ու պահանջի արիւնոտ բայց հոյակապ ցոյցը, որ մինչեւ օրս էլ միայն հիացմունքի յուշեր է զարթեցնում ամեն մէկիս սրտում:

Կանցնեն տարիներ ու դարեր, բայց Օտտօմանեան բանկի ցոյցը անջնջելի կմնայ հայկական պատմութեան էջերում:

Եւ միշտ էլ կյիշէ նրա գլխաւոր հերոսի՝ Բաբկէն Սիւնիի անունը:  
Փառք նրա յիշատակին:



## Լ Ե Յ Տ Ե Ն Ա Ն Տ Շ Մ Ի Գ Տ

(+ 6 Մարտի 1906 թ.)

Նա հերոս էր, որ Սեւ ծովեան ապրտամբ նաւատորմի գլուխն անցած վերածնւող Ռուսաստանի ականջին հնչեցրեց ժողովրդի պահանջը՝ ազատութեան, արդարութեան շեշտերով:

Նա հերոս էր եւ հերոսաբար էլ ընդունեց դաժան մահը ...

Օջակովի ղինւորական արդարադատութիւնը կախաղանի դատապարտեց նրան:

Կատարւեց սարսափելի, անարդար եղեւնը: Լուսաբացից մի ժամ առաջ ամա-



յի, անմարդաբնակ Ֆերեզանի կղզում, Օջա-  
կովից քսան վերստ հեռու, դնդակահարած  
է Շմիդտը եւ նաւաստիներ՝ Չաստնիկով,  
Քլադկով եւ Անտոնենկո ...

Իր կեանքի վերջին րոպէները Շմիդտը  
անց կացրեց նամակներ գրելով քրոջը տի-  
կին Յզբաշին եւ իր որդուն, աղերսելով յանձ-  
նել ըստ պատկանելոյն, Այդ միջոցին քա-  
ղաքում տախտակներ էին դնում դագաղ-  
ների համար, պատրաստում էին տոպրակ-  
ներ դատապարտւածների դէմքերը ծածկե-  
լու համար, Գիշերւայ ժամի 5-ին Շմիդտին  
եւ նաւաստիներին գաղտնի դուրս տարան  
Ֆերեզան կղզին, երբ նրանց իջեցրին կղզին,  
արդէն առաւօտեան ժամի 4-ն էր, Ծովը  
հանդարտ էր, Գիշերւայ աղջամուղջի միջից  
արդէն արտացոլում էին առաջին դռնատ  
ակնարկները՝ ջերմ ու պայծառ օր, լաւ ա-  
ռաւօտ խոստացող մօտիկ արշալոյսի, Գի-  
շերւանից արդէն կղզում պատրաստ ու կազմ  
կանգնած էին ամեն տեսակի զօրքեր եւ 13  
օֆիցերներ, Այստեղ էին նոյնպէս «Прытк»-ի  
օֆիցերները եւ դիւաւորը, ժանտարմների  
բոսմիստրը, քահանան, 4 պատրաստի դա-  
գաղներ, սիւններ եւ բահեր:

Շմիդտին դնդակահար անելը հրամայ-  
ւած էր «Терент» մակոյկի նաւաստինէին՝  
թւով 60 հոգի, նրանք կանգնեցին սիւ-  
ներից 50 քայլ հեռու տարածութեան վը-  
րայ, իսկ նրանց յետեւներում կանգնած



էին երեք վաշտ զինւորներ, նախադուռը թեան համար, Շմիդտը արագ մօտեցաւ պատժարանին, դիմեց բաղդակից եղբայր — նաւաստիներին, թողու՛թիւն ինդրելով, ապա ուղղեց խօսքը զինւորներին, սրտաշարժ կերպով խնդրեց չը մոռանալ, յիշել միշտ լէյտենանտ Շմիդտին, որը մեռնում է ռուս ժողովրդի եւ քանգագին հայրենիքի համար:

«Չեղ համար, իմ եղբայրներ! ինձ նըմաններ շատ-շատ կան, եւ դեռ աւելի կը բողմանան»:

**Այս քառեւէտ աւելի քան շեքէրններն: Համարուելոց ամբողջ ի նաւաստիների քան: Եւ այդքեց չն կատարել նրան սերնին եւ չը վարկել անքերը :::**

Գաստնեկովն ասաց. «Մնաք բարեկամ ընկերներ, շուտով մեռնելու ենք, ներեցեք»:  
Իսկ մեւսները լաւիս էին եւ հրաժարեցին հաղորդւել:

Շմիդտը առանց դիտարկի էր եւ սպիտակ շապիկ միայն հագին, մենակ նա էր բաց դէմքով եւ գլուխը բարձր բռնած: Զօրքերը կարգով կանգնեցին, թմբկահարը մարտակոչը թմբկահարեց, մի րոպէ յետոյ, նաւաստիները հրացանները բարձրացրին եւ ուղղեցին Շմիդտը կանչում է. «Մնաք բարեւո՛ւ, սպանեցեք»: Նրա աչքերը յառած են անթարթ, լաւեց հրամանը. «Խփել!»: Հրազարկը թըն՝ դաց. 2 նաւաստիները ընկան հնձեւածի նըման: Երկօրդ հրազարկից յետոյ սպանւում

է երբորդ նաւաստին, բայց Շմիդտը կանգնած է աւելնասու. Նրա աչքերը մտորում են: Թնդաց 3-րդ հրազարկը: Շմիդտը թաւալգլորը ընկաւ, ոտից մինչեւ գլուխ արիւնով ծածկւած, դնդակների տարափից ցանցահարեղած:

Ժամի 4 1/2-ին լուսաբացին դինւորները տաք դիակները դրեցին դադաղներում, իջեցրին պատժարանի տեղում փորւած փոսի մէջ եւ հողով ծածկեցին: Օրը բացւեց, Հարուի արեղակի սսկեղօծ շողերը զարդարեցին երեսն ճաճանչներով այդ ջերմ շերտները պատկները փոխաբեր:

## ՄՍՐՈՒՍԵՍ, ՍՊԻՐԻՒԹՅՈՒՆՈՎԱ

Մարդկային պատմութեան ընթացքում կանանց շարքերից շատերն են աչքի ընկել իրենց ընդունակութիւններով ու դժբերով, շատերն են Համաշխարհային հռչակ ստացել հերոսական սնանադոհութեամբ մանաւանդ յերպիտիական-աղատադրական շարժման ընթացքում:

Սակայն այդ շարժման ոչ մի շրջանը, ոչ մի երկրում այնքան կին հերոսներ չէ տւել, որքան Ռուսաստանը 30-ական թւականներից սկսած: Իսկ վերջին երկու տարիների ընթացքում ուռւս կինը ուղղակի դերբնա-



կան ջանքեր է դործ դնում ազատագրացան շարժման դրօշակը միշտ բարձր, միշտ դեպի առաջ տանելու համար:

Եւ քննի զոհեր է նա թողել յեղափոխական արիւնոտ ճանապարհին. քննի նահատակներ է տւել բանտային մութ ու մըռայլ խորշերին, «նօգայկաների» հարւածների ու ոստիկանական անլսւր, անսահման դադանութիւններին.

Բայց այդ հերոս զոհերի ու նահատակների շարքից իր հոյակապ պատկերով ներկայանում է ամբողջ Ռուսաստանի, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ — Սպիրիդօնօվան, այն դեռահաս օրիորդը, որ սպանեց Տամբօլի նահանգապետին — Լուժենօվսկուն:

Սպիրիդօնօվան... Մի ամբողջ էպօպէյ է դա, արիւնով դրւած, վեհ դադափարներով հիւսւած էպօպէյ:

Տեսնելով բիւրօկրատիայի դործագրած անչափ-անսահման բարբարոսութիւնները, գիւղացիութեան ծանր հեծեծանքը, կամենալով ժողովրդական լցւած վրէժի հարւածը հասցնել այդ բարբարոսութիւնների դեկավարին Տամբօլում — Սպիրիդօնօվան եքրել համոզմունքի, դադափարի հերոսուհի յանձն է առնում իրագործել «սօցիալիստ-յեղափոխականների» դատավճիռը այդ «դեկավարի» — նահանգապետ Լուժենօվսկու սպանելու վերաբերմամբ:

Եւ նա իրագործում է այդ հերոսական



Համարձակութեամբ: Բայց որքան թանգ-  
որքան ծանր է նստում նրան այդ հերո-  
սութիւնը:

Օրեր շարունակ ծեծում ու սոսկալի  
տանջանքների են ենթարկում նրան, Պրիստաւի  
օգնական Ժ. դանով եւ կօղակների օֆիցէր  
Ս. Բրամով թէ բանտում, թէ երկաթուղու  
վագօնում չտեսնած ու չլսած բարբա-  
րոսութիւններ են գործ դնում նրա վերա-  
բերմամբ . . . բարբարոսութիւններ, որոնք  
ցնցեցին ամբողջ Ռուսաստանը, բողոքի ու  
դարշանքի սլոուտիկումներ առաջացրին ամեն  
կողմից:

Բայց ահա դալիս է եւ դատաստանը:  
Մարտի 10-ին համբույրում զինուորական դա-  
տարանը բանտային մութ ու մռայլ խորշից  
դուրս է բերում Սպիրիդօնօվային, որպէս զի  
քննութեան ենթարկէ: Հարց ու փորձ են  
անում եւ վիաների. դրանցից մէկը բանտա-  
յին բժիշկ Ֆինկը բաց է անում դաղանու-  
թիւնների ամբողջ պատկերը, ցոյց է տալիս  
Սպիրիդօնօվայի կրած սոսկալի տանջանք-  
ները. բայց եւ այնպէս դատարանը յանուն  
արդարութեան (sic!) քիչ է համարում այդ-  
քանը եւ կախաղանի է դատաստարտում Մա-  
րուսիային:

Նա հպարտութեամբ լսում է այդ դա-  
տավճիռը եւ հետեւեալ լսօրքերն արտա-  
սանում.



— Պարոն դատաւորներ, նայեցէք ձեր շուրջը, նրտեղ կը տեսնէք դո՛հ եւ երջանիկ մարդկանց: Չը կան նրանք, Նոյն իսկ այն մարդիկ, որոնց կողմն է այժմ յաղթանակը, նրանք էլ երջանիկ չեն, ուրախ չեն, որովհետեւ նրանց յաղթանակը շուտով կը վերջանայ, որովհետեւ ճնշւածներն ու հալածւածները շուտով կը դադարեն տանջւելուց եւ մի նոր հնար կը դանեն, էս հեռանում եմ այս կեանքից: Գուք կարող էք ինձ ըստաննել, կարող էք ամենատարսափելի սպառիժը հնարել ինձ համար, բայց ոչինչ չէք կարող աւելացնել այն բոլորի վրայ, որ արդէն կրել եմ ես ...»:

Այո, կախաղանի սպառիժն էլ ոչինչ է թւում հերոսուհուն նրա կրած այնքան սուկալի տանջանքների համեմատութեամբ:

Անցնում են շաբաթները միմեանց յետեւից: Հասարակական կարծիքը մամուլի էջերից շարունակում է բողոքել ու կանչել.

— Մարուսեան չպէտք է մեռնի, նա պէտք է ապրի ...

Եւ բարձր իշխանութիւնը կախաղանի սպառիժը փոխարինում է Սիբիր արտորելով:

**Արտաւել է այժմ Մարուսեան: Այստեղ է տանջւում տաժանակի տշխատանքների տան, միշտ իր անւան հետ շողկապած պահելով հեացմունքի ու խոր յարգանքի դրացումները:**



Հ Ե Ն Ր Ի Կ Ի Բ Ս Է Ն

(1828 - 1906 թ.)

Դանիայի խրատականիա քաղաքում 1906 թ. Մայիսի 3-ին մահը գերեզման գլորեց ժամանակակից մեծ դրամատուրգին, անհատական ազատութեան ամենամեծ սևուցչին՝ Հենրիկ Իբսենին:

Եւ այդ կորուստը ողբաց ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, որովհետեւ Իբսենը էր անզուգական տաղանդով համաշխարհային լայն հռչակ էր վայելում:

Կորուստը զգալի էր մանաւանդ Նորվեգիայի համար, որի մեծ փառքն ու պարծանքն էր Իբսենը:

Հիւսիսային այդ ժայռոտ երկիրը դեռ 1814 թւականին ազատւելով Դանիայի գերիշխանութիւնից՝ նորից դարկ է տալիս իր ժողովրդի հայրենասիրութեանը, նորից հընչեցնում է ոգեւորութեան ազդու շեշտերը եւ նրանցով ծաղկեցնում մայրենի գրականութիւնը եւ լիզուն, որ դարաւոր հալածանքների էին ենթարկւած Դանիացի տիրապետութեան ժամանակ:

Այդ ատու Նորվեգիական հորիզոնում ետեւում են վերածնութեան ու արագ դարգաման փայլուն ճանաչողները, որոնք եւ գրական աստարտէզի վրայ են կանգնեցնում այնպիսի ժողովրդական շնորհալի գրողներ:



որպիսիք են Բիերրեհարդ, Շվախ, Ծօխ,  
Վօլֆ, Վերհեյլանդ, Մուշխ, Իէնսէն, Գալ  
եւ ուրիշները:

Կոր ոյժերն առաջացնում են նոր հո-  
ւանքներ, նորողորութիւն, որ մի առան-  
ձին ոյժ ու կեանք է ստանում մանաւանդ  
Բիերնսօնի եւ Իբսէնի շնորհիւ:

— Բիերնսօնը, իրաւացի կերպով նկատում  
է Բրանդէս, նորվեգիական Ժողովրդի սիրելի  
գործիչն է. խի Իբսէնը—նրա փառք ու  
պարծանքը ...

Գրեթէ Հասակակից—(Իբսէնը ծնւել է  
1828 թ., Բիերնսօնը 1832 թ.)—այդ եր-  
կու Հսկաները միաժամանակ եւ միաձեւ են  
սկսել իրենց գրական գործունէութիւնը,  
բայց շատ շուտով շեղւել են այդ միանմա-  
նութիւնից եւ տարբեր ճանապարհների վը-  
րայ կանգնել:

Իբրեւ լիբերալ դեմօկրատիական ազ-  
դութեամբ մի գործիչ, Բիերնսօնը իր գրչի  
ոյժը փորձել է գրական բոլոր ասպարէզնե-  
րում: Նա գրել է եւ քաղաքական յօդաձ-  
ներ եւ մանրալէգանք, եւ բանաստեղծու-  
թիւններ, եւ դրամաներ, բայց այդ բոլոր  
գրաւորքների մէջ էլ նա մնացել է միեւնոյն  
քաջարի հեղինակը, որ ըմբոստօրէն պաշտ-  
պանում է աղատութեան ու արդարութեան  
գաղափարները. միեւնոյն կրակոտ հայրե-  
նասէրը, որ իւրաքանչիւր քայլափոխում մը-  
տաժում է իր հայրենիքի բարօրութեան մա-




Հենրիկ Բրսե  
(տես էջ. 231)

«Այս»

1907 թ.





—Բիւրնսօճը, ասում է Շերը, իր հայ-  
րենիքի հարազատ գաւախն է բառի բուն նը-  
շանակութեամբ: Նրա տաղանդի իւրաքան-  
չիւր ել ևւ էջը նօրվէգիական դրոշմ է կրում:

Սակայն այդպէս չէ Իբսէնը: Թէև սրան  
էլ մի ժամանակ ոգևորել է հայրենիքի գա-  
ղափարը, սրան էլ դրաւել է մայրենի երկրի  
հասարակական կեանքն ու կարիքները. բայց  
ժամանակը կամաց կամաց բաց է արել նրա  
տաղանդի առանձնայատկութիւնը և նրա վը-  
րա դրօշմել համաշխարհային, համամարդկային  
լայն կնիքը:

Իբսէնի գրւածքներում ոչ թէ իրակա-  
նութիւնը, այլ իղէան—բարձր ձգտումն է թա-  
գաւորողը. ոչ թէ դասակարգային կամ կու-  
սակցական շահերը, այլ ժամանակի ամբողջ  
ոգին է նրան դբաղեցնողը:

Նա կանգ է առնում անհատի, նրա հո-  
գեբանական ել և էջների վրա, բայց այդ ա-  
մենը շրջապատում է հասարակական մթնո-  
լորտով: Նրա հերոսները առանց որ և է կօմպ-  
րօմիսսի՝ գիջումի դիմում են միշտ դէպի ան-  
պայման ճշմարտութիւնը:

Ընդհանուր առմամբ Իբսէնի տաղանդը  
կարելի է նմանեցնել այն խորհրդաւոր նա-  
ւին, որ ճանապարհորդներին տանում է դէպի  
մի իղէալական ու երանաւէտ աշխարհ, ուր  
սփռւած են բոլոր փառքերը, ուր թագաւո-  
րում են միայն արդարութիւնն ու ճշմարտու-  
թիւնը. ազնուութիւնն ու բարութիւնը՝ Բայց  
հէնց որ մարդիկ ոտ են դնում այդ աշխար-



հը, իսկայն զրկուժմ են կեանքից:

Այդ վիճակին են արժանանում Իբսէնի հերոսները: Նրանք իրենց ներքին ձգտումներով դիմում են միշտ դէպի ճշմարտութիւնը. բայց որոշ աստիճանի հասնելուն պէս զո՞ւ են դնում մի որ և է հակառակ ոյժի:

Անհատական կուռ ազատութիւնը ճշմարտութեան թափով հղօրացած քաշում Իբսէնի հերոսներին միշտ դէպի վեր, դէպի գաղափարական բարձունքը, ուր նրանց անկում է սպասում կամ անխորտակելի խոչընդոտ:

Սակայն որքան էլ ողբերգական լինի այդ անկումը, որքան էլ դժնդակ ու մեծ լինեն խոչընդոտները, այնուամենայնիւ վեհ գաղափարները մեծ տաղանդի ուժով թևաւորւած անցնում են առաջ, մանուս մողովրդական հագեւանութեան խորքերը և այնտեղ կատարում իրենց յեղափոխիչ դերը:

Ահա այդպէս է Իբսէնի տաղանդը, որ տաննեակ տարիներ շարունակ ցնցել է մարդկային միտքը իր ազդու շեշտերով, որ մտաւոր ու գրական մի ամբողջ հոսանք է ստեղծել իր բաղձաթիւ ու բաղձազան գրամաներով:

Իսկ այդ տաղանդի բնորոշ յատկութիւնը անհատի ներքին ու արտաքին լիակատար ազատութիւնն է, որ անբան ցայտուն, անբան գրաւիչ գունաւորում է ստանում հանձարեղ դրչի շնորհիւ:

## † ԳԷՈՐԳ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Հոկտեմբերի 28-ին <sup>1)</sup> Նոր-Նախիջևանի հիւանդանոցում ծանր և երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց հայ դերաս. Գէորգ Պետրոսեանը: Հանգուցեալը ծնւել է 1859 թ. փետրուարի 11-ին Օրդուրաթ քաղաքում: Սկզբնական կրթութիւնը նա ստացել է Թիֆլիսի ընտանեկան դպրոցում, որտեղ աւարտելուց յետոյ գնում է Մոսկուա Լազարեան ձեմարան: Հանգուցեալ Գէորգ Պետրոսեանը յայտնի է հայ հասարակութեան իբրև դերասան 1881 թւականից Օրդուրաթեան կեդազգանուսով, (հէնց այդ թւականից էլ հաշուում էր ինքը հանգուցեալը իւր զործունէութեան սկիզբը). դա հայ բեմի երջանիկ ժամանակն էր, երբ դեռ կենդանի էր անգուգական Պետրոս Ազամեանը: Ահա այդ թուականին հանգուցեալ Պետրոսեանը ծառայեց հայոց բեմին որպէս դերասան մի ամբողջ սեզոն. (այդ տարի թատրոնական զործը զեկաւում էր Նապոլէօն Ամատունին). սեզօնի վերջը ցրուեց խումբը, նրա հետ և Պետրոսեանը: Օրդուրաթեանը մինչև 1890 թւականը, երբ նա նորից եկաւ Թիֆլիս, և հաւաքելով ցիրուցան եղած դերասաններին՝ տեց մի քանի ներկայացումներ: Դերասանների նիւթական ողբալի վիճակը, զեղարուեստի սէրը, գուցէ, զբանք էին այն պատճառները, որոնք

1) Տես «Նոր-Կեանք» № 19:



զրդեցին հանգուցեալին ամեն ջանք գործ դընելու, որ Թիֆլիսում, նախկին տարիներին ման, սկսէին կանոնաւոր հայկական ներկայացումները: Նրա իղձը կատարւած էր 1891 թուին կազմակերպւեց թատրոնական կոմիտէ, որը վճուեց անսպասման, ինչ էլ որ լինի, ոչ մի խոչնդոտի առաջ չկանգնել և մշտական կանոնաւոր խումբ ունենալ, որի համար հէնց իրան, հանգուցեալ Պետրոսեանին ուղարկում է Կ. Պօլիս խումբ կազմակերպելու:

Ստանձնելով այդ ծանր գործը, նա գրնաց Կ. Պօլիս, որտեղից տ. Սիրանոյշէն, հանգուցեալ Թուրեանին և Պեննեմեճեան ամուսիններին բերելով, սկսեց գործը: 1891-92 թ. սեզօնին հետևեց 1892-93 և 1893-94 թ. ձմեռայ սեզօնները, որտեղ պ. Պետրոսեանը մասնակցում էր որպէս առաջին սիրահար հերոս: Երբ 1894 թւին վերջանում են հայոց կանոնաւոր ներկայացումները, հանգուցեալ Պետրոսեանը գնում է Ռուսաստան կարճ ժամանակով, ուր խաղալով ռուսական խմբի հետ (առևս լեզուով) գտնում է յաջողութիւն: 1897 թուին սկսում է Հայոց թատրոնի նոր դարեչըջանը. դա Բագուի հայկական կանոնաւոր ներկայացումների սկիզբն էր: Բագուի թատրոնական կոմիտէն հրաւիրում է պ. Պետրոսեանին ծառայելու իւր խմբում, որ և հանգուցեալը սիրով յանձն է առնում: Հետոգհետէ որքան աւելի էր զարգանում թատրոնի զարգափարը Կովկասում, նոյնքան էլ աւելի լայնացնում էին իրանց դործունէու-



Թեան վայրերը և հայ դերասանները: Այսպէս  
օրինակ 1897 թւականներից յետոյ սկիզբ  
դրւեց գաւառների ճանապարհորդելուն, գըլ-  
խաւորապէս հետեւեալ քաղաքները՝ Երևան,  
Ալէքսանդրապօլ, Ղարս, Շուշի, Գանձակ և  
հիւսիսային Կովկաս՝ Եկատերինօղար, Արմա-  
ւիր, Վլադիկավկազ, Նոր-Նախիջևան և այլն:  
Հայկական ներկայացումները պահանջ դառ-  
նալով Թիֆլիսի և Բագուի հայ հասարակու-  
թեան համար, ահա արդէն տասը տարի է, որ  
ամենայն հոգացողութեամբ գործը տարւում է  
այդ քաղաքներում: Եւ հանդուցեալ Պետրո-  
սեանը միշտ իւր պատուաւոր տեղումն էր թէ  
Թիֆլիսում և թէ Բագում: Այս տարի հան-  
դուցեալը հրաւիրւած էր Նոր-Նախիջևան  
իրբև դերասան և բեմիւօր. բայց դեռ գործը  
չսկսած հիւանդացաւ, մտաւ անկողին և այլևս  
չվերկացաւ: Հայ բեմը կորցրեց իւր գլխաւոր  
անդամներից մէկին. որի կորուստը դեռ եր-  
կար կը գգացուի հայ բեմի համար: Թաղումը  
կատարւեց Թիֆլիսում, մեծ հանդիսով: Ներկայ  
էր ժողովրդի խումն բազմութիւն, մամուլի և  
հասարակական հիմնարկութիւնների ներկայա-  
ցուցիչներ, գրւած էին 40-ից աւելի պսակներ:  
Հանգսիտ ոսկորներիդ, սիրելի ընկեր.  
Թող այն գիտակցութիւնը, որով դու ծառա-  
յում էիր հասարակական բարօրութեան և մայ-  
րենի բեմի բարգաւաճման, լինի քեզ ոսկէ  
արձան, իսկ քո որբ երեխաներիդ և ամուս-  
նուդ մխիթարութիւն:

Դերասան Լ. Ալիխանլու



Հ Բ Ա Տ Ա Պ Հ Ա Ր Յ Ն Բ Ի Յ

ԻՆՉ Է ՍՕՑԻԱԼԻՉՄԸ

Սօցիալիզմ կոչուում է այն գիտական վարդապետութիւնը, որ ձգտում է արմատապէս փոխել գոյութիւն ունեցող հասարակական-տնտեսական կարգերը, սահմանելով մասնաւոր սեփականութեան փոխարէն համայնական սեփականութիւն և ճնշման ու շահագործման փոխարէն լիակատար ազատութիւն ու հաւասարութիւն:

Մասնաւոր սեփականութեան սկզբունքը հնարաւորութիւն է տւել համեմատաբար սակաւաթիւ մարդկանց իրանց ձեռքը կենտրոնացնելու արդիւնագործութեան միջոցները— (հողը, գործարանները, մեքենաները, երկաթուղիները, նիւթերը և այլն)—կամ ուրիշ խօսքով ասած՝ կապիտալը:

Հէնց այդ պատճառով էլ այդ մարդիկ կոչուում են կապիտալիստներ:

Իրանք, մասնաւոր սեփականութիւն դարձնելով կապիտալը, համախմբում են նրա շուրջը աշխատաւորներին և քամում, շահագործում վերջիններին քրտինքը: Այդպիսով բացւում է անհաւասարութեան վիճը և իրար հանդէպ կանգնեցնում երկու հակառակ դասակարգերին՝ մի կողմում սակաւաթիւ ու և ի-



ներին-կապիտալիստներին իսկ միւս կողմում՝ կեղեքւողներին-աշխատաւորներին:

ժամանակակից գիտութիւնն ու տեխնիկան, շոգի, էլէկտրականութիւն և այլ ոյժեր հետզհետէ զարգացնում են արդիւնագործութիւնը, բայց իսկական աշխատաւորները միայն փշրանքներ են վայելում արդիւնքներից, նրբանք ստանում են միայն այնքան, որ հազիւ բաւականացնում է շարքաշ ապրուստի համար: Այն ինչ կապիտալի տէրերը առանց աշխատելու առատօրէն վայելում են բոլոր բարիքներից և միևնոյն ժամանակ աւելի մեծացնում են իրանց հարստութիւնը—կապիտալը:

Ահա այդ անհաւասարութեան անդնդախոր վիճը հաւասարութեամբ լցնելու համար է, որ սօցիալիզմը քարոզում է վերացնել չարքի իսկական արմատը՝ մասնաւոր սեփականութիւնը, որպէսզի արդիւնագործութեան բոլոր միջոցները պատկանեն ամբողջ հասարակութեան, այսինքն՝ դառնան համայնական սեփականութիւն և բոլոր մարդիկ հաւասար չափով իրաւունք ունենան և աշխատելու և աշխատանքի բարիքներն վայելելու:

Սօցիալիզմի վարդապետութիւնը, լոյն մտքով վերցրած, իր սկիզբը առնում է շատ հին ժամանակներից: Այդ մտքով Պլատոնը, Բակոնը, Թոմաս Մուրուսը, Հարլինգտոնը, Մօրելլին, Մարլին և ուրիշ հեղինակներ նոյնպէս կարող են սօցիալիստներ համարւել:

Սակայն ժամանակակից սօցիալիզմի ի-



մաստը ոչ այդ հնադարեան անկապ ու անսխտեմ մաքերն են, ոչ էլ Սեն Սիմօնի, Փուրիէի կամ Օուէնի ուտօպիական ուսմունքը, այլ այն հոյակապ գիտական վարդապետութիւնը, որի հիմքը դրել են Կարլ Մարկս և Ֆրիդրիխ Էնգելս:

Ուտօպիական սօցիալիզմի հեղինակները — (Սէն Սիմօն և միւսները) — հաւատացած էին, թէ հնարաւոր է հասարակական կարգերը բարեփոխել, հիմնելով օրինակելի միութիւններ ու գաղութներ սօցիալիստական հիմունքներով:

Նրանցից յետոյ Լուի Բլան և Լասսալ իրանց յոյսը դրել էին պետութեան վրա, կարծելով, թէ վերջինս կարող է պետական միջոցներով արդիւնագործական միութիւններ կազմակերպել և դրանով աստիճանաբար վերացնել մասնաւոր ձեռնարկութիւնները:

Իսկ Մարկս և Էնգելս գիտական վերլուծման ու քննութեան ենթարկելով հասարակական կեանքը, գալիս են այն եզրակացութեան, որ վերոյիշեալ ուսմունքները ուտօպիական են՝ անհիմն և անիրագործելի:

Նրանց կարծիքով հէնց ժամանակակից կապիտալիստական կարգերը իրանց մէջ պարունակում են այնպիսի սաղմեր, որոնք հետզհետէ զարգանալով տանում են դէպի սօցիալիզմի իրականացումը:

Ահա թէ ինչպէս, արդիւնագործութիւնը հետզհետէ կենտրոնանում է սակաւաթիւ կապիտալիստների ձեռքում, միւսոյն ժամանակ



աւելացնելով սեփականագործի աշխատանքները — պրօլետարիատի բանակը. այդպիսով որոշ ժամանակից յետոյ հարկաւոր կլինի միայն մի քայլ, որպէսզի փուլ դան կապիտալիստական կարգերը շահագործման ու անհաւասարութեան հետ միասին և նրանց տեղ թաղաւորեն սօցիալիստական կարգերը: Հէնց այդ պատճառով աշխատաւոր դասակարգը իր կազմակերպւած շարքերով պէտք է եռանդուն կերպով աշխատի շտապեցնել սօցիալիստական այդ յեղափոխութիւնը:

Գիտական սօցիալիզմի հիմունքները լուսաբանւած են գլխաւորապէս Մարկսի վարդապետութեան մէջ, որ կարելի է բաժանել երեք մասի. 1) զուտ տնտեսագիտական ուսմունք, որ արժարժւած է «կապիտալ» վերնագրով աշխատութեան մէջ. 2) պատմափիլիսոփայական տեսութիւն, որ պարզւած է թէ «կապիտալի» մէջ և թէ միւս գրւածքներում և 3) տնտեսական մատերիալիզմի թէօրիան:

Մարկսի վարդապետութիւնը աւելի արժարժել ու ճողովրդականացրել են բացի նրա ընկերակից էնգելսից նաև Բեքելը, Լիբկնեխտը, Կաուցկին, Բերնշտայնը, Մերլինգը, Լաֆարգը, Ջիբերը և ուրիշները:

Սակայն 90-ական թւականների վերջերին Մարկսի հետևորդների շարքերում առաջ եկաւ պառակտում: Նշանաւոր մարկսիստ Բերնշտայն հրատարակեց իր յայտնի գրւածքը՝ «Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie», որով հերքում է



սօցիալական յանկարծակի յեղափոխութեան հնարաւորութիւնը, ցոյց է տալիս, որ սխալ է ասել, թէ արդիւնագործութիւնը հետզհետէ կենդրոնանում է խոշոր սեփականատէրերի ձեռքը, և վերջում այնդում է, թէ կամաց-կամաց որոշ ջանքերով ու բարեփոխութիւններով հնարաւոր է կապիտալիստական կարգերը դարձնել սօցիալիստական:

Բերնշտայնի առաջացրած այդ հոսանքը, որ ունի բաւական խոշոր թւով կողմնակիցներ, ներկայումս յայտնի է ռեվիզիոնիզմ կամ ֆլինական սօցիալիզմ անունով: Բացի դրանից սօցիալիզմ խօսքը դործ է անում և ուրիշ իմաստով, որ ոչ մի կապ չունի գիտական սօցիալիզմի հետ, այն է—1. Պետական սօցիալիզմ, որի նպատակն է իշխանութեան միջամտութեամբ ենթարկել արդիւնագործութիւնը և բանւորների վիճակը պետական վերահսկողութեան, աշխատել այդ ճանապարհով հաշտեցնել դասակարգային հակադրութիւնները և այդպիսով կաշկանդել իսկական սօցիալիզմի հոսանքը: 2) Համայնական սօցիալիզմ կոչւում է քաղաքային ինքնավարութիւնների ձգտումը՝ քաղաքի սեփականութիւն դարձնելու ընդհանուր ազգաբնակչութեանը անհրաժեշտ ձեռնարկութիւնները — (ձիաքարշ, էլեքտրաքարշ, լուսաւորութիւն, ջրաբաշխութիւն և այլն)—և որոշ չափով բարւոքելու աղքատ դասակարգի վիճակը: 3) Կասեյեւ սօցիալիզմի կողմնակիցները կարծում են, թէ բանւորական հարցը կարելի է լուծել, գոյու-



թիւն ունեցող անտեսական պայմաններում  
գործարանային օրէնսդրութեամբ և միու-  
թիւնների օգնութեամբ բարեօրելով բանուոր-  
ների վիճակը 4) Քրիստոնէական սօցիալիզմի  
հեռուորդները, գլխաւորապէս բողոքական և  
կաթոլիկ հոգևորականները, իբրև հակադրու-  
թիւն իսկական սօցիալիստական վարդապե-  
տութեան քարոզում են, որ անհրաժեշտ է ա-  
մեն ինչ մի կողմ թողնել և աւետարանական  
ոգով կրթել մարդկանց, որովհետև միայն այդ  
ճանապարհով կիրականանայ արդարութիւնը,  
հաւասարութիւնը և ընդհանուր բարօրութիւ-  
նը: Իրանց գործունէութիւնը, իրականապէս  
արտայայտում է նրանով, որ հոգևորական-  
ների հակողութեամբ և բարեգործների օժան-  
գակութեամբ հիմնում են սպառող, արդիւնա-  
բերող կամ այլ բանուորական ընկերութիւն-  
ներ ու բարեգործական հիմնարկութիւններ:  
Այսպէս ուրեմն սօցիալիզմ ասելով եր-  
բէք չպէտք է շփոթել զանազան կեղծիքների  
կամ կիսատ-պատահական հոսկացողութիւնների հետ:  
Իսկական սօցիալիզմը այն միակ վար-  
դապետութիւնն է, որ ցոյց է տալիս կատա-  
րեալ հաւասարութեան ու ազատութեան ու-  
ղին և նրանց իրագործման միջոցները:  
Այն բոլոր մարդիկ, որ կողմնակից են  
այդ վարդապետութեանը, կոչւում են սօցիա-  
լիստներ:

Իսկ քաղաքական այն կուսակցութիւն-  
ները, որոնք իրանց ծրագրում նպատակ են  
դրել սօցիալիզմի իրականացումը և գործում



են այդ ուղղութեամբ, կոչուում են սօցիալիս-  
տական կուսակցութիւններ:

Ե. Թ.

## ԱՇԽԱՏԱՆԻՈՐԻ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Աշխատաւոր դասակարգը՝ պրօլետարիատը  
և աշխատաւոր գիւղացիութիւնը պէտք է հե-  
տեւեն որոշ ազգային քաղաքականութեան:

Այդ քաղաքականութեան վերջնական նը-  
պատակն է լինելու աշխատաւորների համաշ-  
խարհային եղբայրութիւն հաստատելը, իսկ  
հերկայի վերաբերմամբ՝ անկախ ազգութիւն-  
ների միութիւն առաջացնելը:

Դրա հետ միասին պրօլետարները և գիւ-  
ղացիները պէտք է կռիւ մղեն իշխող դասա-  
կարգերի՝ կալւածատէրերի և բուրժուազիայի  
ազգասիրական քաղաքականութեան դէմ, ո-  
րովհետեւ այդ գրգռիչ քաղաքականութիւնը  
միայն նպաստում է ազգայնական անջատման,  
բացառիկ դրութեան և թթու ազգասիրութեան  
զարգացման:

Պրօլետարի և գիւղացու իսկական ազգա-  
սիրութիւնը կայանում է նրանում, որ ցան-  
կանայ տեսնել իր հայրենիքը, իր ազգը կուլ-  
տուրական վիճակի մէջ: Այդ պատճառով ճշնշ-  
ւած ազգութիւնների պրօլետարիատն ու աշ-  
խատաւոր գիւղացիութիւնը ամենից առաջ  
պէտք է ձգտեն ազգային ազատութեան, իսկ  
իշխող ազգութեան պրօլետարիատն ու աշխա-



տաւոր գիւղացիութիւնը պէտք է նպաստեն նրան այդ գործում:

Աւտոնոմիան և ֆեդերացիան այդ նպատակի իրագործման միջոցներն են: Նրանք միևնոյն ժամանակ կարող են ստեղծել ամենանպաստաւոր պայմաններ, որպէսզի աշխատաւոր ժողովուրդը յանուն սօցիալիզմի դասակարգային կռիւ մղէ իր ազգութեան մէջ և ոյժ տայ աշխատաւոր դասակարգի միջազգային կազմակերպութեանը, որպէսզի ընդմիջաթաղւին կապիտալիստական կարգերը:

**Գ. ՆՕԳՕՏՐԺԱԿԻՅ \***)

**Ա. Ի Տ Օ Ն Ո Մ Ի Ս.**

Ինչպէս յայտնի է, ժամանակակից պետութիւնները կազմւել են պատերազմական գրաւումների միջոցով: Այդ պատճառով էլ նրանք բաղկացած են մի ամբողջ շարք նահանգներից, որոնք նման չեն միմեանց:

Այդ նահանգներից իւրաքանչիւրը մեծ մասամբ ներկայացնում է մի ամբողջութիւն թէ ազգայնական և թէ տնտեսական տեսա-

\*) Հեղինակը սօցիալիստ յեղափոխականների կուսակից է եւ իր աւելասուրբեամբ՝ «Националь-ный вопросъ, автономія и федерация» պարզում է այդ կուսակցութեան վերաբերմունքը դէպի շօշափած հարցերը:



կէտից: Այսպէս օրինակ Ռուսաստանը բաղկացած է Ֆինլանդիայից, Լեհաստանից, Ռւկրայնայից, Կովկասից, Մերձբալտեան երկրից, Լիտվայից, Սիբիրից և Վելիկոռուսիայից:

Առանձին վերցրած Վելիկոռուսիան բաղկացած է մի քանի մասերից, որոնք միմեանց նման չեն աշխարհագրական, կլիմայական, ժողովրդական-տնտեսական պայմանների տեսակէտից: Կենտրոնական Ռուսաստանը, Վօլգայի շրջակայքը, Ուրալեան երկիրը, հիւսիսային Ռուսաստանը շատ առանձնայատկութիւններ ունին: Այդ պատճառով ներքին կառավարութեան նպատակները իրանց աշողութեան համար պահանջում են, որ կառավարող իշխանութիւնը մօտ լինի կառավարող երկրին: Չէ կարելի մի կենտրոնից, օրինակ Պետերբուրգից, աշողութեամբ կառավարել մի այնպիսի լայնարձակ երկիր, որպիսին է նոյն իսկ միայն Վելիկոռուսիան: Անհրաժեշտ է ամենալայն ապակենտրոնացում նրա կառավարութեան գործում, որ կարող է իրականանալ միայն տեղական ամենալայն ինքնավարութեան զարգացմամբ: Այդ պատճառով էլ Աւստրոմիաստելով յաճախ հասկանում են ոչ թէ ազգային ինքնավարութիւն, այլ նահանգական:

Այդպիսով աւստրոմիան կարող է լինել ազգային և սահմանային կամ նահանգական: Ազգային աւստրոմիա կոչւում է այն, երբ մի որևէ երկրի այս կամ այն ազգութիւնը լիակատար իրաւունք ունի ներքին ինքնորոշման և ինքնավարութեան: Իսկ նահանգական աւ-



տօնոմխայի զէպրում նոյն իրաւունքը վայելում  
են որոշ տերրիտօրիայով սահմանափակւած  
բոլոր ազգութիւնները միասին: Եթէ այդ  
սահմանների մէջ պարփակւած նահանգում  
ապրում է միայն մի ազգութիւն, այդ զէպ-  
րում ազգային աւտօնոմիան է միեւնոյն ժա-  
մանակ և նահանգական աւտօնոմիա և ընդ-  
հակառակը:

Իսկ եթէ մի որևէ նահանգում ազգաբը  
նակութեան մեծամասնութիւնը պատկանում  
է մի ազգութեան, իսկ փոքրամասնութիւնը  
մի ուրիշ ազգութեան, այդ զէպրում տիրա-  
պետող ազգութեանը նահանգական-ազգային  
աւտօնոմիա սալով չէ լուծւում փոքրամաս-  
նութեան վերաբերեալ հարցը: Օրինակ այդ-  
պէս է գործերի զրութիւնը Լեհաստանում,  
որտեղ ազգաբնակչութեան ճնշող մեծամաս-  
նութիւնը լեհացիներն են, իսկ փոքրամաս-  
նութիւնը՝ հրէաները: Այստեղ հարց է առաջ  
գալիս փոքրամասնութեան իրաւունքները ա-  
պահովելու մասին: Իսկ այդ՝ ներկայ պայման-  
ներում կարելի է բաւարար ձևով լուծել,  
մոյնելով կուլտուրական կամ կուլտուրական-  
ազգային ինքնորոշման սկզբունքը, բայց ոչ  
սահմանային-նահանգական աւտօնոմիա:

Կուլտուրական ինքնորոշման հասկացո-  
ղութիւնը ենթադրում է յարաբերական<sup>1)</sup> մաս-  
նակցութիւն խոտը ազգաբնակչութիւն ունե-

1) Այսինքն իւրաքանչիւր ազգութիւնից հա-  
մապատասխան բաժնով մտղկանց մասնակցութիւն:



ցող նահանգի կառավարական բոլոր դործերում: Այդ ազգութիւնների կուլտուրական պէտքերի համար ծախսերը կատարում են նահանգական ընդհանուր միջոցներից նոյնպէս իւրաքանչիւր ազգութեան սնդամների յարաբերական թւի համեմատ: Եւ փոքրամասնութեան բաժինը ծախսում է հէնց այդ փոքրամասնութեան ցանկութեան համեմատ:

Միայն այդ դէպքում փոքրամասնութիւնը կկարողանայ ապահովել բաւարար քանակութեամբ կուլտուրական-կրթական հիմնարկութիւններ: Եթէ մի որ և է ազգութիւն ապրում է մի քանի նահանգներում, կազմելով դրանցից իւրաքանչիւրում փոքրամասնութիւն, այդ դէպքում կարելի է նրան տալ ինքնավար ազգային միութեան իրաւունք, եթէ նա կամենայ: Այդ միութեան ազդեցութիւնը կարող է տարածւել այն բոլոր նահանգների վրա, որտեղ այդ ազգութիւնը փոքրամասնութիւն է կազմում: Այսպէս ուրեմն սահմանային կամ նահանգական աւտոնոմիան չպէտք է շփոթել ազգային աւտոնոմիայի հետ, իսկ ազգային աւտոնոմիա ասելիս պէտք է գանազանել ազգային-նահանգական աւտոնոմիան ազգային կուլտուրական աւտոնոմիայից:

Պ. ՆՕՎՕՏՐԺԱԿԻՅ

Ի՞ՆՉ է ՖԵՂԵՐԱՑԻԱՆ

Պետական իրաւունքի գիտութեան մէջ  
Ֆեղերացիա ասելով հասկացում է անկախ



**Գերասիմ Անտոնով**

(տես էջ. 237)

«Հոյս»

1907 թ.





պետութիւնների կամ աւտօնոմ նահանգների  
այնպիսի միութիւն, որի հիմքն է պայմա-  
նադրութիւնը:

Ֆեդերացիան աւտօնոմիայի բնական և  
ուղղակի լրացումն է: Ինչպէս որ անհատը չէ  
կարող մէկուսացած կեանք վարել, այլ ստիպ-  
ւած է զանազան համաձայնութիւններ կայա-  
ցնել շրջապատողների հետ, ճիշտ այդպէս էլ  
ամբողջ ազգութիւններ արտաքին հանգամանք-  
ներից դրդւած պէտք է համաձայնութիւն կա-  
յացնեն միմեանց հետ: Այդպիսի համաձայնու-  
թիւնների և ֆեդերատիւ հիմունքներով հաս-  
տատուող յարաբերութիւնների հիմքը պայմա-  
նաւորւող կողմերի փոխադարձ օգտի գիտակ-  
ցութիւնն է:

Ֆեդերացիա ասելով ենթադրում է ա-  
զատ պայմանադրութիւն, որովհետև ինչպէս  
ախրոջ ու ստրուկի, նոյնպէս և իշխող ու  
ճնշւած ազգութիւնների միջև չէ կարող լինել  
պայմանադրական յարաբերութիւններ: Այդ  
դէպքում ընդհարում են ոչ հաւասարազօր  
կողմերը և կոպիտ բռնութիւնը հաստատում  
է նրանց միջև իշխողի և ենթարկւողի յարա-  
բերութիւններ: Իսկ ֆեդերացիայի մասին  
խօսք կարող է լինել միայն այնտեղ, որտեղ  
կան հաւասար իրաւատէր և միմեանցից ան-  
կախ ազգութիւններ, որոնք այդ պատճառով  
ընդունակ են պայմանադրութիւն կայացնելու:

Ազգային հարցը միայն այն դէպքում կա-  
րող է իր լուծումն ստանալ յօգուտ պրօլետա-  
րիատի և աշխատաւոր գիւղացիութեան, եթէ



այդ լուծումով ստեղծւած պայմանները կլի-  
նեն նպաստաւոր ժողովրդական կենցաղա-  
կրթութեան համար և աննպաստ՝ ազգայնա-  
կան բացառիկ վիճակ պահպանելու և դարգա-  
ցնելու համար: Իսկ այդ բոլորը իրականա-  
ցնել կարելի է միայն ընդունելով բոլոր ազ-  
գութիւնների հաւասար իրաւունքները, և ազ-  
գային աւտօնոմիան, միևնոյն ժամանակ միա-  
ցնելով բոլոր աւտօնոմ և հաւասար իրաւա-  
տէր ազգութիւններին իրրեւ մի եղբայրական  
դաշնակցութիւն:

Եթէ բոլոր ազգութիւնները իրանց շա-  
հերը շօշափող հարցերը համաձայնութեամբ  
լուծեն, եթէ նրանք ընդհանուր սյժերով գոր-  
ծադրեն իրանց համար միակերպ օգտակար  
միջոցները և ոչ մի բան ուրիշի վզին ուժով  
չփաթաթեն, այդ դէպքում արմատախիլ կլի-  
նեն այն բոլոր առիթները, որոնք առաջա-  
ցնում են ազգային ընդհարումներ և կոչնչա-  
նայ այն հողը, որ դարգացնում է ազգային  
թշնամութիւնը:

Սկսելով ժամանակաւոր և մասնակի հա-  
րեանական համաձայնութիւններէց, երկրա-  
գրնդիս ազգութիւնները կամաց կամաց կան-  
ցնեն աշխարհիս բոլոր ժողովուրդների մշտա-  
կան եղբայրական միութեան:

Եւ երկրագնդիս ազգութիւնների այդ եղ-  
բայրական դաշնակցութիւնը սօցիալիզմի ի-  
րականացումից յետոյ կդառնայ աշխատաւոր-  
ների համաշխարհային եղբայրութիւն, որով-  
հետև սօցիալիստական հասարակութեան մէջ



բայրը կը լինեն ընդհանուրի օգտին աշխատողներ:

Բայց մենք կապիտալիստական կարգերի իշխանութեան տակ ապրողներս չգիտենք, թէ իսկապէս երբ է դալու այն օրը, երբ աշխատանքը վերջնականապէս կյաղթահարէ կապիտալին, ուստի և անկարող ենք հասարակ կերպով սպասել, որ զան սօցիալիստական կարգերը աշխատաւորների համաշխարհային եղբայրութեան հետ միասին:

Ժամանակակից պրօլետարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը պէտք է հետեւեն որոշ ազգային քաղաքականութեան, որը համապատասխան է աշխատաւորների ազազայ համաշխարհային եղբայրութեանը: Իսկ այդպիսի քաղաքականութեան բովանդակութիւնը պէտք է լինի այն, որ պետութեան ներքին ու արտաքին կեանքը վերակազմի այնպիսի հիմունքներով, որոնք հէնց այժմ—կապիտալիզմի իշխանութեան ժամանակ էլ տանում են դէպի եղբայրական գաշնակցութիւն ազգութիւնների միջև:

Եւ ինչպէս որ հողերի համայնացումը մի քայլ է դէպի սօցիալիզմը, ճիշտ այդպէս էլ ազգային աւտօնոմիան և ազատ ազգութիւնների Ֆեդերացիան ներկայումս մի խոշոր քայլ է շուտով սօցիալիստական հասարակութիւն առաջ բերելու համար:

Ներքին կեանքում ազատ և միմեանցիկ անկախ ազգութիւնների եղբայրական գաշնակցութիւնը կը նախապատրաստէ հող աշ-



խատաւորների համաշխարհային եղբայրութեան համար, ամենանւագ շափերի հասցնելով ազգային թշնամութիւնը, անջատումն ու կռիւր:

Այդ դաշնակցութիւնը կամ ֆեդերացիան թէ պրօլետարիատին և թէ աշխատաւոր գիւղացիութեանը հնարաւորութիւն կտայ կենդրոնացնելու իր բոլոր ոյժերը, որպէս զի առաջ տարւի կազմակերպւած կռիւր լանուն սօցիալիզմի:

Ռ. ՆՇՈՒՅՈՒՐԺԱԿԻՅ

## ԱԶԳՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ

Ներկայումս ազգութեան գաղափարը, որի աճումն ընթանում է ներկայ պետութեան զարգացման հետ միասին, որ և է միբաժ կամ միցնորք չէ հանդիսանում,—ինչպէս փորձում է հաստատել՝ «չափազանց միակողմանի-մատերիալիստական» Մարքսիզմի հետևորդ մի քըննադատ. այլ նա, այդ գաղափարը, հէնց ժողովուրդների պահանջների մէջ խոր արմատներ ունի ձգած: Եւ նրա զարգացման գործօններից երեքը մենք համարում ենք ուշագրաւ:

Առաջինը. բուրժուազիայի-առանձնապէս ապրանք արտադրողների—զգացած կարիքն է որից դրդւած նրանք աշխատում են ներքին շուկայ ձեռք բերել, և դրո՞ հետ միասին, արտաքին շուկան լայնացնել. ամենից լաւը ազգային պետութիւնն է, որ կարող է բաւարարութիւն տալ այդ կարիքին: Այնտեղ, սա-



կայն, որտեղ մէկ պետութեան սահմաններում  
զատ-զատ ազգութիւններ են կողք-կողքի ապ-  
րում, այդտեղ լեզուի տարբերութիւնները մի  
տեսակ փոխարինում են մաքսային սահման-  
ներին, քանի որ, ինքնըստինքեան, լեզուն  
հանդիսանում է յարաբերութիւնների ամենա-  
կարևոր միջոց: Լեզուի շրջանի սահմանափա-  
կումն ու լայնացումը և ուրիշ լեզուով խօսող  
մարդկանց այդ շրջանից դուրս մղումը—սը-  
րանք նոյնքան ազդու միջոցներ կարող են լի-  
նել ներքին շուկայ տիրապետելու տեսակէտից  
որքան և ազգային պետութեան անկախու-  
թիւնն ու մեծութիւնն այլ տեղերում:

Ազգային ներկայ գաղափարի երկրորդ գոր-  
ծօնն է՝ ձգտում դէպի քաղաքական ազատու-  
թիւն, դէպի ռամկավարութիւն: Մենք չենք  
բացատրի թէ ինչ տնտեսական հիմունքներ  
ունի այդ ձգտումը.—որ այնքան զօրեղ կեր-  
պով արտայտել է մեր դարի ամբողջ ըն-  
թացքում, ներկայիս բոլոր կուլտուրական պե-  
տութիւնների մէջ: Դա ձգտումն է՝ դէպի ժո-  
ղովրդական լիակատար գերիշխանութիւնը,  
որպէս զի ժողովուրդն ինքը, իր ազատ կամ-  
քով, տնօրինէ իր բախտը, դիմադրելով ար-  
տաքին ամեն տեսակ ճնշման, որտեղից որ  
գալու լինի այդ վերջինը—մի անհատից, մի  
դատակարգից, թէ մի օտար ազգից:

Երրորդ գործօնը, մեր կարծիքով, այն ազ-  
գային գրականութիւնն է, որով կրթւում են  
ժողովրդական մասսաները, և որը իր էու-  
թեամբ XIX դարի բնորոշ յատկութիւնն է



կազմում: XIX դարում, դպրոցական կրթութիւնը մասսաների համար դառնում է տնտեսական անհրաժեշտութիւն, իսկ տնտեսական և քաղաքական աճող կեանքն այդ մասսաների մէջ պահանջ է առաջացնում՝ մօտիկ յարաբերութիւնների մէջ մտնելու հետու երկրների հետ: Գրքերի հետ միասին սկսում են լոյս տեսնել և՛ լրագրներ, և այդ գրքերն ու լրագրները ժողովրդի աւելի ու աւելի լայն խաւերն են անցնում: Այս հանգամանքի շնորհիւ և փոքր ազգերի շրջանում ստեղծւում է սեփական գրականութիւն, — նախ լրագրութիւնը, որը թէև որակի տեսակէտից կասկածելի է լինում, բայց և այնպէս մաքրում է հողը ազգային ինքնուրոյն գրականութեան բարձր ձևերի համար. լրագրութեան միջոցով է, որ մասսաներն ըմբռնում են իրենց լեզւի ընդհանրութեան և ազգային առանձնաբանութիւնների նշանակութիւնը:

Ազգայնութեան ներկայ շարժման բոլոր այս հիմունքները խորն արմատացած են ժամանակակից հասարակութեան զարգացման ձգտումների մէջ:

Այդ հիմունքները սլատմական երևոյթներ են և նրանց դէմ խոչընդոտներ յարուցանել կը նշանակէ դէմ գնալ և՛ սօցիալական կեանքի զարգացման գործին:

Կարլ Կաուցկիյ:



## Կ Ա Ն Ա Ն Տ Հ Ա Ր Յ Ը

(Ա. Ռեբել \*)

Մենք ապրում ենք սօցիալական մի մեծ յեղափոխութեան ժամանակում, որ օրէցօր նորանոր յառաջադիմութիւններ է անում: Հասարակութեան բոլոր խաւերում նկատում է մտքերի հետզհետէ սասակացող շարժումն և անհանգստութիւն, որ ձգտում է հիմնական կերպարանափոխութիւններ:

Ամենքն էլ զգում են, որ իրանց ոտի տակ գտնւած հողը երբրուն է: Մի շարք հարցեր են երևան եկել, որոնք մարդկային նորանոր շրջանների զբաղեցնում են և որոնց լուծման համար դրական և բացասական մտքեր են յայտնում: Այդ կարևոր հարցերից մէկը, որ հետզհետէ աւելի և աւելի առաջնակարգ նշանակութիւն է ստանում, այսպէս կոչւած կալանացի հարցն է,

Այդ հարցի էութիւնը կայանում է նրանում, թէ կի՞նը մեր սօցիալական օրգանիզմի մէջ ի՞նչպիսի տեղ պէտք է գրաւի և թէ իր ոյժերն ու ընդունակութիւնները ինչպէս կարող է ամեն կերպ զարգացնել, որպէսզի նամարդկային հասարակութեան կատարեալ, հաւասար իրաւունքով և օգտակար կերպով դորձող անդամ դառնայ:

Մեր հայեցակէտով այդ հարցը նման է

\*) Քաղաքը հեղինակի «Die Frau» աշխատութիւնից:



այն հարցին, թէ առհասարակ մարդկային հասարակութիւնը ինչպիսի կերպարանք և կազմակերպութիւն պէտք է ստանայ, որպէս զի բազմատեսակ ճնշման, շահագործման, կարիքի և թշուառութեան փոխարէն անհատների և հասարակութեան Ֆիզիքական և սոցիալական առողջութիւնը տիրող հանդիսանայ: Ուրեմն իսկապէս կանանց հարցը մեզ համար այն ընդհանուր սոցիալական հարցի միայն մի կողմն է, որ ներկայումս զբաղեցնում է ամենքի միտքը և հէնց դրա համար էլ այդ հարցը իր վերջնական լուծումը կստանայ միմիայն հասարակական հակասութիւնների և դրանցից առաջացող շարիքի վերացմամբ:

Սակայն անհրաժեշտ է, այսպէս կոչւած կանանց հարցով մանրամասնօրէն զբաղելու: Մի կողմից այդ հարցը շոշափում է, թէ ինչպէս էր կնոջ դրութիւնը անցեալում, է ներկայումս և պիտի լինի ապագայում, Եւրոպայում գոնէ հասարակութեան մեծամասնութիւնը, որովհետև իզական սեռը այնտեղի ազգաբնակչութեան ամենամեծ մասն է կազմում: Բացի դրանից հազարաւոր տարիների ընթացքում կնոջ արած դարգացման մասին եղած գաղափարը իրականութեանը այնքան քիչ է համապատասխանում, որ դրա մասին լուսաբանութիւնը ներկան և ապագան հասկանալու համար մի տեսակ պահանջ է: Չէ որ այդ անծանօթութեան և անհասկացողութեան վրա է հիմնւած այն նախապաշարմունքների մի զգալի մասը, որով զանազան տղամարդիկ,



նոյն իսկ կանանց շրջանից նայում են հետըզ-  
հետէ զօրեղացող շարժման վրա: Ծառերը  
նոյն իսկ հաստատում են, որ կանանց հարցը  
գոյութիւն չունի, որովհետեւ այն դրութիւնը,  
որ կինը առաջ ունէր, այժմս էլ ունի և ազա-  
գայումն էլ կունենայ, իր «քնական կոչման»  
չնորհիւ, որ նրան իբրև կին և մայր է որո-  
շում և սահմանափակում է նրան տնտեսու-  
թեան շրջանի համար: Հետևապէս ինչ որ  
տան չորս պատերի այն կողմն է, կամ նրա  
տնային պարտականութիւնները հետ սերտ  
կապակցութիւն չունի, կնոջը չէ վերաբերում:

Իրա համար էլ ինչպէս կանանց հարցի,  
այնպէս էլ ընդհանուր սոցիալական հարցի  
համար, ուր աշխատաւոր դասակարգի դրու-  
թիւնը հասարակութեան մէջ գլխաւոր դերն  
է խաղում, տարբեր կուսակցութիւններ գոյու-  
թիւն ունին: Այն մարդիկ, որոնք ամեն ինչ  
ցանկանում են որ հին ձևով լինի, իրանց  
պատասխանը իսկոյն պատրաստ ունեն և կար-  
ծում են գործը դրանով վերջացաւ, երբ կնոջ  
համար մատնացոյց արին նրա «քնական կոչ-  
ման» վրա: Այդպիսի մարդիկ չեն տեսնում,  
որ ներկայումս միլիոնաւոր կանայք բոլորու-  
վին յարմարութիւն չունեն իրանց վերագրած  
«քնական կոչումն», իբրև տնտեսուհիներ, գա-  
ւակնիւրի ծնողներ և դաստիարակչուհիներ, կա-  
տարելու: Որ կինը իրաւունք ունի մեր ժա-  
մանակի կուրտուրական բարիքներին կատա-  
րելագէս մասնակցելու և նրանից օգուելու  
իր դրութիւնը թեթեւացնելու և լաւացնելու



իր մտաւոր և ֆիզիքական ընդունակութիւնները զարգացնելու և ազամարդկանց նման յօգուտ իրանց կարգկադրելու, այդ բանը վերոյիշեալ մարդիկ չեն ուզում իմանալ:

Երբ ուզում ես նրանց ասել, որ կինն էլ տնտեսապէս պէտք է անկախ լինի, ֆիզիքապէս և մտաւորապէս անկախ լինելու համար, որպէս զի նա այլ ևս միւս սեռի «բարեհաճութիւնից» և «ողորմութիւնից» կախւած չլինի, այն ժամանակ այդ մարդկանց համբերութիւնը վերջանում է, բարկութիւնը գրուգրուում և սկսում է սաստիկ գանգատների մի հոտանք, իբր թէ «մեր ժամանակը դժուար է», որ ունի «ցնորամիտ էմանսիպացիական ձգտումներ»:

Դրանք արական և իգական սեռի ֆիլիստորներն են, որոնք չեն ուզում դուրս գալ իրանց նախապաշարմունքների նեղ շրջանից: Դա անհեթեթ մարդկանց ցեղն է, որ ամեն տեղ կայ, ուր տիրապետում է խաւարի և սարսափից աղաղակում է, երբ լոյսի մի ճառագայթ իրանց համար հաճելի խաւարի մէջ է թափանցում:

Շարժման հակառակորդների մի ուրիշ մասը ի հարկէ չէ կարող իր աչքերը փակել այդ բարձր ձայնով աղաղակող փաստերի առաջ, նա համաձայն է, որ հազիւ երբ և իցէ որևէ դարում կանանց մեծ մասը ընդհանուր կուլտուրական զարգացման դրութեան համեմատութեամբ, այնպիսի անբաւարար դրութեան մէջ գտնւած լինի, ինչպէս ներկայումս



և դրա համար էլ անհրաժեշտ է սևսումնասիրել, թէ ինչպէս կարելի է նրանց դրութիւնը բարւոքել, երբ նրանք յոյսը իրանց վրա են դրել: Ի դէպ. հակառակորդներն այդ մասի կարծիքով այն կանանց համար, որոնք արդէն մտել են ամուսնութեան նաւահանգիստը սոցիալական հարցը լուծւած է:

Դրա համապատասխան էլ այդ մասը պահանջում է, որ գոնէ շամուսնացած կնոջ համար բացւի աշխատանքի բոլոր ասպարէզները, որոնց համար նրանց ոյժերը և ընդունակութիւնները յարմարոււմ են, որպէս զի նա մարդու հետ կարողանայ մրցել: Մի փոքրիկ մասն էլ աւելի առաջ է գնում և պահանջում, որ մրցութիւնը լինի ոչ թէ հասարակ դրադմունքների և կոչումների ասպարէզում, այլ տարածւի բարձր կոչումների՝ այն է գեղարւեստի և գիտութեան ասպարիզում:

Այս կարճ կերպով բնորոշած ձգտումների ամենագարմանաւի բանն այն է, որ դրանք դուրս չեն գալիս ժամանակակից հասարակութեան շրջանակից: Բայց առհասարակ չեն տալիս այս հարցը, թէ երբ այս նպատակները իրագործւեցին, արդեօք, դրանով կանանց դրութեան համար ընդհանրապէս որևէ էական և գործնական հետեանքի կը հասնեն: Քաղաքացիական, այսինքն, կապիտալիստական հասարակութեան կաղմակերպութեան հողի վրա կանգնած, կարծում են, որ տղամարդու և կընոջ քաղաքացիական կատարեալ հաւասարութիւնը հարցի լուծումն է:



Այն ինչ եթէ ընդունենք նոյն իսկ անկա-  
րելին, թէ կանանց քաղաքացիական շարժման  
այդ ներկայացուցիչները կարողացան կանանց,  
տղամարդկանց հետ ունենալիք համահաւասար  
ութեան վերաբերեալ իրանց պահանջները  
իրականացնել, այնուամենայնիւ չի կարելի  
լինէր, որ արդի ամուսնութիւնը անթիւ կա-  
նանց բաժին է դարձնում, պոռնիկութիւնը և  
կամ այն նութեալան կախեալ վիճակը, որի  
մէջ է գտնուում ամուսնացած կանանց մի ըղ-  
զալի մեծամասնութիւնը:

Կանանց մեծ մասի համար պիտի նշանա-  
կութիւն շունենայ նոյն իսկ, եթէ հասարա-  
կութեան բարեկիրթ խաւերից՝ իրանց սեռա-  
կիցներից մի քանի հազար կամ տասնեակ  
հազար կանայք կարողացան բարձրագոյն կըր-  
թութիւն ստանալ, բժշկական պրակտիքա ու-  
նենալ և կամ որեէ գիտնական կամ պետական  
պաշտօն ստանձնել, որովհետև սրանցով նրանց  
սեռի ընդհանուր վիճակը ոչնչով չպէտք է  
փոխւի: Կանացի սեռը մասսայապէս տառա-  
պում է կրկնակի կերպով, Նախ նա տառա-  
պում է տղամարդկանց կողմից իր ունեցած  
հասարակական կախման պատճառով, որ կա-  
րող է օրէնքների առաջ ձեական համահաւա-  
սարութեան և իրաւունքների շնորհիւ մեղմա-  
նալ, բայց երբէք վերացել և ապա իրանց  
տնտեսական կախեալ վիճակով, որի մէջ են  
գտնուում բոլոր կանայք ընդհանրապէս և մաս-  
նաւորապէս պրօլետարական կանայք՝ նման



պրօլետարական տղամարդկանց:

Մեծամասնութիւնը ամենայն թափով շահագոգուած է աւելին անելու, այն է՝ վերակազմել ներկայ պետական և հասարակական կարգերը իրանց հիմքից 'ի վեր, որով արդէն պիտի վերացնեն, թէ վարձու ստրկութիւնը, որից ամենից շատ կանանց պրօլետարիատն է կեղեքւում և թէ սեռական ստրկութիւնը:

*Տե՛ս: Ի՞նչ է այդ ստրկութիւնը և անհնաւիճ*  
*տական և հասարակական կարգերը: Ի՞նչ է և ան-*  
*կրականացնելը՝ միակ նպատակը է, որին*  
*ինչպէս կանանց քաղաքացիական շարժման*  
*ղեկավարներն են ձգտում, այլ զրանից շատ*  
*հեռուն—այն է՝ վերացնել այն բոլոր կապանք-*  
*ները, որոնք մի մարդու ուրիշ մարդուց և մի*  
*սեռ միւսից կախեալ վիճակի մէջ են գնում:*  
*Կանանց խնդրի բոլոր շահ լուծումը, ասել է,*  
*բոլորովին զրանում է սօցիալական խնդրի*  
*Գիւտտի և նորա, որոնք կանանց*  
*Բատոլջական լուծման են ձգտում ան-*  
*Ս. Իօրէն ձեռք ձեռքի աւած պիտի գը-*  
*Մ հետ, որոնք իրանց պրօշակի վրա*  
*Օ սօցիալական խնդրի լուծումը, որպէս*  
*հարդկութեան ընդհանուր քաղաքա-*  
*ան խնդիր: Իրանք են սօցիալիստները:*  
*Մ մարդկութեան համար ոչ մի ազատու-*  
*նուանց սօցիալական անկախութեան եւ*  
*հաւասարութեան:*

Գերմ. թարգ. Լ. Բարայեան



Ջ Ի Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Ի՞նչպէս իմանալ մեկի տարիքը:

1	3	5	7	9	11	13	15	17	19
21	23	25	27	29	31	33	35	37	39
41	43	45	47	49	51	53	55	57	59
2	3	6	7	10	11	14	15	18	19
22	23	26	27	30	31	34	35	38	39
42	43	46	47	50	51	54	55	58	59
4	5	6	7	12	13	14	15	20	21
22	23	28	29	30	31	36	37	38	39
44	45	46	47	52	53	54	55	60	61
8	9	10	11	12	13	14	15	24	25
26	27	28	29	30	31	40	41	42	43
44	45	46	47	56	57	58	59	60	61
16	17	18	19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	48	49	50	51
52	53	54	55	56	57	58	59	60	61
32	33	34	35	36	37	38	39	40	41
42	43	44	45	46	47	48	49	50	51
52	53	54	55	56	57	58	59	60	61

Եթէ ուզում էք իմանալ մէկի տարիքը, խնդրեցե՛ք նրանից, որ մատով ցոյց առայ ՚հետեւեալ 6 աղբաւանդներից այն աղբաւանդները, որոնց մէջ կայ նրա տարիքը թւանշանը: Յետոյ գումարեցե՛ք մատնադրոց աղբաւանդների սկզբի թւանշանները — կտան ՚նրանմէջ Բիւր: Այդ ձևով կարելի է իմանալ տարիքը, եթէ նա 60 տարեկէ մեծ չէ: և մատնան

Օր Տեառնընդառաջի ԳԶ.	Առաջ.	
պէջ.	.	փերս 14
Բուն բարեկենդան	.	Մարտի 4
Ս. Լուս. մտանելոյ ի վեր.		Մարտի 24
Օր Աւետման ՇԵ.	.	Ապրիլ 7
Զատիկ	.	» 22
Երեւման խաչ	.	Մայիս 20
Համբարձում	.	» 31
Հոգեգալուստ	.	Յունիս 10
Բարեկ. Լուսաւորչի պէջ.		Յուլիս 1
Բարեկենդան վարդավառի		» 22
Վարդավառ	.	» 29
Մեջոց ուտիքը պատմվ երկու Շաբաթ		
Բարեկ. Ս. Աստուածածնի Օգոստ.		5
Վերափախումն Ս. Աստ.		» 12
Մեջոց ուտիքը պատմվ Հինգ Շաբաթ		
Բարեկենդան Ս. Խաչի Սեպտեմբ.		9
Խաչվերաց	.	» 16
Բարեկ. վարդաբայ Ս. Խաչի		» 23
վարդաբայ Ս. Խաչ	.	» 30
Մեջոց ուտիք շաբաթը		հօթն
Գիււ խաչ	.	Հոկտեմբերի 28
Բարեկ. Յիսնակաց պաճոց Նոյեմբ.		18
Ս. Յակովբայ բարեկ. Գեղեմեմբերի		9
Մեջոց ուտիք օրեր	.	» 15
Օր բարեկ. Ծննդ. պէջ. ՇԵ. օր Գեկ.		29

Կայսերական տներ.

23 Ապրիլի — Անուանակոչութիւն Դ.  
 Կ. Մ. Կայսրուհի Աւետմանդրա Յեօդորովնայի.